

ISSN 1829-1155

Համակերպություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇտոնական  
ԳՈՎԱՐՈՒՄ

## ՍԱՐՋԱԿԱՂՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Խօճագրություն  
խորհուրդ՝

Գուղքի Նախարարություն  
Նախ. Արթուր Վահագին  
Վարչության Նախարար  
Հայաստան  
Առողջության նախարար

Խօճագրության համցելի  
Երևան, Քառորդյան 10  
Հեռ. հեռ. 58-81-71

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**

5(62)  
2011

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## I. ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

\* «ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ  
ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Վ ՊՈՂՈԽԱՆ 6

## II. ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (944-971)

* ՍԴՈ-944. ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՄ ՕՀԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՈՒՄ ՎՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 302-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԱՊԱՍԽԱՆՈՒԹՅՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 20	
* ՍԴՈ-945. ՔԱՂԱՔԱՑԻ ՊԵՐԵԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՈՒՄ ՎՐԱ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 13.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԱՊԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 29	
* ՍԴՈ-946. «ԲՁՆԻ» ՀԱՆՔԱՅԻՆ ԶՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՈՒՄ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐԻՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 92-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԱՊԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 41	
* ՍԴՈ-947.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՓԽՅԱԿ ԵՎ ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԾՐՁԱՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱԾՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՈՒՄ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԱՊԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 47	
* ՍԴՈ-948. 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆՈՒՅՆԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԻՆԱՍՍԱՎՈՐՈՒՄ (APL-2)» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՍՏԱՎՅԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԱՊԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 55	
* ՍԴՈ-949. 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԵԲԻ 10-ԻՆ ՍՊՈԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎԱՆՎԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԻՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՅԱՑՆԵՐԻ ՍԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԱՐՏՈՆՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 6-Ի ՀԱՍՏԱՎՅԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՋԱՆԱԿՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԱՊԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 59	
* ՍԴՈ-950. 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ԶԱՐԳԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՍՏԱՎՅԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԱՊԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 62	
* ՍԴՈ-951. 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆՈՒՅՆԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԶԱՐԳԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ	

ՀԱՍՏԱՏԱԿՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	65
* ՍԴՈ-952. 2010 թՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՀՈՌՈՇՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ «ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՐՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԴՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ԳԿՍԾ)» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՍՏԱՏԱԿՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	68
* ՍԴՈ-953.2011 թՎԱԿԱՆԻ ՀՈՎՆՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԷԼ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ» N 7963-ԱՄ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՍՏԱՏԱԿՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	75
* ՍԴՈ-954. ՔՐԴԱՔԱՑԻ ՀՈՎԱՖ ԳԱԼԱՏՅԱՆԻ ԴԿԱՆՈՒՄ ՀԻՍՏԱՆ ՎՐԱ «ՄԱՍԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 19-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	81
* ՍԴՈ-955. 2011 թՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ ԲԲՅՈՒՆԵԼՈՒ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻԿԻ Ի ԴԵՍ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՋԻԹՅԱՆ, ՄԻՋԵՎ ՄԻՆՉԵԿ 35 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈՅԻ ՀԱՓՈՎ ԴՐԱՍԱՆՈՐՀԻ ՀԱՍՏԱՏԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	88
* ՍԴՈ-956. 2010 թՎԱԿԱՆԻ ԴԵԿԱՆԵՐԵՐԻ 22-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻԿԻ Ի ԴԵՍ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՋԻԹՅԱՆ, ՄԻՋԵՎ ՄԻՆՉԵԿ 35 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈՅԻ ՀԱՓՈՎ ԴՐԱՍԱՆՈՐՀԻ ՀԱՍՏԱՏԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	92
* ՍԴՈ- 957. 2011 թՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՋԻԹՅԱՆ ՄԻՋԵՎ 65 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈՅԻ ՀԱՓՈՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՍՏԱՏԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	95
* ՍԴՈ- 958. 2011 թՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-ԻՆ ԵՎ 2011 թՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-ԻՆ ՆԱՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՆՔՎԱԾ՝ «2009 թՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԵՎ 2009 թՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՆԱՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՆՔՎԱԾ՝ «ՖԻՂԱՆԱՏՈՒՄ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՅՈՒՆ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺՄԱՆ ՍԱՄՆԱԿՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀՅՈՒՍԽԱՏԱԼԱՏՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ (ՆԱՏՕ) ՀԵՏ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՀԱՍՏԱՏԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿՐՈՒԶԳԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐԱՆՄԻ ԹՎԱԿԱՅՈՒՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՀԱՍՏԱՏԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՍՏԱՏԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	100
* ՍԴՈ- 959. 2010 թՎԱԿԱՆԻ ՀՈՎՆՎԱՐԻ 18-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՎԵՅՅԱՐԻԱՅԻ ՀԱՍՏԱԿԵՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՒ ՀԱՍԿԱՐԳԻՆ ՕԺՄՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍԱՄԻՆ ՀԱՍՏԱՏԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԴՐԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	104

- \* ՍԴՈ- 960. 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-ԻՆ ՆԴԿՈՄԻԱՅՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻՊՐՈՍԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ  
ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍՈՓԵԼԸ ԿԱՆԵԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
ՀԱՍՏԱՅՆԱԳՐՈՒՄ (Կիշ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄ) ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՆԱՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 107
- \* ՍԴՈ- 961. 2001 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՅԻՆ 31-ԻՆ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ  
ՀԱՆՁՎԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ» ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ԼՐԱՑՆՈՂ «ՀՐԱԶԵՆԻ, ԴՐԱ ՀԻՄՆԱՍՏԵՐԻ  
ԵՎ ԲԱՊԱՏՐԻՉՆԵՐԻ, ԻՆՉՊԵս ՆԱԵՎ ԴՐԱ ՀԱՍՄԱՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՈԱԶՄԱՄԵՐՔԻ  
ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԱՐՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱՄԱՍՈՒԹՅԱՆ ԴԵՄ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՄԵջ (Կիշ ԱՌԱՋՈՒԹՅԱՄ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՆԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 111
- \* ՍԴՈ- 962. 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿԵMBERԵՐԻ 16-ԻՆ ՄԱԴՐԻԴՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍՊԱԼԻԱՅԻ ԹԱՎԱՎՈՐՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԵՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՑՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ  
ՀԱՐԿՈՒՄԸ ԽՈՒՏԱՍՔԵԼՈՒ ՍԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ  
(Կիշ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՆԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՀԱՍՏԱՏԱՆԱՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 116
- \* ՍԴՈ- 963. 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿԵՆՄԲԵՐԻ 27-ԻՆ ՖԱՐՈՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՄԵՍԿՈՒԹՅԱՅԻ ԺԱՄԱԳՈՒԹՅԱՆ ՆՇԱՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՄԱԿՈՒԹՅԱՆ  
ՀԱՍՄԱՐ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԻ ԾՐՁԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՆԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 121
- \* ՍԴՈ- 964. 1984 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԺՆԵՎՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«ԵԵԾ ԵԵԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ՕԴԻ ՄԻՋԱՀԱՍԱՅԻՆ ԱԴՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ  
ՍԱՍԻՆ» 1979 ԹՎԱԿԱՆԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ՝ ԵՎՐՈՊԱԿՈՒՄ ՄԵԾ  
ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ՕԴԻ ԱԴՏՈՏՎԱԾՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԴԻՏԱՆՑԵԼՈՒ  
ԵՎ ԳՆԵԱՀԱՏԵԼՈՒ ՀԱՍԱԳՈՐԾԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ (ԵԴԳԸ) ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՆԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 127
- \* ՍԴՈ- 965. 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԵՎ «ՀԱՍՏԱՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՏԵՍՎԱԿԱՆ ՈԵՍՈՒՐՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԵՎ ՄՐՑԱՑՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՍՏԱՅԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՆԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 130
- \* ՍԴՈ- 966. ՀՀ ՍՄՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՍԱՆ ՎՐԱ՝  
«ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵծ ՊԱՏԵՐԱՎԾՈՒ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ԵՎ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004թ. ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի ԹԻՎ 207-Ն  
ՈՐՈՇՄԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՍՏԱՏԱՆԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 133
- \* ՍԴՈ- 967. «ՇՈՐՋԵՖ ԻՆԹԵՐՆԵՅՅՆ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՍԱՆ ՎՐԱ՝  
«ԾԱՀՈՒԹՎԱԿԱՐԻ ՍԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 57-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ (ՄԻՆՉԵՎ 09.01.2009թ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄ) ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՆԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 145

* ՍԴՈ- 968. 2010 թՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՍՊՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎԱՆՎՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎԱՆՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱԿՐԳԻ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻԶՈՑՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳՎԱԲԱԿԻ ՍԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՍԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 155
* ՍԴՈ- 969. 2010 թՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՍՊՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎԱՆՎՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՀԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԶԵՇՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՍԱՍԻՆ ՀԱՍԱԳՅԱՆՍԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 160
* ՍԴՈ- 970. 2010 թՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՍՊՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՈԱԶՄԱԿԱՆ ՆՀԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄՇԱԿՄԱՆ, ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԾԱՀԱԳՈՐԾՄԱՆ, ՎԵՐԱՇՈՐՈԳՄԱՆ, ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ, ԾԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՐԿԱՐԱԳՈՒՄՆ ԵՎ ՕԳՏԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱԾՈՒՄ «ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎԱՆՎՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱԿՐԵԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՀԱՍԱԳՅԱՆՍԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 163
* ՍԴՈ- 971. 2010 թՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՍՊՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎԱՆՎՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎԱՆՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱԿՐԳԻ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻԶՈՑՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՍԱՍԻՆ ՀԱՍԱԳՅԱՆՍԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 167
<b>III. ՏԵՂԵԿԱՎՈՒԹՅՈՒՆ</b>
* ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ..... 172
* ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ՈՒՄ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԻՆ ..... 173
* ՀՀ ՍԱՀՄԱՆԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 1000-ՐԴ ՈՐՈՇՈՒՄԸ ..... 174

**ՎԱԼԵՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀՀ ՄԴ անդամ

**«ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ  
ՈՐՈՇ ԱՌԱՋԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Ժամանակն է վերցնել Սահմանադրությունը, բացել  
վերընթերցել այն և խորապես ըմբռնել դրա դրույթները:  
ԱՄՆ Նախագահ Է. Չոնսոն, 1866թ.*

Ի՞նչ ենք հասկանում սահմանադրություն ասելով, ո՞րն է «սահմանադրություն» հասկացության բուն իմաստը: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է ճշտել, թե հասկացության ո՞ր համակարգին է վերաբերում այդ հասկացությունը: Ակնհայտ է, օրինակ, որ սահմանադրական իրավունքի տեսությունում դա մի բան է, սահմանադրության տեսությունում (սահմանադրագիտությունում) մի այլ բան, իսկ քաղաքագիտական առումով՝ բոլորովին այլ: Այսպես՝ սահմանադրական իրավունքի տեսությունում սահմանադրությունը հանդես է գալիս իր կոնկրետ իրավանորմերով, որպես կոնկրետ սահմանադրություն, որոնց միջոցով կարգավորվում են լուծվում են տվյալ երկրներին հատուկ հիմնարար իրավահարաբերությունները: Սահմանադրության տեսությունում սահմանադրությունը դրսեւորվում է իր վերացական իմաստով, որպես սահմանադրություն առհասարակ, այսինքն՝ մի այնպիսի ըմբռնում, որը բնորոշ է բոլոր սահմանադրություններին հատուկ հատկանիշների ամբողջությանը՝ անկախ դրանց պատմական-ժամանակային եւ պետական-տարածական առանձնահատկություններից: Ընդ որում, սահմանադրության այսպիսի վերացական ըմբռնումը սահմանադրական իրավունքում՝ սահմանադրափրավական վերլուծություններ կատարելիս հանդես է գալիս միայն որպես ընդհանուր կողմնորոշիչ գործոն:

Այստեղ սահմանադրությունը մեզ հետաքրքրում է հենց սահմանադրության տեսությունում օգտագործվող իր վերացական իմաստով, այ-

սինքն՝ բոլոր սահմանադրություններին բնորոշ առանձնահատկություններով: Այս տեսակետից բվում է, թե կարելի է վերցնել բոլոր գործող, ինչպես նաև նախկին սահմանադրությունները, եւ դրանց համեմատական վերլուծության արդյունքում գտնել այն հիմնական հատկանիշները, որոնք բնորոշ են բոլոր սահմանադրություններին, եւ այդ հիմքով արտածել «սահմանադրություն» հասկացությունը: Չմերժելով այդպիսի հնարավորությունը, այնուամենայնիվ, այս ճանապարհը կարող է լինել ոչ արդյունավետ, քանի առանձին հատկանիշներ կարող են բնորոշ լինել ոչ բոլորին եւ այդ դեպքում կղմվարանանք ճիշտ ընդհանրացումներ կատարել: Ավելին, քանի դեռ զփիտենք, թե ինչ է նշանակում սահմանադրությունը, չենք կարող կատարել անհրաժեշտ հետեւություններ, առավել եւս, որ կարող են լինել նաև այնպիսի սահմանադրություններ, որոնք այդպես են միայն կոչվում, քայլ իրականում դրանք ամենեւին էլ, ըստ Էռլյան, սահմանադրություն չեն: Ուստի, սահմանադրության հասկացության բուն իմաստը պարզելու համար, թերեւս, ճիշտ կիմնի հասկանալ սահմանադրականության գաղափարի առաջացման անհրաժեշտությունը եւ այն նպատակը, որին հասնելու միջոց կարող է դառնալ սահմանադրությունը:

Այս տեսակետից հետաքրքիր է պարզել, թե ինչ նախադրյալներ են առկա եղել սահմանադրության ստեղծման համար, եւ որ գաղափարներն են դարձել սահմանադրության ստեղծման ելակետը: Ինչպես հայտնի է, առաջին սահմանադրությունները ստեղծվել են 18-րդ դարի վերջում (ԱՄՆ՝ 1787թ., Ֆրանսիա՝ 1791թ.), հետեւարար, անհրաժեշտ է ուսումնասիրել XVII-XVIII դարերի գաղափարական գարգացումները:

XVII-XVIII դարերում ձեւավորված պատկերացումները սկզբնավորվել են հիմնականում եվրոպական Վերածննդի հումանիստական գաղափարների ազդեցությամբ: Հումանիզմը մարդուն արժեւորում էր իբրեւ անձնավորություն, ընդունում նրա երջանկության ձգելու, ազատության իրավունքը, իսկ հավասարության, արդարության, մարդկայնության գաղափարները դիտում էր իբրեւ մարդկանց միջեւ հարաբերություններ ձեւավորելու անհրաժեշտ հիմք: Հումանիզմը մարդուն հոչակեց տիեզերքի կենտրոն եւ բնության կատարյալ ստեղծագործություն՝ քարոզելով մարդկանց ազատության եւ երջանկության իդեալները, իսկ մարդու բարօրությունը եւ բարեկեցությունը համարեց սոցիալական ինստիտուտների գործունեության չափանիշ: Եվրոպայում այդ գաղափարների տարածմանը մեծապես նպաստեց նաև կաթոլիկ եկեղեցու գերիշխանության դեմ ծավալված սոցիալ-քաղաքական եւ գաղափարախոսական շարժումը՝ Ռեֆորմացիան, նրա ընդերքում ձեւավորված բողոքականությունը, որը, մի շաբթ կրոնական սկզբունքների հետ մեկտեղ, կարեւորում էր մարդու առ Աստված անհատական վերաբերմունքը, անձնական մեղքը եւ անձնական պատասխանատվությունը, մերժում է եկեղեցու միջնորդական դերը եւ

## ԳԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

առաջադրում անձնական հավատով փրկության հասնելու սկզբունքը: Ու-ֆորմացիայի գաղափարախոսությունը, ուղղված լինելով Հռոմի պապի գերիշխանության դեմ, եկեղեցու հեղինակությունը փոխեց պետության հեղինակությամբ՝ նպաստելով ազգային պետությունների ձեւավորմանը:

Հումանիզմի գաղափարները ժառանգեցին եւ զարգացրեցին 17-18-րդ դարերի եվրոպական մտածողները, որոնք փորձում էին ուացիոնալ (քանական եւ բնական) փիլիսոփայության շրջանակներում գտնել մարդու եւ հասարակության շահերի ներդաշնակեցման հնարավորությունները: Այդ շրջանում ձեւավորվում էին նաև պետության դերի եւ նշանակության նոր պատկերացումներ:

Հանրահայտ է, որ պետությունը մարդկանց համագոյակցության ձեւ է, բայց ոչ թե սովորական, ինչպես ասենք ընտանիքը, կողեկտիվը եւ այլն, այլ հատուկ, որոշակի ձեւով՝ քաղաքականապես կազմակերպված: Ինչի՞ համար է ստեղծվում պետությունը, ի՞նչ ուժեր են ստեղծում պետությունը, ո՞րն է իշխանության աղբյուրը, ի՞նչ հիմնական խնդիրներ այն պետք է լուծի: Ի հակառակություն մինչ այդ եղած պատկերացումների, աստիճանաբար ձեւավորվում է այն տեսակետը, որ պետությունը ստեղծում են մարդիկ, եւ իշխանության աղբյուր կարող է լինել միայն ժողովուրդը, եւ պետություն ստեղծելով մարդիկ ցանկացել են առաջին հերին լուծել մեկ հիմնական խնդիր՝ ապահովել իրենց անվտանգությունը, պաշտպանվել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին վտանգներից: Սակայն այդ խնդրի լուծումը ոչ թե նպատակ է, այլ միայն միջոց: Նպատակն այն է, որ պետություն ստեղծելով՝ մարդիկ ակնկալում են դրա շնորհիվ ունենալ այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կընձեռեն ապահովել իրենց ազատությունը, իրավունքները եւ երջանիկ ու բարեկեցիկ կյանքը: Հետեւարար, ոչ մեկը, մարդկանց որեւէ խումբ, կամ որեւէ կազմակերպություն եւ, առաջին հերին, պետությունը, իրավունք չունեն մարդուն զրկել իր անհատականությունից, ինքնուրույնությունից, իր ձգտումներից, մարդն ինքը կարող է եւ պետք է իր ունակություններին, կարողություններին ու կողմնորոշումներին համապատասխան տնօրինի իր գործողությունները եւ կամքի ազատ արտահայտությամբ կատարի իր ընտրությունը: Այսինքն՝ պետությունը չպետք է խանգարի եւ միջամտի իր քաղաքացիների ազատ գործունեությանը:

Ինքնին հասկանալի այս դրույթը գործնականում հաճախ չի կենսագործվել, ինչը պայմանավորված է պետական իշխանության առանձնահատկություններով: Դժբախտարար, միշտ եւ ամենուր իշխանությունը չարաշակել է եւ, ի վերջո, այլասերվել: Իշխանություն ունեցողները միշտ ձգտել են իրենց իշխանությունն ավելի ընդլայնել, եթե հնարավոր է՝ բացարձակացնել եւ երկարաձգել: Իշխանության կրողներն ունեն այն համոզմունքը, որ բոլոր նրանք, ովքեր ձգտում են հասնել իշխանության, իրեն-

ցից լավը չեն եւ, հետեւաբար, իրենք պետք է պաշտպանեն իրենց եւ շարունակեն իրենց ձեռքում պահել իշխանությունը: Իսկ դրան հասնելու համար պաշտոնատար անձինք դիմում են տարբեր միջոցների, որոնք միշտ չեն, որ համապատասխանում են օրինականության ու բարոյականության պահանջներին:

Այդպիս եղել է մարդկության պատմության ողջ ընթացքում եւ, բնականաբար, մարդիկ մշտապես պայքարել են անսահմանափակ եւ անվերահսկելի իշխանության դեմ՝ փորձելով ապահովել իրենց ազատությունը եւ պաշտպանել իրավունքները:

Ահա այդ անսահմանափակ եւ անվերահսկելի իշխանությունը սահմանում էր ուղղված XVII-XVIII դարերում ձեւավորված սահմանադրականության գաղափարը: Սակայն դա միակ պատճառը չէր: Բանն այն է, որ յուրաքանչյուր հասարակությունում առկա են բազմաթիվ ու բազմաբնույթ հակասություններ, անգամ սուր հակասություններ ու թշնամանք, քաղաքական, տնտեսական, սոցիալական, անձնական ու հասարակական շահերի բախումներ, որոնք իրենց բնույթով շատ դեպքերում բնական են եւ օրինաչափ: Հետեւաբար, յուրաքանչյուր հասարակություն կարիք ունի այդ բազմապիսի հակասությունները եւ շահերը մեղմելու, կոնֆլիկտները կանխելու, փոխհամաձայնություն հաստատելու խնդիր: Այլ կերպ ասած, անհրաժեշտ է ստեղծել մի այնպիսի հասարակարգ, որտեղ անձնական եւ հասարակական շահերը համընկնում են: Այդպիսի իդեալական իրավիճակ իհարկե գոյություն չունի, բայց խնդիրն էլ հենց այն է, թե ինչպես, ինչ ճանապարհով, ինչպիսի միջոցներով ու ջանքերով կարելի է ձգտել-հասնել նման վիճակի:

Այդպիսի իրավիճակ հաստատելու լավագույն ճանապարհը քաղաքական միասնության ստեղծումն է: Քաղաքական միասնությունը չի նշանակում որեւէ մեկի կամ որեւէ խմբի կամքով հաստատված «միասնություն», այլ ենթադրում է բոլոր քաղաքական ու հասարակական ուժերի փոխհամաձայնությամբ հաստատված հասարակական միջավայր, որտեղ գործող սուբյեկտների վարքագիծը կարգավորվում է ընդունված կանոններով, որոնք պարտադիր են բոլորի համար՝ առանց բացառության: Այս դեպքում ակնհայտ է դառնում հավասարության, ավելի ճիշտ իրավահավասարության, օրենքի առջեւ հավասարության անհրաժեշտությունը, երբ բոլորը ենթարկվում են նույն կարգուկանոնին, իրենց վարքագիծը կարգավորում եւ համապատասխանեցնում են նույն կանոններին:

Այստեղ կարեւոր է ճիշտ մեկնաբանել «բոլորը»: «Բոլորը» ընդգրկում է հասարակության մեջ այս կամ այն գործունեությունը ծավալող սուբյեկտներին. մի դեպքում դրանք մարդիկ են, մյուս դեպքում քաղաքացիներն են, մի այլ դեպքում տնտեսվարողները (անհատներ կամ կոլեկտիվներ), կուսակցությունները եւ հասարակական կազմակերպությունները եւ

## ԳԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

այլն, այսինքն՝ միեւնույն կարգավիճակն ունեցող սուբյեկտների ամբողջությունը: Այստեղից բխում է նաև, որ չկան այս կամ այն արտոնությունն ունեցողներ, հակառակ պարագայում կխախտվի իրավահակասարության սկզբունքը: Նկատենք նաև, որ հավասարությունն անպայմանորեն ենթադրում է նաև ազատություն, այնպես, ինչպես ազատությունը հնարավոր է միայն հավասարության պայմաններում:

Ազատության, հավասարության, արդարության գաղափարներն ամբողջականանում են բնական իրավունքի ուսմունքում, իսկ ապա նաև՝ մարդու իրավունքների տեսությունում:

Բնական իրավունքը, իրեն քաղաքական եւ իրավական մտքի հասկացություն, իր սոցիալական առավելագույն հնչեղությունը նույնպես ստացավ 17-18-րդ դարերում, շնորհիվ եվրոպական Լուսավորականության: Այն դիտվում էր ոչ միայն մարդուն ի ծնն շնորհված եւ նրա բնույթին համապատասխանող իրավունք, այլև մարդու բնական բնույթով պայմանավորված սկզբունքների, իրավունքների ամբողջություն, որն ունի նաև արժեքային նշանակություն: Այլ կերպ ասած, բնական իրավունքը դիտվում է ոչ միայն որպես մարդու սուբյեկտիվ իրավունքներ, այլև արժեքներ, որոնք մարդու ստանում են բնականորեն, առանց որեւէ միջամտության, որեւէ մեկի ցանկության եւ դրանք այլեւս անօտարելի ու անկապտելի են:

Ի տարբերություն նախորդ դարաշրջանների, եվրոպական Լուսավորականությունը բնական իրավունքը վերածեց նաև քաղաքական գործունիք: Կենտրոնական խնդիրն ազատության եւ իշխանության փոխհարաբերության հարցն էր: Այդ շրջանի բոլոր մտածողներին միավորող գաղափարն ազատությունն է, որն ըմբռնվում է իրեն մարդու բնական վիճակ: Ազատության սահմանափակման անբնականությունն էլ հենց դառնում է հումանիստ մտածողների թիրախը: Այդ պատճառով էլ առաջադրելով բնական իրավունքի տեսությունը, լուսավորականներն այն դարձեցին բացարձակ իշխանության սահմանափակման անհրաժեշտության գաղափարական հիմնավորում, իրեն բնական արդարությունը հաստատելու հուսալի միջոց: Այդ հայեցակարգում բնական իրավունքին տրվում էր մարդու բնույթի անփոփխելի սկզբունքների դերակատարություն, ինչից հետեւում է, որ դրանք պետք է արտահայտվեն ամեն մի պետության գործող օրենքներում: Աստիճանաբար ձեւավորվում է մի սկզբունք, ըստ որի օրենքը պետք է պաշտպանի մարդու իրավունքներն իշխանության չարաշահումներից:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ արդի պատկերացումներով բնական իրավունքը համարվում է ժողովրդավարական պետությունների սահմանադրական կարգի հիմքերից մեկը, իսկ դա նշանակում է, որ այն, իրեն սահմանադրական դրույթ, սահմանադրական այլ դրույթների համակարգում դարձել է պետական մեխանիզմի կառուցման կարեւորագույն

սկզբունք: Անհրաժեշտ է նաև նշել, որ պետության եւ իրավունքի փոխադարձ կապի պարագայում իրավունքը նախկինում ընկալվել է միայն որպես պետության իրավաստեղծ գործունեության արդյունք: Սակայն արդեն XIX-րդ դարում իրավական պետության գաղափարի ի հայտ գալուց հետո պետության եւ իրավունքի փոխարարերակցությունն ամբողջապես հակադարձվեց: Այսինքն՝ պետությունը պայմանավորված է իրավունքով եւ գործունեության ընթացքում պարտավոր է հետամուտ լինել իրավական կանխադրույթներին, իսկ իրավունքի հիմքը կազմում են մարդու անօտարելի իրավունքներն ու ազատությունները: Ահա թե ինչու իրավական պետություններում ցանկացած օրենք, այդ բվում նաև սահմանադրությունը, պետք է բխի բնական իրավունքից:

Եվրոպական Լուսավորականության մեծ մտածողները, առաջադրելով բնական իրավունքն իբրեւ քացարձակ իշխանության սահմանափակման արդյունավետ միջոց, իբրեւ բնական իրավունքի գերակայության սկզբունք եւ դրանով իսկ պաշտպանելով մարդու անօտարելի իրավունքները, գաղափարապես հիմնավորեցին եւ նախապատրաստեցին արեւմտյան քաղաքակրթության հետագա զարգացման ուղին: Եվրոպայում եւ Հյուսային Ամերիկայում այդ շրջանում ձեւավորվեցին արդի արեւմտյան քաղաքակրթության տնտեսական, սոցիալական, մշակութային զարգացման ուղենիշները՝ հիմնված բնական իրավունքի առաջնայնության հիմնագաղափարի վրա:

Առաջին քաղաքական փաստաթուղթը, որը բնական իրավունքը հանդիսավորապես ազդարարեց իբրեւ պետական իշխանության հոգածության առարակա եւ դրա պաշտպանությունն իբրեւ պետական իշխանության սահմանափակում ու իշխանության անմիջական պարտականություն, դա Անկախության ամերիկյան հոչակագիրն է (1776թ.): Այս փաստաթորի արդեն հպանցիկ ծանոթությունը թույլ է տալիս եզրակացնել, որ բնական իրավունքի շարքին է դասվում նախ ժողովրդի՝ անկախություն հաստատելու իրավունքը, երկրորդ՝ կառավարման տիրապետող կարգերը փոխելու ժողովրդի իրավունքը եւ երրորդ՝ բոլոր մարդիկ հավասար են եւ յուրաքանչյուրն ունի անօտարելի իրավունքներ՝ կյանքի իրավունք, ազատության իրավունք եւ երջանկության ձգտելու իրավունք:

Մյուս փաստաթուղթը, ուր բնական իրավունքին վերապահված է հիմնարար նշանակություն եւ, ինչպես նախորդը, կազմված է Լուսավորականության մեծ մտածողների գաղափարների ոգով, դա «Մարդու եւ քաղաքացու իրավունքների հոչակագիրն» է (ընդունվել է Ֆրանսիայում՝ 1789թ.): Այս Հռչակագրում են ամրագրվել են մարդու բնական իրավունքները, որոնք Անկախության հոչակագրի համեմատությամբ շատ ավելի ընդարձակ են եւ սահմանում են պետության պարտականություններն այդ իրավունքների ապահովման գործում: Ֆրանսիական հոչակագիրը, որի

## ԳԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

կարեւորագույն գաղափարն ազատության գաղափարն էր, իր նշանակությամբ, հարցադրումների կարեւորությամբ, արտահայտչականությամբ եւ առհասարակ իր ազդեցությամբ առանձնահատուկ դերակատարություն է ունեցել ամբողջ Եվրոպական մայրցամաքում: Հռչակագրում, փաստորեն, ծեւակերպել են սահմանադրականության հիմնական դիրքորոշումներն ու սկզբունքները:

XVIII դարի մյուս փաստաթուղթը, որում արտացոլվել են մարդու իրավունքները, «Իրավունքների մասին բիլլ» է, որն իբրեւ ԱՄՆ Սահմանադրության առաջին տասը փոփոխություններ, ուժի մեջ է 1791 թվականից:

Անհրաժեշտ է նշել, որ այդ փաստաթուղթի հիմնական ոգին՝ բնական իրավունքների պաշտպանությունը, դրական իրավունքի նկատմամբ բնական իրավունքի գերակայությունը, պետական իշխանության ենթարկումն իրավունքին, իր նշանակալի հետքը քողեց յուրաքանչյուր պետության համար չափազանց կարեւոր այնպիսի փաստաթուղթում, ինչպիսին է պետության գլխավոր օրենքը՝ Սահմանադրությունը: Մասնավորապես Անկախության հռչակագիրը դարձավ ԱՄՆ Սահմանադրության հիմքը, իսկ «Իրավունքների մասին բիլլ» դարձավ Սահմանադրության բաղկացուցիչ մասը: Նույնը վերաբերում է նաև Սարդու եւ քաղաքացու իրավունքների հռչակագիրին, որ նույնպես դարձավ Ֆրանսիայի տարբեր սահմանադրությունների ստեղծման հիմքը (այդ Հռչակագիրը ներկայում համարվում է գործող Սահմանադրության բաղկացուցիչ մասը):

Ուսումնասիրելով XVII-XVIII դարերի փիլիսոփայական, հասարակական, քաղաքական, իրավական մտքի զարգացման շրջանակներում ծեւավորված գաղափարական մոտեցումները, ինչպես նաև այդ շրջանում ծեւավորված հասարակական նոր հարաբերությունները, դժվար չեն նկատել, որ առաջացել է այդ հարաբերությունները նորովի կարգավորելու հասարակական պահանջ: Այդ պահանջը բավարարելուն էր ուղղված սահմանադրության գաղափարը:

Ըստ այդ ժամանակ ծեւավորված պատկերացումների, հասարակական հարաբերությունները պետք է կարգավորել մի շարք հիմնարար սկզբունքների հիման վրա.

- իշխանությունը պատկանում է ժողովրդին,
- պետական իշխանությունը սահմանափակված է իրավունքով,
- իշխանությունների բաժանում (տարանջատում),
- մարդու իրավունքների եւ ազատությունների հաստատում եւ սպառապանություն,
- ազատության, իրավահավասարության եւ արդարության հաստատում,
- մասնավոր սեփականության անձեռնմխելիություն:

Նշելով այս հիմնարար սկզբունքները, անհրաժեշտ է նկատի ունենալ,

որ դրանք հիմնականում պայմանավորված են մեկը մյուսով, դրանցից յուրաքանչյուրը ենթադրում է մյուսները, այսինքն՝ դրանց բոլորի ամբողջությունն է ապահովում համապատասխան հասարակական եւ պետական կարգը: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այդ սկզբունքները կարող են դերակատարություն ունենալ, եթե դրանք դիտվում են ոչ միայն իրեն սույն սկզբունքներ, այլև դառնում են հասարակական պահանջ, վերածվում են արժեքների եւ անձանց արժեքային կողմնորոշումների ամբողջական համակարգի, որն էլ կարող է հանդես գալ որպես հասարակական կարգավորիչ:

Այս ամենի հետ մեկտեղ պետք է կարեւորել, թե ինչ պայմանների առկայության դեպքում հնարավոր կդառնա նման ճանապարհով կարգավորումը: Հասկանալի է, որ ցանկություններն իրագործելու լավագույն ձեւը հասարակական համաձայնության եւ քաղաքական միասնության ապահովումն է: Հասարակական համաձայնության գալը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերոհիշյալ գաղափարները, որքանով միտված են ինչպես անհատների բարեկեցությանն ու ազատ գործունեության ապահովմանը, այնպես էլ ողջ հասարակության առաջընթաց զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, անհրաժեշտ է լայնորեն տարածել եւ քարոզել, ինչն էլ հաջողությամբ կատարվում էր Լուսավորականության դարաշրջանում:

Ինչ վերաբերում է քաղաքական միասնության հաստատմանը, ապա այս դեպքում անհրաժեշտ է առկա քաղաքական ուժերի փոխադարձ վստահությունը եւ փոխհամաձայնեցված գործունեությունն այդ արժեքների շրջանակներում: Քաղաքական միասնության հաստատման անհրաժեշտությունը որքան որ հասկանալի ու ցանկալի, այնքան էլ դժվար հասանելի է, եթե դրա համար չկան քավարար պայմաններ: Եթե գոյություն ունի որեւէ քաղաքական ուժ, որը մյուս բոլոր ուժերի համեմատ ունի զերակշիռ դիրք եւ թե օրյեկտիվորեն, թե սուբյեկտիվորեն համոզված է, որ իր ուժերն անսպառ են եւ կարող են միշտ բոլոր քաղաքական հարցերում հաղթել, ապա այդ դեպքում քաղաքական միասնությունը դառնում է միայն երազանք, եւ արդյունքում հաստատվում է բռնապետական քաղաքական միասնություն:

Այդպես է եղել եվրոպական քացարձակապետության (արսոլյուտիզմի) դարաշրջանում: Սակայն արդեն XVII-XVIII դարերում աստիճանաբար ակնհայտ է դառնում, որ քացարձակ ուժեղ քաղաքական ուժեր գոյություն չունեն, եւ միշտ հանդես են գալիս նոր քաղաքական ուժեր, որոնք ունակ են հաղթել «քացարձակ» ուժեղներին: Այդ մասին է վկայում եվրոպական երկրների պատմական փորձը, եթե քաղաքական ուժերի բախումները հաճախ հանգեցրել են ինտրիգների, խռովությունների, ապստամբությունների, քաղաքացիական պատերազմների, հեղափոխությունների, հեղափոխությունների,

## ԳԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

դաշրջումների, որոնք ուղեկցվել են մեծ արյունահեղություններով եւ, որն ամենակարեւորն է, պարզ է դարձել, որ հաղթանակները եղել են չափազանց անցողիկ ու ժամանակավոր. հաղթողները շուտով դարձել են պարտվողներ: Հետեւարար, այդ դեպքում եւս աստիճանաբար ձեւավորվել է այն պատկերացումը, որ անհրաժեշտ է որոշակի հարցերում գալ փոխհամաձայնության, վարել փոխվիճումային քաղաքականություն, մշտապես դեկավարվել խաղի նույն կանոններով:

Նշված, ինչպես նաև քազմաքիվ այլ գործոնների ազդեցությամբ եվրոպական ռացիոնալիզմի շրջանակներում ձեւավորվում է նաև սահմանադրության գաղափարը՝ որպես քաղաքական-քաղաքական զարգացման եւ առաջընթացի գրավական: Հասկանալի է, որ սահմանադրություն կոչվածը, եվրոպական պատկերացումներին համապատասխան, պետք է լիներ այնպիսի մի փաստաթուղթ, որը բոլորի համար կլիներ ընդունելի, կապահովեր նոր ձեւավորված արժեքների հաստատումը, զարգացումն ու պահպանությունը՝ միաժամանակ ապահովելով մարդկանց քաղաքական ու քաղաքացիական իրավունքները, իշխանության սահմանափակումը եւ այլն: Այսինքն՝ այս խնդիրներն իհարկե կարող էին իրագործվել միայն այն դեպքում, եթե այն ընդունելի լիներ ժողովրդի մեծամասնության համար եւ ունենար բարձրագույն իրավական ուժ:

Կարճ ասած՝ ըստ եվրոպական պատկերացումների, սահմանադրությունը մի փաստաթուղթ է, որն ընդունելի է մեծամասնության համար, ունի բարձրագույն իրավական ուժ, սահմանափակում է իշխանությունը: Ինչ վերաբերում է վերը հիշատակված մյուս սկզբունքներին, ապա դրանք, ըստ էության, կոչված են ապահովելու իշխանության սահմանափակումը. ասենք, մարդու իրավունքների հաստատումը եւ ապահովումը, կամ իշխանությունների քաժանումը եւ այլն, ոչ այլ ինչ են, եթե ոչ իշխանության սահմանափակման տարբեր միջոցներ: Եվ առհասարակ, սահմանադրությունն ամբողջությամբ եւ իր առանձին դրույթներն իրենց էությամբ իշխանության սահմանափակում են:

Սահմանադրության գաղափարը, ինչպես տեսնում ենք, առաջին հերթին փիլիսոփայական, քաղաքագիտական, իրավական մի շարք նորարարական գաղափարների հանրագումարն է, դրանց քվինտեսենցիան, խտացումը, որը միտված է մի հիմնական նպատակի՝ կայուն զարգացման կենսագործմանը: Այդ տեսակետից միանգամայն պարզ է, որ սահմանադրությունն իր բնույթով ունի ոչ միայն իրավական, այլև քաղաքական ու փիլիսոփայական բնույթ: Ակնհայտ է, որ փիլիսոփայական ու քաղաքական դրույթները, ընդորկելով սահմանադրության մեջ եւ ստանալով իրավական ձեւակերպումներ, կարիք ունեն իրավական քացարության, պարզաբանման ու մեկնաբանության: Բերենք միայն մեկ օրինակ. «Մար-

դը, նրա արժանապատվությունը, իրավունքները բարձրագույն արժեքներ են»։ Վերածննդի դարաշրջանից եկող այս փիլիսոփայական, աշխարհայացրային դրույթը, հայտնվելով սահմանադրության մեջ, բնականաբար պետք է ստանա սահմանադրափակական մեկնաբանություն, այսինքն՝ քաղաքական իշխանությունը պետք է, ավելին՝ պարտավոր է այդ դրույթը կյանքի կոչել բոլոր իրավական միջոցներով, իր ողջ գործունեությամբ։ Այսինքն՝ այդ դրույթը իր վերացականությունից պետք է վերածվի գործնական քաղաքականության հասարակական կյանքի բոլոր ոլորտներում։ Այստեղ չեմ ցանկանում անդրադառնալ այդ դրույթի շուրջ ընթացող բանավեճերին, որովհետեւ նախ պետք է փորձել խորությամբ հասկանալ այն, յուրացնել, դեկավարվել դրանով, կենսագործել կյանքում, հետո նոր միայն կարելի կլինի խոսել դրա բացասական հետեւանքների մասին։

Այսպիսով, եթե փորձենք պատասխանել ի՞նչ է սահմանադրությունը հարցին, ապա, նախ եւ առաջ, անհրաժեշտ է նշել հետեւյալը. քանի որ հասարակությունը եւ պետությունը մշտապես կարիք ունեն լուծելու ինչպես իրենց առջեւ դրված, այնպես էլ անընդհատ առաջացող նորանոր հիմնախնդիրները, հաղթահարել առկա դժվարությունները, հարթել կնճռոտ հարցերն ու տարրեր կարգի բախումները, ուստի անհրաժեշտ է ստեղծել բոլորի համար ընդունելի որոշակի կանոններ ու կառուցակարգեր, այլ բառով ասած՝ սահմանադրություն։ Այսինքն՝ սահմանադրությունը սահմանում է այնպիսի դեկավարող սկզբունքներ, որոնց միջոցով կարելի է ձեւավորել հասարակական համաձայնություն եւ քաղաքական միասնության հաստատման, հասարակության, անհատի ու պետության միջեւ հարաբերությունների, պետության գործունեության կարգավորման հիմքերը։ Այս ամենի հետ մեկտեղ սահմանադրությունը լուծում է մի կարեւոր եւ հիմնարար խնդիր՝ իշխանության սահմանափակումն իրավունքով, ինչն էլ, փաստորեն, հենց սահմանադրության էությունն է։ Ի դեպ, այս դասախոսության ընթացքում եղան մի շարք պնդումներ, ինչպես, օրինակ՝ սահմանադրությունն ամրողական է, սահմանադրությունն ինքնարար է եւ անհակասական, սահմանադրությունն ունի արսիոմատիկ սկզբունքով տեսության կառուցվածք, սահմանադրությունը մի միասնական համակարգ է, կամ՝ կարող են լինել սահմանադրություններ, որոնք այդպես են միայն կոչվում, բայց իրականում սահմանադրություն չեն եւ այլն, որոնք կարիք ունեն լրացուցիչ բացատրության եւ հիմնավորման, սակայն դրանք դուրս են այս դասախոսության շրջանակներից եւ դրանց կանոնադառնանք որեւէ այլ պատեհ առիթով։

Սահմանադրության մասին խոսելիս անհրաժեշտ է նշել, որ վերը հիշատակված սկզբունքներից զատ սահմանադրություններն ունեն նաև մի շարք առանձնահատկություններ, որոնք ներհատուկ են ամեն մի կոնկրետ երկրի սահմանադրությանը։ Մասնավորապես, սահմանադիրները, կար-

## ԳԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ծում եմ, դեկավարվել են այն սկզբունքով, որ անհրաժեշտ է կարգավորել այն ամենը, ինչը չի կարելի չկարգավորել: Առաջին հերթին սա վերաբերում է պետական կազմակերպման հարցերին: Ուստի, սահմանադրություններում ամրագրվում են հիմնական պետական մարմինների ստեղծման, գործունեության կազմակերպման հիմքերը՝ դրանց վերապահելով համապատասխան սահմանադրական իրավասությամբ: Միաժամանակ, սահմանվում են տարրեր գործառույթներ այն հաշվով, որ դրանք փոխարացվեն եւ ապահովվի հուսալի համագործակցություն, պատասխանատվություն ու վերահսկողություն: Սովորաբար այդ մարմինների լիազորությունները սահմանվում են ինչպես սահմանադրությամբ, այնպես էլ օրենքներով: Սակայն, օրինակ, խորհրդարանների պարագայում դրանց լիազորությունները սահմանվում են միայն սահմանադրությամբ: Այդպես է կատարվում, որպեսզի խորհրդարանն իր ընդունած օրենքներով իրեն լրացուցիչ լիազորություններ չվերապահի՝ դրանով իսկ կանխելով սահմանադրությամբ սահմանված լիազորությունների տրամաբանությունից շեղումը: Դրա հետ մեկտեղ, ուսումնասիրելով տարրեր սահմանադրություններ, դժվար չէ համոզվել, որ թեև որոշ հարցեր լուծվում են հիմնավորապես, բոլոր մանրամասներով, սակայն բազմաթիվ հարցեր ներկայացվում են միայն ընդհանուր գծերով եւ երբեմն բավականին անորոշ ձեւակերպումներով, իսկ մի շարք հարցերի նկատմամբ առհասարակ լրում է:

Այս տեսակետից կարելի է ասել, որ սահմանադրության դրույթները ոչ կատարյալ են եւ ոչ էլ համընդգրկուն: Չնայած այդ հանգամանքին՝ ամեն մի սահմանադրություն սկզբունքորեն ամբողջական է եւ ինքնարակ, առանց ներքին հակասությունների եւ շատ կողմերով նման է արսիոմատիկ սկզբունքով կառուցված տեսություններին եւ մի միասնական համակարգ:

Սահմանադրության մյուս կարենոր առանձնահատկությունն այն է, որ սահմանադրական ամեն մի դրույթ, ցանկացած տարր անմիջականորեն կամ անուղղակիորեն փոխկապակցված է մյուս դրույթների հետ եւ դրա շնորհիվ տալիս է հասարակական գոյակցության ամբողջական եւ ընդհանուր պատկերը: Հետեւաբար, սահմանադրական դրույթները կարող են հասկանալ եւ ճիշտ մեկնաբանվել, երբ դրանք դիտարկվում են իրեւ մի ամբողջականություն եւ մեկ միասնական համակարգ:

Սահմանադրությունն ի սկզբանե անկատար է, չի հավակնում տալ առաջադրվող բոլոր հարցերի պատասխանները, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ միայն սահմանադրությունը բավարար չէ սահմանադրամական կարգավորման համար: Ինչպես արդեն նշեցինք, սահմանադրությունը հիմնականում կարգավորում է միայն ընդհանուր գծերով, եւ միայն այն, ինչը համարվում է կարենոր եւ պահանջում է հստակություն ու որոշակիություն: Մնացյալ հարցերը կարգավորվում են կամ սահմա-

նադրական սովորույթներով եւ/կամ օրենքներով, այսինքն՝ իրավակարգավորման այլ միջոցներով։ Պարզ է, որ սահմանադրությունը չի հավակնում լինել ավարտուն եւ տալ բոլոր հարցերի վերջնական լուծումները։

Բացի այդ, սահմանադրությունը հասարակական կյանքի որեւէ ոլորտ կարող է ենթարկել իրավական կարգավորման միայն առանձին հարցերում կամ առհասարակ չկարգավորել։ Միանգամայն մտածված եւ գիտակցորեն սահմանադրությունը չի կարգավորում որոշակի հարաբերություններ, որպեսզի հնարավոր լինի դրանց շուրջ ծավալել ազատ քննարկումներ։ Օրինակ՝ տեղական ինքնակառավարմանը վերաբերող հարցերում սահմանադրությունները բացարձակապես չեն անդրադառնում ինքնակառավարման մանրամասներին՝ դրանով իսկ հնարավորություն ընձեռելով մարդկանց եւ համայնքներին սեփական ուժերով բացահայտել ինքնակառավարման ձեւերը, եւ այդ իսկ պատճառով, որպես կանոն, կարգավորում են միայն պետական միջամտությունից ապահովելու խնդիրը՝ պայմաններ ստեղծելով իսկապես ինքնակառավարման դրսեւորումների համար։

Սահմանադրությունն անկատար եւ ոչ համընդգրկուն է նաեւ այն պատճառով, որ որոշակի իրավահարաբերություններ, ինչպես օրինակ, արտաքին քաղաքականությունը կամ ազգային անվտանգությունը եւ այն, իրենց բնորոշ առանձնահատկությունների շնորհիվ չեն կարող (կամ համարյա չեն կարող) ենթարկվել ավարտուն իրավական կարգավորման։

Այսպիսի առանձնահատկությունների պատճառով սահմանադրությունը պետք է մշտապես լինի «քերի», անավարտ եւ ոչ համընդգրկուն, քանի որ հասարակական եւ քաղաքական կյանքը պատմական գործընթաց է եւ ենթակա է շարունակական փոփոխությունների։ Այդ հարավոփոփոխությունն էլ մեծապես որոշում է սահմանադրությամբ կարգավորվող կենսական հարաբերությունների ոլորտը։

Ուսումնասիրելով սահմանադրականության կայացման, ձեւավորման ու զարգացման եվրոպական միտումները՝ ակնհայտ է դառնում մի կարեւոր հանգամանք. մինչ առաջին սահմանադրությունների ընդունումը եվրոպական փիլիսոփայական, քաղաքական, իրավական մտածողության, մշակույթի ոլորտում ձեւավորվում են սահմանադրության կարեւորության ու նշանակալիության վերաբերյալ պատկերացումները, այլ կերպ ասած սահմանադրականության եւ սահմանադրական մշակույթի հիմնական գաղափարները, որոնք ել դարձան սահմանադրությունների ընդունման հիմքը։ Իսկ արդեն սահմանադրությունների ընդունումից հետո ամբողջապես ձեւավորվեցին սահմանադրականությունը եւ սահմանադրական մշակույթը, որոնք զարգանում են արդեն ավելի քան երկու հարյուր տարի։ Մեր պարագայում տեղի է ունեցել հակառակ գործընթացը։ Անկախության հաստատումից հետո վերցրեցինք եվրոպական սահմանադրության գա-

## ԳԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

դափարը, ընդունեցինք սահմանադրությունը, բայց չունենալով սահմանադրականություն եւ սահմանադրական մշակույթ՝ չինք կարող միանգամից սահմանադրությունն ընկալել որպես արժեք, մեզանում դեռևս չի ձեւավորվել այնպիսի մտածողություն, որ հասարակության համար կարեւրագույն հարցերի լուծման բանալին հենց սահմանադրությունն է, որ մեր վարքագծի լավ կամ վատ կողմերի գնահատման չափանիշը սահմանադրական դրույթներն են:

Այնպես, ինչպես սովորական մահկանացուն որեւէ քայլ կատարելիս դեկավարվում է զգրված օրենքներով, խղճով, այսինքն՝ բարոյականության սկզբունքներով, որոնք իր համար մեծագույն արժեքներ են, այնպես էլ պաշտոնյան պետք է դեկավարվի սահմանադրությամբ, սահմանադրական սկզբունքներով ու դրույթներով, իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե այդ պաշտոնյայի համար դրանք դարձել են իրական արժեքներ: Այլ կերպ ասած, պետության (իշխանության) բարոյական լինել-չլինելը կարող է, ի թիվս այլոց, որոշվել նաև սահմանադրական չափանիշներով:

Այժմ անդրադառնանք բնաբանին: Ինձ խորիելու առիթ տվեց, որ 90-ամյա պետության դեկավարն այդպիսի նշանակություն է տալիս իր պետության Սահմանադրությանը: Եվ ես հասկացա, որ պետության գլուխը, որն ամեն օր պետք է պատրաստ լինի ընդունել կարեւորագույն որոշումներ, պարտավոր է դրանք ընդունելուց առաջ «հաշտեցնել» սահմանադրության հետ, իսկ դա էլ հենց նշանակում է սահմանադրությունը նորից կարդալ, վերընթերցել այն, բնականաբար դրա դրույթները ավելի խորն ըմբռնելու համար: Այսինքն՝ սահմանադրությունը նրա համար բարձրագույն արժեք է: Եվ դա այդպես պետք է լինի ոչ միայն պետության գլխի, այլեւ ամեն մի պաշտոնյայի, ամեն մի քաղաքացու համար: Ինձ պակաս չզարմացրեց ԱՄՆ-ի մի այլ Նախագահի՝ Գ. Կլիվլենդի, 1888 թվականին արտահայտած միտքը. «Սահմանադրության տողերից շեղվելը նշանակում է ձախողվել: Միայն դրանց խիստ հավատարիմ մնալով եւ դրանցով ամրագրված սահմանափակումներին ենթարկվելով է, որ աշխարհին կարող ենք ապացուել, որ ամերիկացիներն արժանի են ինքնակառավարման»:

Ավելի քան 100-ամյա պետության գլուխը գտնում է, որ իրենք աշխարհին դեռ ապացուելու բան ունեն, իսկ ապացույցի համար օգտագործվող փաստարկը սահմանադրությունն է, այն էլ միայն այն դեպքում, եթե դու ապրում ես դրանում ամրագրված սահմանափակումներով: Ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են:

---

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Այս դասախոսությունում, որը նախատեսված է ոչ իրավագետների համար, արտահայտված գաղափարները քաղլաված են հետեւյալ գրքերից.

1. История буржуазного конституционализма XVII-XVIII вв. - М., 1983
2. История буржуазного конституционализма XIX в., - М., 1986
3. Хессе К., Основы конституционного права ФРГ, - М., 1981
4. Ներսեսյանց Վ. Իրավունքի եւ պետության տեսություն, -Ե., 2001
5. Պապայան Ռ., Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, Մ.Ա.Ս.Ե., 2002
6. Հարությունյան Գ., Սահմանադրական մշակույթ, -Ե., 2005
7. Պողոսյան Վ., Մարդու իրավունքներ, -Ե., 2002



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՄ ՕՀԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 302-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ Հ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

4 մարտի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի  
(գեկուցող), Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի,  
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Կիվիրյանի, Դ. Գրիգորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դոնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արամ Օհանյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 302-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Օհանյանի՝ 06.09.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության ահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«Գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից»:

Օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահնջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Նման գործարքն առողինչ է»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Դիմողը 30.11.2003թ. «Երեւանի անտառտնտեսություն» ԴՓԲ ընկերության հետ կնքել է անտառային տարածքի 10 տարի ժամկետով վարձակալության պայմանագիր, որից ծագող գույքային իրավունքը, սակայն, օրենքով սահմանված կարգով պետական գրանցում չի ստացել:

09.07.2008թ. Երեւանի քաղաքապետարանի եւ Ա. Ավանյանի միջև դիմողի վարձակալած տարածքի առնչությամբ կնքվել է առուվաճառքի պայմանագիր: 02.07.2009թ. դիմոն Ա. Օհանյանը հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ նշված առուվաճառքի պայմանագիրը եւ Ա. Ավանյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու եւ Երեւանի քաղաքապետին՝ իր վարձակալած տարածքն ուղղակի վաճառքի ձեռով օտարելուն պարտավորեցնելու պահնջով:

ՀՀ վարչական դատարանն իր՝ 10.02.2010թ. վճռով Ա. Օհանյանի հայցը մերժել է այն պատճառաբանությամբ, որ վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները պետական գրանցման չեն ենթարկվել, հետեւաբար՝ նշված գործարքն իրավաբանական ուժ չի ստացել եւ քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ չի առաջացրել:

ՀՀ վարչական դատարանի նշված վճիռը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որն իր՝ 19.05.2010թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձել է:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3. Դիմողը փաստարկում է, որ վիճարկվող նորմերը չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին: Ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածը որպես իրավունքների եւ պարտականությունների սահմանման, փոփոխման եւ դադարման հիմք է դիտարկում գործարքը, հետեւարար, պատշաճ կարգով կնքված գործարքն արդեն իսկ բավարար իրավական հիմք է հանդիսանում իրավունքներ եւ պարտականություններ առաջացնելու, փոխելու եւ դադարեցնելու համար: Վկայակուելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը՝ դիմողը գտնում է, որ գրանցման է ենթակա արդեն իսկ ծագած, գոյություն ունեցող իրավունքը: Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի եւ նշված օրենքի համապատասխան դրույթները՝ դիմողը եզրահանգում է, որ «օրենսդիրը պետական գրանցման միջոցով ոչ թե ծագեցնում է իրավունքը, պայմանավորում իրավունքի ծագումը, այլև առկա իրավունքը պետական գրանցման միջոցով ստանում է պետական պաշտպանություն»: Նման պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի վիճարկվող 2-րդ մասի դրույթը, ըստ դիմողի, որոշակի չի դարձնում, թե անձը երբ եւ ինչպիսի փաստի միջոցով է ձեռք բերում քաղաքացիական իրավունքներ եւ պարտականություններ՝ վարչարարության իրականացման արդյունքում ընդունվող վարչական ակտի, թե գործարքի միջոցով:

Միաժամանակ դիմողը գտնում է, որ գործարքի հիման վրա իրավունքների ծագումը պետական գրանցման փաստով պայմանավորելը, ի խախտումն ՀՀ Սահմանդրության 8-րդ հոդվածի, սահմանափակում է անձի սեփականության իրավունքը:

4. Ըստ պատասխանողի՝ գործարքը նպատակառությամբ իրավաչափ իրավաբանական գործողություն է, որի արդյունքում կարող են իրավական հետեւանքներ առաջանալ, եթե այն համապատասխանում է օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին: Այդ իսկ պատճառով օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքներն անվավեր են: Գործարքի առանձին տեսակների համար սահմանելով դրանցից բխող իրավունքների պարտադիր պետական գրանցման պահանջ՝ օրենսդիրը միեւնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է այդ պահանջը չկատարելու իրավական հետեւանքները: Գործարքի ձեւի եւ դրա չպահպանման հետեւանքների հետ կապված հարաբերությունները կարգավորված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև մի շարք այլ նորմատիվ իրավական ակտերով, եւ այդ հարաբերություններն անհրաժեշտ է դիտարկել իրավակարգավորման համակարգային ամբողջականության մեջ:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Պատասխանողի պնդմամբ՝ վիճարկվող նորմերը համապատասխանում են իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ հստակ սահմանում են օրենսդրի կամքը, այդ նորմերը պարզ, հասկանալի եւ միանշանակ են իրավակիրառողի եւ տվյալ իրավանորմի հասցեատերերի համար: Վիճարկվող իրավադրույթների բովանդակությունը քույլ է տալիս իրավունքի սուբյեկտին տվյալ հանգամանքներում կողմնորոշվել, թե ինչ իրավական նորմեր են ենթակա կիրառման եւ հստակ կանխատեսել իր վարքագծի իրավական հետեւանքները:

5. Վիճարկվող դրույթների՝ իրավական օրենքին ներկայացվող որոշակիության պահանջին համապատասխանությունը պարզելու նպատակով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այդ դրույթները դիտարկել դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այլ դրույթների հետ համադրության մեջ:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը որպես անշարժ գույքի նկատմամբ ցանկացած հիմքով սեփականության իրավունքի ծագման պահ է ճանաչում այդ իրավունքի պետական գրանցման պահը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածը որպես պայմանագրի հիման վրա գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահ է ճանաչում այդ իրավունքի պետական գրանցման պահը, եթե այդպիսի իրավունքն օրենքով ենթակա է գրանցման: Բացի գործարքից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ գլուխ դրույթները որպես գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման հիմք են ճանաչում, ի թիվս այլնի, նաև անձի կողմից իր համար նոր անշարժ գույքի ստեղծումը (ՀՀ քաղ. օր.-ի 173-րդ հոդված), ձեռքբերման վաղեմությունը (ՀՀ քաղ. օր.-ի 187-րդ հոդված): Օրենսգրքի 173-րդ եւ 187-րդ հոդվածները համապատասխանաբար նշված հիմքերով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագումը եւս պայմանավորում են այդ իրավունքի պետական գրանցման պահով:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահը դիտում է որպես այդ իրավունքի ծագման նախապայման ոչ միայն սեփականության իրավունքի պարագայում, այլև անշարժ գույքի նկատմամբ ցանկացած այլ գույքային իրավունքի առնչությամբ: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ եւ 235-րդ հոդվածներն իրավունքի պետական գրանցման պահով են պայմանավորում նաև համապատասխանաբար՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի եւ որոշ դեպքերում՝ գրավի իրավունքի ծագումը:

Աերոհիշյալը վկայում է, որ օրենսդիրը միանշանակորեն անշարժ գույքի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այս կամ

## ՎԵՐԼՈՒԹՅԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

այս հիմքից բխող իրավունքների պետական գրանցման փաստին հաղորդել է միանգամայն որոշակի նշանակություն] քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների համար հստակ է, որ օրենսդիրն անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների ծագումը պայմանավորել է ոչ թե դրանց համար հիմք հանդիսացող հանգամանքների առկայությամբ, այլ այդ հանգամանքների առկայության պայմաններում համապատասխան գույքային իրավունքի պետական գրանցման՝ անշարժ գույքի հետ կապված գործարքներից բխող իրավունքների ու պարտականությունների ճանաչման փաստով:

6. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ Վիճարկվող 10-րդ հոդվածի 2-րդ մասը նույնպես որպես գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքների ծագման պահ է սահմանում դրանց գրանցման պահը։ Օրենսգրքի 135-րդ հոդվածը սահմանում է պետական գրանցման ենթակա իրավունքների շրջանակը, այն է՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, հիփոքեքը, սերվիսութերը՝ չքացառելով օրենքով պետական գրանցման ենթակա այլ իրավունքներ սահմանելու հնարավորությունը։ Օրենսգրքի 301-րդ հոդվածն անշարժ գույքի հետ կատարվող գործարքի կողմերին պարտավորեցնում է գործարքից ծագող իրավունքները ենթարկել պետական գրանցման։ Միաժամանակ, օրենսգրքի 302-րդ հոդվածը սահմանում է օրենքի նշված պահանջը չկատարելու իրավական հետեւանքները, այն է՝ գործարքը, որից ծագող իրավունքներն օրենքով սահմանված ժամկետում պետական գրանցում չեն ստանում, առողջին է՝ օրենքի ուժով գոյություն չունի։ Նշված նորմերի համարված վերլուծությունը վկայում է, որ **Աախու**՝ նման իրավակարգավորումը երաշխավորում է անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքների ու պարտականությունների հավասարակշռությը՝ դրանով իսկ համապատասխան նախադրյալներ ստեղծելով իրավունքների պաշտպանության համար։ **Երկրորդ**՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերություններում քաղաքացիական շրջանառության մասնակիցները լիարժեք հնարավորություն են ունենում կանխատեսելու իրենց համապատասխան վարքագծի իրավական հետեւանքները։ **Երրորդ**՝ իրավական պայմաններ է ստեղծում պետության կողմից անշարժ գույքի շուկայի կայացմանն աջակցելուն, գույքի եւ դրա նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվական համակարգ ստեղծելուն, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, դատարաններին, իրավաբանական անձանց, բանկերին, քաղաքացիներին գույքի եւ դրա նկատմամբ իրավունքների եւ սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելուն, ինչպես նաև այլախիս տեղե-

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

կատվության մատչելիությունը, օբյեկտիվությունը եւ անընդհատությունն ապահովելուն, այսինքն՝ այնպիսի խնդիրներ եւ նպատակներ, որպիսիք միտված են ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածից բխող՝ պետության պարտականությունների կատարման երաշխավորմանը:

Ինչ վերաբերում է դիմողի մատնանշած՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի եւ վիճարկվող դրույթների միջև ենթադրյալ հակասությանը, ինչը, ըստ դիմողի, վկայում է վերջիններիս անորոշության մասին, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դրանք ունեն միմյանցից բովանդակային առումով տարբերվող իրավակարգավորման առարկաներ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների համար **հիմք հանդիսացող հանգամանքները՝** վերջիններիս թվում մատնանշելով նաեւ պայմանագրերն ու գործարքները: Այդ նորմին համապատասխան՝ օրենսգրքի 289-րդ հոդվածը քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների սահմանման, դադարման եւ փոփոխման համար հիմք հանդիսացող «գործարք» եզրույթի քաղաքացիական իրավական բովանդակությունն է բացահայտում: Մինչդեռ օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է գույքային իրավունքների ծագման համար հիմք հանդիսացող այս կամ այն հանգամանքի առկայության պայմաններում գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքների ծագման պահը: Ակնհայտ է, որ քաղաքացիական իրավունքների, այդ թվում՝ սեփականության, ու պարտականությունների «**ծագման հիմքերը» եւ «ծագման պահը» միեւնույն իրավական բովանդակությունը չունեն: Օրենքով նախատեսված հիմքերը, այդ թվում՝ գործարքը, անհրաժեշտ են, բայց ոչ բավարար սեփականության նկատմամբ իրավունքի իրացումը երաշխավորելու համար: Այն պետք է նաեւ օրենքով սահմանված կարգով իրավական ճանաչում ստանա: Սակայն այդ ճանաչումը չի կարող հայեցողական բնույթ ունենալ եւ անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում խոչընդոտել սեփականության իրավունքի իրացմանը: Բացի դրանից, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը՝ քաղաքացիական հարաբերությունների բնույթից ու նշանակությունից ելնելով, հստակ տարածատել է **անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում** գույքի նկատմամբ **իրավունքի ծագման երեք պահ:** գույքի **հանձնման պահից** /հոդվ. 176/, գործարքի **նոտարական վավերացման պահից** /հոդվ. 299/, գույքի **նկատմամբ** իրավունքի **պետական գրանցման պահից** /հոդվածներ 10, 176-ի 2-րդ մաս, 301/:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ վիճարկվող նորմերի մեկնարանման եւ կիրառման պրակտիկայում դրանք ընկալվում են միանշանակ բովանդակությամբ, երկիմաստ, հայեցողական եւ հակասական մեկնարանությունների հնարավորություն չեն ստեղծում:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վերոհիշյալի իհման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող դրույթները ձեւակերպված են հատակ եւ որևէ իրավական անորոշություն չեն առաջացնում:

7. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւորում է նաեւ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագումն այդ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման պահով պայմանավորելու իրավաչափության գնահատումը: Այդ նպատակով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է հաճարում անդրադառնալ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ինստիտուտի սահմանադրահրավական բովանդակությանը, դրա խնդիրներին, ինչպես նաեւ այդ ինստիտուտի վերաբերյալ իր՝ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումներին:

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ինստիտուտը կոչված է իրականացնելու անշարժ գույքի շրջանառության ոլորտում մասնավոր իրավական հարաբերությունների պետական կարգավորում: Այս ինստիտուտը հատուկ է բոլոր այն իրավակարգերին, որտեղ անշարժ գույքը հանդես է գալիս որպես քաղաքացիական իրավահրաբերությունների օբյեկտ: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ինստիտուտի հիմնական իմաստն ու նպատակն անշարժ գույքի շրջանառության կայունության, անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունք ունեցող անձանց սահմանադրական իրավունքների պաշտպանության երաշխիքների ապահովումն է: Նշված նպատակն է արտացոլված «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում: Վերջինս որպես անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հիմնական խնդիրներ է ամրագրում, մասնավորապես, պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչումը, երաշխավորումը եւ պաշտպանությունը, աջակցությունն անշարժ գույքի շուկայի կայացմանը, գույքի եւ դրա նկատմամբ իրավունքների եւ սահմանափակումների վերաբերյալ տվյալների մատչելիության, օրյեկտիվության եւ անընդհատության ապահովումը, պայմանավորված նաեւ այն խնդիրներով, որպիսիք թվարկված են սույն որոշման 6-րդ կետում:

Անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքների պետական գրանցումը ոչ այլ ինչ է, քան գույքի նկատմամբ սեփականության իրավունքի իրացման ու պաշտպանության երաշխիք:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2007թ. մայիսի 15-ի ՍԴՈ-702 որոշման մեջ, գնահատելով առանձին գործարքների պարտադիր նոտարական վավերացման, ինչպես նաեւ դրանցից բխող իրավունքների պետական գրանցման պահանջի իրավաչափությունը, նշել է. «...գրավոր

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

որոշ գործարքների նոտարական պարտադիր վավերացման ինստիտուտը եւ այդպիսի գործարքներից ծագող, փոփոխվող եւ դադարող իրավունքների պետական գրանցման պահանջը՝ ելնելով նաեւ անձի իրավունքների եւ դրանց երաշխավորված իրացման վերաբերյալ սահմանադրական սկզբունքային դրույթների բովանդակությունից, քաղաքացիական իրավունքների ազատության որոշակի սահմանափակում նախատեսելով հանդերձ, կարեւոր երաշխիք է ինչպես անձանց իրավունքների (ներառյալ սեփականության իրավունքի) արդյունավետ իրացումն ու պաշտպանությունն ապահովելու, այնպես էլ պայմանագրի կողմերի ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարման, հետեւաբար, նաեւ քաղաքացիական (գույքային) շրջանառության երաշխավորված կայունությունն ապահովելու համար»:

Ելնելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ինստիտուտի իրավական բովանդակությունից ու խնդիրներից, ինչպես նաեւ հաշվի առնելով սահմանադրական դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշումը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքների պետական գրանցման պարտականություն սահմանելով եւ պետական գրանցման ենթակա իրավունքների ծագումն այդպիսի գրանցմամբ պայմանավորելով՝ օրենսդրությունը հետապնդել է իրավաչափ նպատակ:

8. Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի եւ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի դրույթների համալիր ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությամբ ստեղծված են կոնկրետ իրավական երաշխիքներ, որոնք կոչված են ապահովելու անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքների պետական գրանցման գործընթացի անարգել իրականացումը: Մասնավորապես, նշված գործարքներից բխող իրավունքների պետական գրանցման պահանջի կատարումը բացառապես պայմանավորված է գործարքի կողմերի կամացարահայտությամբ եւ նրանց վարքագծով: Պետական գրանցում իրականացնող իրավասու մարմնը, այն է՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, գրանցման գործընթացում հայեցողություն դրսեւորելու իրավական հնարավորություն չունի: Գրանցման գործընթացը մանրամասն կանոնակարգված է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով: Վերջինս սահմանում է անշարժ գույքի պետական ռեգիստրի ստորաբաժանումներ մուտքագրվող փաստաթոթերի ընդունման կարգը (հոդվ. 22), գրանցման համար դիմելու ժամկետը, գրանցումն իրականացնող ստորաբաժանումը (հոդվ. 23), պետական ռեգիստրի ստորաբաժանման կողմից

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

գրանցումը կատարելու առավելագույն ժամկետը (հոդվ. 24): Ընդ որում, վերոիիշյալ օրենքով սահմանված փաստաթղթերի առկայության պայմաններում համապատասխան իրավասու ստորաբաժանման կողմից գրանցումն օրենքով սահմանված ժամկետում չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի ուժով, տվյալ գործարքի հիման վրա գույքային իրավունք ձեռք բերելու ակնկալիք ունեցող սուրյեկտը կարող է ձեռնամուխ լինել իր համապատասխան իրավունքի իրականացմանը:

Ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է պաշտպանության միջոց նաեւ այն դեպքում, եթե գործարքից բխող իրավունքի գրանցմանը խոչընդոտում է գործարքի կողմերից մեկը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե գործարքը կնքվել է պատշաճ ձեւով, իսկ կողմերից մեկը հրաժարվում է գործարքից ծագող իրավունքների գրանցումից, դատարանն իրավունք ունի մյուս կողմի պահանջով վճիռ կայացնել այդ իրավունքների գրանցման մասին: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումից անհիմն խուսափող կողմը պետք է մյուս կողմին հատուցի գրանցման ուշացման հետ կապված վճարուելը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը վիճարկվող իրավանորմերի սահմանադրականությամբ պայմանավորված չէ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

4 մարտի 2011 թվականի

ՍՊ-944

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՊԵՐՃ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻ ՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ.**

**ՄԱՍԻ ԵՎ 13.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ  
ՊԱՐՔԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝**

**Քաղ. Երեւան**

**15 մարտի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարուրյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Ժ. Խաչատրյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Սելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Պերճ Հակոբյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասի եւ 13.1-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Պ. Հակոբյանի՝ 06.10.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1995 թվականի նոյեմբերի 6-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1995 թվականի նոյեմբերի 16-ին եւ ուժի մեջ է մտել 1995 թվականի նոյեմբերի 28-ին:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը» վերտառությամբ 1-ին հոդվածի՝ վիճարկվող 5-րդ մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվելը կամ այլ պետության քաղաքացիություն ընդունելն ինքնին չի հանգեցնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելուն»:

Նույն օրենքի՝ «Երկրադարձացիություն» վերտառությամբ 13.1-րդ հոդվածի 3-րդ մասի՝ վիճարկվող 2-րդ պարբերությունը սահմանում է.

«Սույն նորմը տարածվում է նաև 1995 թվականի հունվարի 1-ից հետո, առանց սահմանված կարգի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու, այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից միակողմանի հրաժարված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Դիմողը 1992թ. մեկնել է Հայաստանի Հանրապետությունից եւ դիմել է Բելգիայի Ժագավորության իրավասու մարմիններին՝ Բելգիայի քաղաքացիություն ստանալու խնդրանքով: 1997թ. ապրիլի 10-ին դիմողը ձեռք է բերել Բելգիայի քաղաքացիություն: ՀՀ Նախագահին ուղղված՝ ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու վերաբերյալ նրա դիմումը չի քննարկվել, եւ ՀՀ քաղաքացիությունը չի դադարեցվել:

Երեւանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի դատախազությունում 06.05.2002թ. դիմողը՝ Պ. Հակոբյանի նկատմամբ հարուցվել է թիվ 16217802 քրեական գործը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 23.05.2002թ. որոշմամբ Պ. Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով: 03.06.2002թ. նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, իսկ 06.06.2002թ.՝ հայտարարվել է հետախուզում:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

16.08.2004թ. Պ. Հակոբյանի արարքը համապատասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասին: Պ. Հակոբյանը ՀՀ ոստիկանության կողմից հայտնաբերվել է 08.06.2009թ. եւ ներկայացվել նախաքննության մարմնին: 09.06.2009թ. Շահումյանի զինկոմիսարիատի կողմից Պ. Հակոբյանի դիմումը եւ անձնական գործն ուղարկվել են սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումները քննարկող միջզերատեսչական հանձնաժողովի քննարկմանը: Վերջինիս կողմից Պ. Հակոբյանի կողմից վճարման ենթակա գումարը հաշվարկվել է 1.800.000 ՀՀ դրամի չափով, որը վճարվել է:

ՀՀ ոստիկանության քննական գլխավոր վարչության Երեւան քաղաքի քննական վարչության Մալաթիայի քննական բաժնի քննիչի՝ 10.12.2009թ. որոշմամբ Պ. Հակոբյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, իսկ թիվ 16217802 քրեական գործի վարույթը կարճվել՝ իրադրության փոփոխման հիմքով:

Հիշյալ որոշումը Պ. Հակոբյանի պաշտպանի կողմից 17.12.2009թ. բողոքարկվել է Երեւան քաղաքի դատախազին: Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի՝ 29.12.2009թ. որոշմամբ ներկայացված բողոքը մերժվել է: Նշված որոշումը բողոքարկվել է Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որի՝ 04.02.2010թ. որոշմամբ ներկայացված բողոքը մերժվել է:

Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաբննիշ քրեական դատարան, որի՝ 19.04.2010թ. որոշմամբ ներկայացված բողոքը մերժվել է, իսկ Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 04.02.2010թ. որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վերաբննիշ քրեական դատարանի հիշյալ որոշումը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որի՝ 17.06.2010թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ՝ ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. Դիմող կողմը գտնում է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասը եւ 13.1-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությունը հակասում են ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 2-րդ մասին եւ 43-րդ հոդվածին: Իր դիրքորոշումը դիմողը հիմնավորում է նրանով, որ քաղաքացիություն ձեռք բերելը, քաղաքացիությունը փոխելը, քաղաքացիությունից հրաժարվելը նարդու համար իրավունք են, որոնք իրականացվում են վերջինիս ազատ կամարտահայտությամբ: Հետեւաբար, քաղաքացիությունից հրաժարվելու կամ փոխելու առնչությամբ անձի կամարտահայտությունը, եթե հիմքեր

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

չկան ենթադրելու, որ կամարտահայտությունն ազատ չի եղել, պետք է ընդունվի որպես անձի՝ քաղաքացիությունը փոխելու, քաղաքացիությունից հրաժարվելու սահմանադրական իրավունքի իրականացում:

Դիմող կողմը գտնում է, որ օրենքը կարող է սահմանել քաղաքացիությունից հրաժարվելու որոշակի կարգ, սակայն օրենքով սահմանված կարգի խախտմամբ անձի կողմից իր քաղաքացիությունը փոխելը, եթե կասկածներ չկան նրա կամարտահայտման ազատ լինելու վերաբերյալ, չի կարող հիմք հանդիսանալ քաղաքացիությունը փոխած լինելու նրա իրավունքը չճանաչելու համար:

Դիմողի գնահատմամբ՝ վիճարկվող նորմերը կարող են գնահատվել որպես ՀՀ քաղաքացիությունը պահպանելու իրավունքի ընդարձակում եւ ոչ թե ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու իրավունքի սահմանափակում:

4. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկների դեմ՝ նշում է, որ քաղաքացիության ինստիտուտին բնորոշ՝ իրավունքների ու պարտականությունների փոխադարձությունից բխում է, որ պետությունն առանց քաղաքացու համաձայնության չի կարող դադարեցնել նրա քաղաքացիությունը, մյուս կողմից՝ ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելով կամ այլ պետության քաղաքացիություն ստանալն ինքնին չի կարող հանգեցնել ՀՀ քաղաքացիության դադարեցմանը: Քաղաքացիությունը պետության հետ անձի կայուն իրավական կապն է, որն առաջ է բերում փոխադարձ իրավունքներ, պարտականություններ ու պատասխանատվություն: Հետեւարար, քաղաքացիությունից դուրս գալու եւ քաղաքացիությունը փոխելու ազատությունը չպետք է ընկալել որպես բացարձակ հնարավորություն: Պետությունը, ելնելով իր շահերից, կարող է նախատեսել որոշակի սահմանափակումներ: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու եւ քաղաքացիությունը փոխելու ազատությունը սահմանափակող երկու խումբ հիմքեր, որոնք ամրագրված են օրենքի 24-րդ հոդվածում:

Պատասխանողը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածով երաշխավորված՝ քաղաքացիությունը փոխելու յուրաքանչյուրի իրավունքը բացարձակ չէ եւ կարող է իրականացվել միայն օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով նաև օրենքով նախատեսված սահմանափակումները:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխությունների արդյունքում վերացվեց 1995թ. հուլիսի 5-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածում սահմանված՝ ՀՀ քաղաքացու՝ միաժամանակ այլ երկրի քաղաքացի լինելու արգելքը եւ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվեց երկքաղաքացիության

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ինստիտուտը: Նշված սահմանադրական փոփոխության արդյունքում համապատասխան փոփոխություններ կատարվեցին նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես, լրացվեց օրենքի 1-ին հոդվածի վիճարկվող դրույթը: Օրենքը լրացվեց նաև 13.1-րդ հոդվածով: Վերջինս կանոնակարգելով ՀՀ երկրադարձության կամ ստացած ՀՀ քաղաքացիների կարգավիճակը: Օրենքի 13.1-րդ հոդվածի բովանդակությունը հանգում է հետեւյալին: Հաշվի առնելով, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի՝ այդ դրույթում նշված անձինք, ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված արգելքի պայմաններում այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելով, պահպանել են ՀՀ քաղաքացիությունը եւ չի ճանաչվել նրանց կողմից այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու փաստը, երկրադարձության արգելքի վերացման պայմաններում ճանաչվում է նրանց կողմից նախկինում ՀՀ օրենսդրության խախտմամբ այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու փաստը եւ նրանք եւս համարվում են երկրադարձի: Այսինքն՝ այս դրույթի միջոցով օրինականացվել է այն անձանց կարգավիճակը, ովքեր այլ երկրի քաղաքացիություն էին ձեռք բերել ՀՀ Սահմանադրության խախտմամբ: Այս առնչությամբ անհիմն է դիմողի այն պնդումը, որ 1995թ. հուլիսի 5-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված՝ երկրադարձության արգելքի պայմաններում այլ երկրի քաղաքացիության ձեռքբերումը հանգեցրել է ՀՀ քաղաքացիության դադարմանը:

6. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասի եւ 13.1-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության սահմանադրականությունը վիճարկելու միջոցով առաջադրում է հետեւյալ սահմանադրահրավական վեճը. արդյո՞ք անձի կամարտահայտությունը՝ հրաժարվելու ՀՀ քաղաքացիությունից եւ/կամ ձեռք բերելու այլ երկրի քաղաքացիություն, բավարար նախապայման չէ ՀՀ քաղաքացիության դադարման համար, եւ կարող է, արդյո՞ք, անձի ազատ կամարտահայտությամբ ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու եւ/կամ այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում ՀՀ քաղաքացիության դադարումը կախվածության մեջ դրվել որոշակի պարտականությունների կատարման փաստից:

Քննության առարկա գործի շրջանակներում նշված սահմանադրահրավական վեճի լուծումը պահանջում է վիճարկվող դրույթները «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

պահանջներին համապատասխան դիտարկել դրանց հետ համակարգային փոխկապակցվածության մեջ գտնվող՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի եւ 24-րդ հոդվածի հետ համակարգային ամբողջականության մեջ:

Դիմումում բարձրացված սահմանադրահրավական վեճի շրջանակներում սահմանադրական դատարանը նախ անհրաժեշտ է համարում բացահայտել ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ քաղաքացիությունը փոխելու իրավունքի սահմանադրահրավական բովանդակությունը: Այդ նպատակով հարկ է նշված իրավունքը դիտարկել քաղաքացիության ինստիտուտի բովանդակության համատեքստում եւ ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման եւ դադարման կարգը սահմանվում է օրենքով» դրույթի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի հետ համակցության մեջ:

Որպես կանոն, քաղաքացիությունը բնութագրվում է որպես անձի եւ պետության միջեւ առկա իրավական կայուն կապ, ինչն արտահայտվում է փոխսադարձ իրավունքների, պարտականությունների եւ պատասխանատվության համակցության մեջ: Քաղաքացիության ինստիտուտի նման բովանդակությունը ենթադրում է, որ քաղաքացի-պետություն հարաբերություններում, որը նշված սուբյեկտները միմյանց նկատմամբ ունեն փոխսադարձ իրավունքներ ու պարտականություններ, այդ հարաբերություններն ընդհատելու կապակցությամբ կողմերից որեւէ մեկի միակողմանի կամագրտահայտությունը դեռևս բավարար հիմք չէ անձի քաղաքացիության դադարման համար: Քաղաքացիության ինստիտուտի նշված բովանդակությունից է բխում նաև ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածով պետությանը հասցեագրված այն արգելքը, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող զրկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից: Նման արգելք նախատեսված է նաև միջազգային իրավական փաստաթղթերով: Մասնավորապես, 1997թ. նոյեմբերի 6-ի՝ Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի ուժով կամ պետության նախաձեռնությամբ քաղաքացիության դադարեցումը թույլատրվում է միայն նշված հոդվածում սպառիչ կերպով նշված քացառիկ դեպքերում:

Նմանապես, այն դեպքում, երբ քաղաքացիության դադարման գործընթացի նախաձեռնողը քաղաքացին է, պետության նախաձեռնությամբ քաղաքացիության դադարեցումն արգելող ընդհանուր կանոնի տրամադրանությանը համահունչ, քաղաքացու կողմից դրսեւորված նախաձեռնությունը չի կարող անվերապահորեն հանգեցնել քաղաքացիության դադարմանը՝ հաշվի առնելով պետության հանդեպ քաղաքացու պարտականությունների ու պարտավորությունների առկայության հանդեպ քաղաքացու պարտականությունների առկայության հանգամանքը: Մաս-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նավորապես, ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը»:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը եւս վկայում է, որ, պայմանավորված քաղաքացիության ինստիտուտի վերոհիշյալ բովանդակությամբ, քաղաքացու կամացարտահայտությունը՝ հրաժարվելու իր երկրի քաղաքացիությունից, դեռևս բավարար իիմք չէ քաղաքացիության դադարման համար, եւ, որպես կանոն, դադարման հնարավորությունը կախվածության մեջ է դրվում տվյալ քաղաքացու՝ պետության հանդեպ ունեցած որոշակի պարտականությունների ու պարտավորությունների առկայության փաստից: Մասնավորապես, մի շարք երկրներում քաղաքացիությունից հրաժարումը ճճանաչելու իիմք է հանդիսանում զինվորական ծառայության պարտականության առկայությունը (Ավստրիա, Էստոնիա, Ֆրանսիա, Խորվաթիա, Գերմանիա, Հունաստան, Լատվիա, Մոլդովա): Առանձին երկրներում հրաժարման ճանաչումը պայմանավորում են պետության առջեւ հարկային պարտավորությունների քացակայությամբ (Բուլղարիա, Խորվաթիա, Հունգարիա, Ռումինիա, Սլովակիա): Ռուսաստանի Դաշնությունում, Ալբանիայում, Էստոնիայում, Ֆինլանդիայում եւ Լատվիայում քաղաքացիությունից հրաժարումը չի ճանաչվում, եթե տվյալ քաղաքացին պետության հանդեպ ունի ցանկացած չկատարված պարտավորություն: Մի շարք երկրներում քաղաքացիությունից հրաժարումը չի ճանաչվում, եթե անձը ենթակա է քրեական պատասխանատվության (Ալբանիա, Ավստրիա, Բուլղարիա, Հունաստան, Հունգարիա, Լիտվա, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Սլովակիա, Ռուսաստան): Իռլանդիայի օրենսդրությունը նույնիսկ հստակորեն տարանջատում է կատարում քաղաքացիությունից հրաժարվելու եւ պետության առջեւ ունեցած պարտավորությունների միջեւ՝ նախատեսելով, որ քաղաքացիությունից հրաժարումն անձին չի ազատում որեւէ պարտականությունից կամ պարտավորությունից:

7. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ վիճարկվող դրույթի բովանդակությունը համգում է նրան, որ քաղաքացու կամացարտահայտությունը՝ դրւու գալու Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից, դեռևս բավարար իիմք չէ ՀՀ քաղաքացիությունը կորցնելու համար, ուստի օրենքով նախատեսվում են որոշակի պայմաններ: Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնում է քաղաքացիության դադարեցման հետեւանքով: ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 1-ին մասը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարման կարգի սահմանումը

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վերապահում է օրենքին: Այս սահմանադրական դրույթին համապատասխան՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխ նորմերը սահմանում են ՀՀ քաղաքացիության դադարեցման կարգը: Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քաղաքացիությունը դադարեցվում է՝ **Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու**, ՀՀ քաղաքացիությունից գրկվելու դեպքերում, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով:

Բացահայտելով ՀՀ քաղաքացիությունը փոխելու իրավունքի բովանդակությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ քաղաքացիությունը փոխելու իրավունքը ներառում է նաև այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու մտադրությամբ եւ այլ պետության քաղաքացիության ձեռքբերման երաշխիքների առկայությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվելով, որը ենթակա է իրացման քաղաքացիությունը փոխելու վերաբերյալ առկա իրավակարգավորումներին համապատասխան:

8. ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու իրավունքը: Այս իրավունքը պատկանում է այն սահմանադրական իրավունքների թվին, որոնք բացարձակ չեն եւ կարող են սահմանափակվել ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով սահմանված պայմաններով ու հիմքերով:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասը վերարտադրելով ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավունքը, միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասությանը համապատասխան եւ հաշվի առնելով տվյալ իրավունքը ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի պայմաններով եւ հիմքերով սահմանափակելու քույլատրելիությունը, նախատեսում է նոյն օրենքով նախատեսված դեպքերում այդ իրավունքը սահմանափակելու հնարավորությունը: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը քաղաքացիությունը փոխելու իրավունքի սահմանափակման դեպքերն ըստ էության նախատեսում է այդ օրենքի 24-րդ հոդվածում՝ սահմանելով ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը մերժելու հիմքերը: Օրենքի 24-րդ հոդվածը, ամրագրելով Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացու՝ իր քաղաքացիությունը փոխելու, այն է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու եւ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքը, միաժամանակ ամրագրում է ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղա-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

քացու դիմումը մերժելու հիմքերը: Այդ հիմքերն են՝ տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված լինելու փաստը, դատարանի օրինական ուժի մեջ մտած եւ կատարման ենթակա դատավճրի կամ վճռի առկայությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու հակասությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերին, ինչպես նաև պետության, ձեռնարկությունների, կազմակերպությունների կամ քաղաքացիների շահերի հետ կապված չկատարած պարտավորությունների առկայությունը:

**ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ խնդրու առարկա իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար:**

Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարեւորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաշխափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին եւ պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար:

Սահմանադրական դատարանը, հետազոտելով ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը մերժելու հիմքերը, գտնում է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՀՀ քաղաքացիությունը փոխելու իրավունքի սահմանափակումները բխում են Սահմանադրության 43-րդ հոդվածի պահանջներից:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում նշված՝ «պետության, ձեռնարկությունների, կազմակերպությունների կամ քաղաքացիների շահերի հետ կապված չկատարած պարտավորություններ» հասկացության ներքո իրավակիրառական պրակտիկայում պետք է նկատի ունենալ միայն այն պարտավորությունները, որոնք իրենց բնույթով անխօնիորեն կապված են քաղաքացու կարգավիճակի հետ: Քաղաքացիությունից դուրս գալու դիմումի մերժումն այնպիսի չկատարած պարտավորություններ ունենալու հիմքով, որը տվյալ անձը պարտավոր է կատարել նաև ՀՀ քաղաքացիության կորստի դեպքում, կարող է քաղաքացիությունից դուրս գալու՝ անձի իրավունքը սահմանափակել անհամաշխո-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թեն, քանզի նման իրավիճակում քաղաքացիությունից դուրս գալու մերժումը կարող է դառնալ ոչ անհրաժեշտ միջոց տվյալ պարտավորության կատարումն ապահովելու համար:

Սահմանադրական դատարանը գտնում է նաև. որպեսզի իրավակիրառական պրակտիկայում քաղաքացիությունը փոխելու կամ քաղաքացիությունից դուրս գալու՝ անձի իրավունքներն իրացվեն իրավաչափորեն, անհրաժեշտ է, որպեսզի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը նույնպես հստակ ներդաշնակեցվի ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների չափորոշիչներին:

9. Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, ըստ որի՝ մարդու եւ քաղաքացու իիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի շրջանակներում առաջադրված իրավական խնդիրը դիտարկել նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած համապատասխան միջազգային պարտավորությունների, ինչպես նաև քաղաքացիության հետ կապված հարցերին առնչվող միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված սկզբունքների ու նորմերի համատեքստում:

Սպարադարացիության կրծատման մասին 1961թ. կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետությունը միացել է 1994թ. մարտի 16-ին) 7-րդ հոդվածին համապատասխան՝ տվյալ պետության քաղաքացիությունից հրաժարումը չի առաջացնում քաղաքացիության կորուստ, եթե տվյալ անձը չունի կամ ձեռք չի բերել այլ երկրի քաղաքացիություն: Համարժեք նորմ է բովանդակում նաև 1997թ. նոյեմբերի 6-ի՝ Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիան: Այդ կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անդամ պետություն բույլատրում է իր քաղաքացիությունից հրաժարում, պայմանով, որ դրանով այդ անձը չի դառնում քաղաքացիություն չունեցող անձ: Ընդ որում, նույն հոդվածն անդամ պետություններին բույլատրում է քաղաքացիությունից հրաժարվելու իրավունքը վերապահել միայն արտասահմանում մշտական բնակություն ունեցող իր քաղաքացիներին: Նշված միջազգային իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ նման իրավակարգավորման միջոցով միջազգային իրավունքը ձեւավորել է երաշխիք, որը, ի թիվս երաշխիքների, նպատակառության մասին ապարագագության առաջացման հնարավորությունը կանխարգելելուն: Այս իրավակարգավորմանը համապատասխան՝ մի շարք երկրների՝ քաղաքացիության վերաբերյալ օրենքները նախատեսում են, որ քաղաքացիությունից հրաժարումը կարող է ընդունվել միայն, եթե

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տվյալ անձը ձեռք է բերել այլ երկրի քաղաքացիություն կամ ներկայացնում է այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու երաշխիքներ: Առանձին երկրներում նույնիսկ հրաժարման ընդունման համար որպես նախապայման է դիտվում այլ երկրում մշտական բնակության փաստը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթները՝ ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու իրավական հետեւանքների մասով, դիտարկելով վերոհիշյալ միջազգային իրավակարգավորման եւ դրանով հետապնդվող նպատակի լույսի ներքո՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված վիճարկվող դրույթը համահունչ է միջազգային իրավակարգավորմանը, բխում է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից եւ նախեւառաջ հետապնդում է քաղաքացիությունից հրաժարվելու դեպքում ապարադագիտական վիճակի առաջացումը կանխելու իրավաչափ նպատակ:

Ինչ վերաբերում է այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու ուժով քաղաքացիության դադարմանը, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս առնչությամբ միջազգային իրավունքում առկա մոտեցումները Քազմաքաղաքացիության դեպքերի կրծատման եւ բազմաքաղաքացիության դեպքերում կինվորական պարտավորությունների մասին 1963թ. կոնվենցիայի ընդունումից ի վեր որոշակի զարգացում են ապրել: Նշված կոնվենցիան հիմնվում էր այն զաղափարի վրա, որ երկրադագիտությունը կամ բազմաքաղաքացիությունն անցանկալի երեւոյթ է, եւ ըստ այդմ իր 1-ին հոդվածում ամրագրում է, որ իր կամքով այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերած անձը կորցնում է իր նախկին քաղաքացիությունը: Սակայն նշված կոնվենցիայի ընդունումից ի վեր Եվրոպայում տեղի ունեցած որոշակի փոփոխությունների ազդեցությամբ Եվրոպայի խորհուրդը վերանայեց երկրադագիտությունից խոսափելու հարցում իր մոտեցումը՝ ըստ էության հրաժարվելով երկրադագիտությունից խոսափելու սկզբունքի խիստ կիրառումից: Նշված հարցում որդեգրված նոր մոտեցումն իր կոնվենցիոնալ ամրագրումն ստացավ Քաղաքացիության մասին 1997թ. Եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածում, որի համաձայն՝ կոնվենցիայի դրույթները չեն սահմանափակում անդամ պետությունների իրավունքը՝ իր ներպետական օրենսդրությամբ որոշելու՝ այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերած անձը պահպանում է իր քաղաքացիությունը, թե՝ ոչ: Այսինքն՝ միջազգային իրավունքը պետություններին չի պարտավորեցնում որոշակի կոնկրետ վերաբերմունք դրսեւորել իր քաղաքացիների կողմից այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու իրավական հետեւանքների առնչությամբ՝ այդ հարցում ճանաչելով պետությունների հայեցողության ազատությունը:

Ելնելով վերոհիշյալից, հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած համապատասխան միջազգային պարտավորու-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թյունները եւ խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային փորձը՝ ՀՀ սահմանադրական դատարանն իրավաչափի է համարում ՀՀ քաղաքացիությունից դրւս գալու՝ անձի կամարտահայտության դեպքում ՀՀ քաղաքացիության կորուստը ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված սահմանադրական արժեքների պաշտպանության անհրաժեշտությամբ պայմանավորելը:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմոնի իրավունքների ենթադրյալ խախտումները պայմանավորված չեն վեճի առարկա նորմերի սահմանադրականությամբ, այլ առնչվում են պետական իշխանության մարմինների պարտականությունների ժամանակին ու պատշաճ կատարմանը, որոնց քննությունն ու գնահատումը դրւում է ՀՀ սահմանադրական դատարանի իրավազորությունից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13.1-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիման վրա՝ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 4-րդ կետերի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15 մարտի 2011 թվականի  
ՍՊԸ-945



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

«ԲԶՆԻ» ՀԱՆՔՎՅԻՆ ԶՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔՎՅՈՒՆԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 92-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ  
ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ և  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան

29 մարտի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի,  
Մ. Թոփուլյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ՝ Դ. Դանելյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 և 69-րդ հոդվածների,

դուքսաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության արդիք «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի՝ 07.10.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրը եւ գործում առկա մյուս փաստաբղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրը ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Հայցադիմումը վերադարձնելը» վերտառությամբ 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է. «Դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու պահին, հետևյալն է. դիմուղը 22.09.2009թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ քնապահպանության նախարարության՝ վարչական մարմնի գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

13.10.2009թ. ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/4234/05/09 վարչական գործով կայացրել է «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշում: Դատարանը մասնավորապես գտել է, որ հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման, քանի որ հայցադիմումով ներկայացված պահանջները բխում են քաղաքացիաիրավական հարաբերություններից եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ընդդատյա չեն վարչական դատարանին:

22.10.2009թ. դիմողը բողոք է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ վերջինիս՝ 13.10.2009թ. թիվ ՎԴ/4234/05/09 վարչական գործով կայացված՝ «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ: 28.10.2009թ. ՀՀ վարչական դատարանը կողեզիալ կազմով կայացրել է «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» 13.10.2009թ. որոշման դեմ դիմողի կողմից բերված բողոքը մերժելու մասին որոշում՝ վերահաստատելով ՀՀ վարչական դատարանի կողմից 13.10.2009թ. ներկայացված պատճառաբանությունները:

19.11.2009թ. դիմողը ՀՀ վարչական դատարանի՝ 28.10.2009թ. «Բողոքը մերժելու մասին» որոշման դեմ բողոք է բերել ՀՀ վճռաբեկ դատարան: ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 02.12.2009թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին չհամապատասխանելու հիմքով՝ ըստ

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Էռության վերահաստատելով ՀՀ վարչական դատարանի 13.10.2009թ. ներկայացրած պատճառաբանությունները:

28.12.2009թ. դիմողը հայցադիմում է ներկայացրել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ վերոնշյալ նույն պահանջով: 11.01.2010թ. դատարանը կայացրել է «Հայցադիմումը վերադարձնելու մասին» թիվ ԵԿԴ/3492/02/09 որոշումը: Նշված որոշմամբ դատարանը եզրահանգել է. «...ՀՀ քնապահպանության նախարարությունը հանդիսանում է գործադիր իշխանության հանրապետական մարմին, որն իրականացնում է վարչարարություն եւ հայցվորի կողմից ներկայացված պահանջը ծագել է հանրային իրավահարաբերություններից ... ուստի դատարանը գտնում է, որ նշված պահանջի դատական կարգով քննությունը վերոգրյալ իրավական նորմերին համապատասխան վերապահված է ՀՀ վարչական դատարանին եւ հայցը պետք է հարուցվեր ՀՀ վարչական դատարան, այդ իսկ պատճառով ներկայացված հայցադիմումը ենթակա է վերադարձման՝ ելնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներից»:

Դիմողը 11.01.2010թ. որոշման դեմ 18.01.2010թ. վերաբննիշ բողոք է ներկայացրել ՀՀ վերաբննիշ քաղաքացիական դատարան: ՀՀ վերաբննիշ քաղաքացիական դատարանն իր՝ 08.02.2010թ. որոշմամբ դիմողի բողոքը մերժել է՝ անփոփոխ թողնելով Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԿԴ/3492/02/09 քաղաքացիական գործով կայացված՝ «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը: Ի հիմնավորումն նշված որոշման՝ դատարանը գտել է, որ նախարարության կողմից իրականացված վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջը բխում է սույն գործով կողմերի միջեւ առաջացած հանրային-իրավական հարաբերությունից եւ ընդդատյա չէ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

23.02.2010թ. դիմոդը վերաբննիշ դատարանի 08.02.2010թ. որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան:

ՀՀ վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ եւ 234-րդ հոդվածներով, իր՝ 07.04.2010թ. որոշմամբ վերադարձրել է դիմոդի վճռաբեկ բողոքը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներին չհամապատասխանելու հիմքով՝ ըստ էռության վերահաստատելով ՀՀ վերաբննիշ քաղաքացիական դատարանի 08.02.2010թ. որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Սահմանադրական դատարանում գործը դատաքննության նախապատրաստելու փուլում պարզվել է, որ սահմանադրական դատարան դիմելուց հետո դիմոդը դիմել է ՀՀ վճռաբեկ դատարան՝ խնդրելով նոր երեւ-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ան եկած հանգամանքի հիմքով վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2010թ. որոշումը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 10.01.2011թ. որոշմամբ բավարարելով վճռաբեկ բողոքը՝ որոշել է. «Վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի 07.04.2010 թվականի... որոշումը: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.02.2010 թվականի որոշումը եւ կայացնել նոր դատական ակտ. Վերացնել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 11.01.2010 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը»:

Վերը նշված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել այն հանգամանքը, որ դիմողի կողմից ՀՀ վճռաբեկ դատարանում վիճարկվող՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2010թ. որոշումը կայացվել է մինչեւ նույն դատարանի կողմից 03.12.2010թ. թիվ ԵԱԶԴ/1369/05/09 որոշման կայացնումը, որով վճռաբեկ դատարանը սահմանել է օրենքի միատեսակ կիրառության սահմանները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «սույն գործով Ընկերությունը զրկվել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով եւ «Մարդու իրավունքների եւ իիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից»: Նշված որոշմամբ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «...սույն գործը ենթակա է քննության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում»:

3. Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմը չի բավարարում իրավական որոշակիության պահանջները եւ «ընդդատության» բացահայտման իմաստով դատական պրակտիկայում հանգեցնում է տարաբնույթ, հակասական մեկնաբանությունների:

Դիմողը նշում է, որ վիճարկվող նորմի՝ «ընդդատության» բացահայտման իմաստով, դատական պրակտիկայում սխալ մեկնաբանության արդյունքում ինքը զրկվել է դատական պաշտպանության իր իրավունքն իրականացնելու հնարավորությունից: Ըստ դիմողի՝ վիճարկվող նորմը՝ «ընդդատության» բացահայտման իմաստով, հակասում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների պահանջներին:

4. Պատասխանողը, վերլուծելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթների բովանդակությունը, նշում է, որ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը ծագում է

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

քաղաքացիական, վարչական գործերի կարգավորման, ինչպես նաև քրեական մեղադրանքի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտի առկայության եւ նշված վեճերի ու քրեական մեղադրանքի լուծման իրավագորությամբ օժտված դատական մարմիններում պաշտպանության միջոցներն սպառելու պայմաններում:

Հաշվի առնելով այն հանգանանքը, որ ՀՀ վճարելի դատարանի 2011թ. հունվարի 10-ի որոշմամբ վերանայվել է ՀՀ վճարելի դատարանի 07.04.2010թ. որոշումը եւ երաշխավորվել է դիմողի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը՝ պատասխանող գտնում է, որ դիմողը չի սպառել դատական պաշտպանության միջոցները, ուստի միջնորդում է քննության առարկա գործի վարույթը կարճել:

5. Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից սահմանադրական դատարան դիմելու կարգը սահմանված է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող է դիմել «...յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն հոդվածում նշված գործերով դիմում (այսուհետ՝ անհատական դիմում) կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որեւէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերով սահմանված իրավակարգավորումը խարսխված է այն տրամաբանության վրա, որ ֆիզիկական եւ իրավաբանական անձինք իրենց խախտված իրավունքները, նախեւառաջ, պետք է պաշտպանեն ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում։ Ըստ այդմ, ՀՀ օրենսդրությունը որպես սահմանադրական դատարան դիմելու նախապայման

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

սահմանել է դատական պաշտպանության միջոցներն սպառելու պարտականություն եւ վերջնական դատական ակտի առկայության պահանջ:

Գործի նյութերի վերլուծությունից բխում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը վերանայելով իր որոշումը՝ հիմք է ստեղծել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով ու Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվլուպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ դիմողի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար: Իսկ դիմողի փաստարկները հիմնականում վերաբերում են ոչ թե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի բուն բովանդակությանը, որն իրավաչափորեն նախատեսում է, որ «Դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին», այլ այդ նորմի այնպիսի կիրառմանը, որն արգելափակել էր դատարանի մատչելիության իր իրավունքի իրացումը, ինչը ՀՀ վճռաբեկ դատարանի 10.01.2011թ. որոշմամբ երաշխավորվել է:

Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործը քննության ընդունելու համար հիմք հանդիսացած վերջնական դատական ակտի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2010թ. որոշման վերանայման եւ իրավական ուժը կորցնելու պայմաններում այլևս առկա չէ սահմանադրական դատարանում գործի քննության համար անհրաժեշտ նախապայման հանդիսացող վերջնական դատական ակտը, դրանով իսկ դիմողի համար դեռևս չեն սպառվել դատական պաշտպանության միջոցները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարծել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
29 մարտի 2011 թվականի  
ՍՊ-946



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ  
ԱԶԱՓԽՅԱԿ ԵՎ ԳԱՎԹԱԾԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԾՐՁԱՆՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱԾՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝

ՀՀ ՔԲԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 213-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ

ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երեւան

5 ապրիլի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարուրյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի,  
Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող),  
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝  
ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի  
նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ  
հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին»  
ՀՀ օրենքի 25 եւ 71-րդ հոդվածների,

դրնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության Երեւան քաղաքի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ Երեւան քաղաքի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 09.11.2010թ. սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՀՀ քրեական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003թ. ապրիլի 18-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003թ. ապրիլի 29-ին եւ ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ից:

ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Վաշխառությունը» վերտառությամբ 213-րդ հոդվածը սահմանում է.

«1. Վաշխառությունը՝ պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը, ինչպես նաև անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ճեռնորու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվել է մյուս կողմը՝

պատմվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկից չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը՝

- 1) որի հետեւանքով տուժողն ընկել է նյութական ծանր կացության մեջ,
- 2) որը կատարվել է որպես արհեստ,

3) որը կատարվել է տուժողի անշափահաս լինելը կամ մտավոր զարգացման թերություններն օգտագործելով՝

պատմվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից վեցհարյուրապատիկից չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»:

2. Սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երեւան քաղաքի քննչական վարչության Մաշտոցի քննչական բաժնի կողմից հարուցվել եւ քննվել է թիվ 10128209 քրեական գործը: Հարուցված քրեական գործի շրջանակներում որոշում է կայացվել Վ. Ազիզյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին եւ նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով: 2010թ. մարտի 1-ին քրեական գործն ուղարկվել է Երեւան քաղաքի Աջափնյակ եւ Դավթաշեն համայնքների վարչական շրջանների ընդիանուր իրավասության դատարան, որի կողմից նույն թվականի մարտի 3-ին քրեական գործն ընդունվել է վարույթ: 03.11.2010թ. դատավոր Վ. Ռշտունին կայացրել է քրեական գործի վարույթ:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թը կասեցնելու եւ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին որոշում՝ վիճարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի սահմանադրականությունը:

3. Դիմողը, պնդելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածը հակասում է ՀՀ Սահմանադրության 3, 14.1, 18 եւ 31-րդ հոդվածներին, որպես վիճարկվող հոդվածի հակասահմանադրականության հիմնական փաստարկ վկայակոչում է, նախ՝ այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305 եւ 313-րդ հոդվածներով արդեն իսկ նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով նախատեսված եւ քաղաքացիական պայմանագրի հիման վրա կատարվող վաշխառության երկրների արարքների համար քաղաքացիական պատասխանատվություն, եւ երկրորդ՝ պետության կողմից պաշտպանվող տնտեսական շահերի դեմ ուղղված՝ կամովին երկկողմն պայմանագրի կնքելու դեպքում օրենսդրը քրեական պատասխանատվություն է սահմանում կողմերից միայն մեկի՝ փոխատուի համար, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածով ամրագրված՝ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը:

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերին եւ հղում կատարելով ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածին, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածին՝ դիմողը գտնում է, որ օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում՝ «ծանր կացություն» եզրույթը, 2-րդ մասի 2-րդ կետում՝ «որը կատարվել է որպես արհեստ» բառակապակցությունը չեն բխում իրավական որոշակիության սկզբունքից: Ըստ դիմողի՝ օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում՝ «ծանր կացություն» եզրույթը խիստ գնահատողական է, բազմիմաստ, իսկ 2-րդ մասի 2-րդ կետում՝ «որը կատարվել է որպես արհեստ» բառակապակցությունն առաջադրում է հարց, թե ՀՀ կենտրոնական բանկի սահմանաձ բանկային տոկոսի հաշվարկային դրույթի կրկնապատիկը գերազանցող տոկոսադրույթով պարբերաբար գումարներ տրամադրող անձին պետք է ենթարկել վարչական պատասխանատվության՝ ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար, թե քրեական պատասխանատվության՝ վաշխառությունը որպես արհեստ կատարելու համար: Իսկ եթե՝ քրեական պատասխանատվության, ապա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասով, 188-րդ հոդվածով, թե երկու հոդվածներով միաժամանակ:

4. Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող նորմերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ հետեւյալ պատճառաբանությամբ:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

«Վաշխառության քրեականացումը պայմանավորված է գործունեության այս տեսակը քրեականացնելու և դրա դեմ քրեափակական մեթոդներով պայքարելու հանրային պահանջով, որի հիմքում նախ և առաջ ընկած է արարքի հանրային վտանգավորության և արարքի նկատմամբ սոցիալական վերահսկողության այլ միջոցների համեմատությամբ դրա քրեականացման նպատակահարմարության հիմնավորումը։ Արարքի քրեականացումը հասարակական հարաբերությունների կարգավորվածությունն ապահովող առավել ընդհանուր սոցիալական գործընթացի՝ սոցիալական վերահսկողության համակարգի տարր է։ Վաշխառության քրեականացումը համարժեք պատասխանն է այն վճարին, որը գործունեության այս տեսակը հասցնում է մի կողմից տնտեսական հարաբերություններին, մյուս կողմից նպատում այլ՝ առավել վտանգավոր հանցագործությունների կատարմանը»։ Պատասխանողը նաեւ պնդում է, որ վաշխառության քրեականացումն ունի նաեւ կանխիչ նշանակություն, քանի որ քրեափակական արգելքի բովանդակությունը հասարակական զիտակցության մեջ արմատավորելու, հանցավոր վարքագծի կարծրատիպեր ձեւավորելու միջոցով իրականացվում է ինչպես գործունեության այս տեսակի կանխման գործառույթ, այնպես էլ կանխվում են հասարակական ավելի մեծ վտանգավորություն ունեցող հանցագործությունները, որոնք վաշխառության անմիջական հետեւանք կարող են լինել։

5. Վիճարկվող հոդվածը գետեղված է ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ 22-րդ գլխում։ Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հանրային վտանգավորությունը՝ հատկապես վերափոխվող տնտեսական համակարգերի համար, դրսեւորվում է նրանում, որ դրանք խախտում են տնտեսության ոլորտի իրավակարգը, տնտեսական շրջանառության առանձին մասնակիցների, հասարակության, պետության տնտեսական շահերը, գույքային վճաս են պատճառում տնտեսավարող սուրյեկտներին և առանձին քաղաքացիների։

Վաշխառության հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսեւորվում է երկու արարուվ, որոնցից թեկուցելու մեջի կատարումը բավական է արարքը հանցագործություն որակելու համար։ Այն է՝ առաջին՝ պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը, եւ երկրորդ՝ անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվել է մյուս կողմը։

Հանցագործության սուրյեկտիվ կողմը դրսեւորվում է ուղղակի դիտավորությամբ։

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են տուժողի բողոքի հիման վրա, եւ կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների, այսինքն՝ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված վաշխառության վերաբերյալ գործերը համարվում են հանրային հետապնդման գործեր:

6. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև դիմողի հարցադրումները, հարկ է համարում օրենսգրքի վիճարկվող դրույթները դիտարկել ՀՀ քրեական եւ քաղաքացիական օրենսդրության խնդիրների համատեքսուում:

ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի խնդիրները» վերտառությամբ 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի խնդիրներն են, ի թիվս այլնի, հանցավոր ոտնագություններից մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, հանցագործությունների կանխումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Քաղաքացիական օրենսդրության սկզբունքները» վերտառությամբ 3-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել նաև ՀՀ քաղաքացիական օրենսդրության խնդիրները: ՀՀ քաղաքացիական օրենսդրության խնդիրներն են, ի թիվս այլնի, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացումը, խախտված իրավունքների վերականգնման եւ դրանց դատական պաշտպանության ապահովումը:

ՀՀ քրեական եւ քաղաքացիական օրենսդրության խնդիրների համադրված վերլուծությունից բխում է, որ քրեական օրենսդրության միջոցով օրենսդիրն իր առջեւ դրել է հանցագործությունների կանխման միջոցով հանցագործությունների հետեւանքով իրավունքների եւ ազատությունների խախտումների կանխման խնդիր, իսկ քաղաքացիական օրենսդրության դեպքում օրենսդիրն իր առջեւ դրել է խախտված իրավունքների վերականգնման ապահովման խնդիր, ինչը նշանակում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առկա են քաղաքացիական իրավունքների խախտման դեպքում քաղաքացիական դատավարության կարգով նշված իրավունքների վերականգնման համար նախադրյալներ հանդիսացող նորմեր:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Այդամիսիք են, մասնավորապես, դիմողի կողմից վկայակոչված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305 և 313-րդ հոդվածները, որոնք նախադրյալներ են հանդիսանում օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքի կամ ստրկացուցիչ գործարքի հետեւանքով խախտված իրավունքները քաղաքացիական դատավարության կարգով վերականգնելու համար:

Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, որտեղ օգտագործվում է «խախտված իրավունքների վերականգնման» բառակապակցությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում է «պաշտպանել իրավունքները» բառակապակցությունը, ինչը նշանակում է, որ քրեական օրենսդրությունն ունի նախականիչ նշանակություն եւ քրեական օրենսդրության միջոցով օրիենտիվորեն հնարավոր չէ վերականգնել արդեն իսկ խախտված իրավունքները։ Այդ է պատճառը նաեւ, որ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել է քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի ինստիտուտը, որի միջոցով գործնականում ապահովում է հանցագործության հետեւանքով խախտված իրավունքների վերականգնումը։

Վերոգրյալից բխում է, որ կոնկրետ արարքի համար միաժամանակ քրեական եւ քաղաքացիական պատասխանատվություն սահմանող նորմերն ունեն տարրեր առարկաներ, եւ դրանց միջոցով օրենսդիրը լուծում է տարրեր խնդիրներ։ Քաղաքացիական պատասխանատվության սահմանումը չի բացառում քրեորեն պատժելի արարքի համար պատասխանատվության սահմանումը։

Ընդ որում, այս կամ այն արարքի հանրային վտանգավորության գնահատումը եւ դրա քրեականացումը գտնվում են օրենսդրի բացառիկ իրավասությունների տիրույթում՝ հաշվի առնելով խնդրի համակարգային լուծումը եւ ելնելով վարչական, քաղաքացիական եւ քրեական պատասխանատվության հստակ տարանջատման ու համադրված կանոնակարգման անհրաժեշտությունից։

Օրենսդիրն իրավակիրառողին չի ընձեռում քաղաքացիական եւ քրեական պատասխանատվություն սահմանող նորմերի միջեւ ընտրություն կատարելու հնարավորություն։ Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի վերաբերյալ գործերը հանդիսանում են մասնավոր հետապնդման գործեր, արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի առկայության դեպքում գործարքի կողմ հանդիսացող մասնավոր անձին է հնարավորություն վերապահված ընտրություն կատարելու նշված արարքը կատարած, գործարքի մյուս կողմ հանդիսացող մասնավոր անձին քաղաքացիական պա-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տասխանատվության ենթարկելու համար հայց կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համար համապատասխան հայտարարություն ներկայացնելու միջեւ: Բոլոր դեպքերում, օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարք կնքած անձը կարող է եւ պարտավոր է ինանալ, որ տվյալ արարքի համար սահմանված է ոչ միայն քաղաքացիական, այլ նաև քրեական պատասխանատվություն:

7. Ինչ վերաբերում է դիմողի այն հարցադրմանը, որ պետության կողմից պաշտպանվող տնտեսական շահերի դեմ ուղղված՝ կամովին երկկողմանագիր կնքելու դեպքում օրենսդիրը քրեական պատասխանատվություն է սահմանում կողմերից միայն մեկի՝ փոխառուի համար, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածով ամրագրված՝ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված հարցադրումն անհիմն է: Սահմանադրական դատարանն իր՝ 04.05.2010թ. ՍԴՈ-881 որոշման մեջ անդրադարձել է օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքի սահմանադրական բովանդակության բացահայտմանը եւ հետեւողականորեն առաջ է տարել այն տեսակետը, որ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը վերաբերում է համեմատելի իրավիճակներում գտնվող միենալույն կատեգորիայի անձանց, մինչդեռ տվյալ դեպքում փոխառուն եւ փոխառուն որակական տարբեր վիճակներում են:

8. Իրավական որոշակիության վերաբերյալ դիմողի հարցադրումների առնչությամբ սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր՝ ՍԴՈ-747 եւ ՍԴՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով կրկին անգամ ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացությունների բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում՝ «ծանր կացություն» բառակապակցության եւ դրա բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը: Ընդ որում, նշված բառակապակցությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր կոնկրետ փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից: Գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս իրավիճակը եւ պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը, կոնկրետ դեպքում՝ փոխառուն, գտնվել է ծանր կացության մեջ: Ինչ վերաբերում է օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում՝ «որը կատարվել է որպես արիեստ» բառակապակցության վերաբերյալ դիմողի

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հարցադրմանը, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը բարձրացնում է իրավունքի կիրառման հարց:

9. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը, վիճարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածը՝ ամբողջությամբ, եւ պահպանելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, չի անդրադարձել եւ որեւէ հիմնավորում չի ներկայացրել վիճարկվող հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի առնչությամբ, քանի որ այն կոնկրետ քրեական գործի շրջանակներում կիրառելի չէ:

Նշված հանգամանքը հիմք է տալիս եզրահանգելու, որ սույն գործի վարույթը ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի մասով ենթակա է կարճման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով՝ որպես տվյալ կոնկրետ իրավանորմի սահմանադրականության հարցով ոչ իրավասու սուբյեկտի կողմից ներկայացված դիմումի հիմնան վրա քննության ընդունված գործ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարկելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 68 եւ 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Յ**.

1. ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները՝ գործի վարույթը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի մասով, կարճել:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրավարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

5 ապրիլի 2011 թվականի  
ՍՊԸ-947



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2011 թվականի Հունվարի 26-ին Ստորագրված՝ Հայաստանի  
Հանրապետության ԵՎ Վերակառության ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ  
(APL-2)» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երեւան

8 ապրիլի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարույրունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող),  
Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի,  
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25,  
38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի  
հունվարի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում (APL-2)» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 14.03.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Ս. Խաչատրյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում (APL-2)» վարկային համաձայնագիրը /այսուհետ՝ համաձայնագիր/ ստորագրվել է 2011 թվականի հունվարի 26-ին:

2. Համաձայնագրի նպատակն է լրացուցիչ ֆինանսավորում տրամադրել Սկզբնական ծրագրին առնչվող գործողությունների իրականացման համար:

3. Համաձայնագրի համաձայն՝ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) համաձայնագրում սահմանված պայմաններով Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է տասնինը միլիոն ԱՄՆ դոլարին (19.000.000) համարժեք գումար (այսուհետ՝ Վարկ), որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել արժույթի փոխարկման միջոցով՝ համաձայնագրի դրույթներին համապատասխան:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- վճարել Սկզբնավճար Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդին (0.25%) համապատասխան (հոդված II, կետ 2.03),
- վճարումներ կատարել յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ին եւ օգոստոսի 15-ին (հոդված II, կետ 2.05),
- մարել վարկի մայր գումարը 2021թ. փետրվարի 15-ից մինչեւ 2035 թվականի փետրվարի 15-ը (մայր գումարի վճարվելիք տոկոսային մասնաբաժինը պետք է կազմի 3.33%, իսկ 2035 թվականի օգոստոսի 15-ին մայր գումարի վճարվելիք տոկոսային մասնաբաժինը պետք է կազմի 3.43%) (հոդված II, կետ 2.06 եւ Լրացում 3, կետ 1),
- հայտարարել Ծրագրի նպատակների իր հանձնառության մասին եւ այդ նպատակով իրականացնել Ծրագիրն ՀՀ առողջապահության նախարարության միջոցով՝ Ընդհանուր պայմանների V հոդվածի դրույթներին համապատասխան (հոդված III, կետ 3.01),
- առանց սահմանափակելու համաձայնագրի 3.01-ին բաժնի դրույթները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության եւ Բանկի միջեւ այլ համաձայնության բացակայության դեպքում, ապահովել,

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- որ Ծրագիրն իրականացվի համաձայնագրի 2-րդ Լրացման դրույթին համապատասխան (հոդված III, կետ 3.02),
- առաև 3.01-ին բաժնի դրույթների սահմանափակման եւ բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետությունը եւ Բանկը ձեռք են բերել այլ համաձայնություն, մինչեւ Ծրագրի ավարտը Ծրագրի հաշվին պահպանել հաշվեկշիռ, որի գումարը բավարար է Ծրագրի իրականացման հաջորդ երեք ամիսների համար (Լրացում 2, Բաժին 1, Ա.1),
  - մինչեւ Ծրագրի ավարտը պահել կազմկոմիտե, որը բաղկացած է ՀՀ առողջապահության նախարարության (ԱՆ) եւ շահագրգիռ այլ կարեւոր կողմերի ներկայացուցիչներից, եւ որը պատասխանատու է Ծրագրի իրականացումն ուղղորդելու եւ համակարգելու, իրավասությունների շրջանակը սահմանելու, տեխնիկական գնահատումներին մասնակցելու եւ ուղղականացնելու աշակցության միջոցառումների շուրջ խորհրդառուների հետ անմիջականորեն աշխատելու համար (Լրացում 2, Բաժին 1, Ա.2),
  - պահել Հիվանդանոցների օպտիմալացումը եւ արդիականացումը համակարգող կոմիտե (Լրացում 2, Բաժին 1, Ա.3),
  - Ծրագրի Բ մասի իրականացման նպատակով ընտրված յուրաքանչյուր մարզի հանձնարարել կնքել Բանկի պահանջները բավարող իրականացման համաձայնագրի ԱՆ-ի, հիվանդանոցի տնօրենի եւ մարզպետի՝ միջեւ՝ Մարզի հիվանդանոցային համակարգի օպտիմալացման պլանն իրականացնելու համար (Լրացում 2, Բաժին 1, Ա.4 ա)),
  - Ծրագրի Բ մասի իրականացման նպատակով Պետական առողջապահական գործակալության կազմում ստեղծել Ազգային առողջապահական հաշիվների ստորաբաժնում եւ պետական բյուջեից հատկացնել համարժեք ֆինանսական միջոցներ՝ 2013թ. առողջապահական ծախսերի ուսումնասիրություն կատարելու համար, եւ վերանայել տեղեկատվական եւ վերլուծական հանրապետական կենտրոնի կանոնադրությունը՝ 2012 թվականից սկսած առողջապահության ոլորտի գործունեության մասին գելույցների մշակումն օրինականացնելու համար, եւ ապահովել պետական բյուջեից համապատասխան ֆինանսական միջոցների հատկացումը (Լրացում 2, Բաժին 1, Ա.5),
  - ապահովել, որ Ծրագիրն իրականացվի Հակակոռուպցիոն ուղեցույցի դրույթներին համապատասխան (Լրացում 2, Բաժին 1, Բ),
  - մոնիթորինգի ենթարկել եւ գնահատել Ծրագրի առաջընթացը եւ պատրաստել Ծրագրի հաշվետվություններ՝ Ընդհանուր պայմանների 5.08-րդ բաժնի դրույթներին համապատասխան եւ Բանկի հա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մար ընդունելի ցուցանիշների հիման վրա, ապահովել, որ Ծրագրի յուրաքանչյուր հաշվետվություն ընդգրկի օրացուցային մեկ կիսամյակ ժամանակահատված եւ ներկայացվի Բանկ ոչ ուշ, քանի հաշվետվության մեջ ներառված ժամանակահատվածի ավարտից մեկ ամիս անց (Լրացում 2, Բաժին II, Ա.),

- առողիտի ենթարկել ֆինանսական հաշվետվությունները՝ Ընդհանուր պայմանների 5.09-րդ բաժնի «բ» կետի դրույթների համաձայն։ Ֆինանսական հաշվետվությունների յուրաքանչյուր առողիտում ընդգրկել մեկ ֆինանսական տարվա ժամանակահատված եւ այն ներկայացնել Բանկ ոչ ուշ, քանի այդ ժամանակահատվածի ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում (Լրացում 2, Բաժին II, Բ.3)),
- Վարկի միջոցների հաշվին ֆինանսավորել Ծրագրի համար ապրանքների, աշխատանքների, խորհրդատունների ծառայությունների, վերապատրաստման եւ գործառնական ծախսերի միայն 75%-ը (Լրացում 2, Բաժին IV, Ա. կետի Ա.2 ),

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2011 թվականի հունվարի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջև «Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում (APL-2)» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը։

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

8 ապրիլի 2011 թվականի  
ՍՊԸ-948



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2010 թՎԱԿԱՆԻ ԴԵԿԵMBERԻ 10-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԶԻՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» 2007

ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՀԱՄԱՅՆԱՎՐՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ՄԵԶ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՄԱԳԱՍՏԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

8 ապրիլ 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի  
(զեկուցող), Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի,  
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25,  
38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի  
դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների իրավապահ մարմինների եւ հատուկ ծառայությունների գինման համար հատուկ տեխնիկայի եւ հատուկ միջոցների մատակարարումների  
արտոնյալ պայմանների մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության աղիք է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը՝ սահմանադրական դատարան՝ մուտքագրված 11.03.2011թ.:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ Ռ. Հարությունյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների իրավապահ մարմինների եւ հատուկ ծառայությունների գինման համար հատուկ տեխնիկայի եւ հատուկ միջոցների մատակարարումների արտոնյալ պայմանների մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունն ստորագրվել է 2010 թվականի դեկտեմբերի 10-ին՝ Սուլվայում: Արձանագրությամբ նախատեսվում է «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների իրավապահ մարմինների եւ հատուկ ծառայությունների գինման համար հատուկ տեխնիկայի եւ հատուկ միջոցների մատակարարումների արտոնյալ պայմանների մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի համաձայնագրի 3-րդ հոդվածի, 6-րդ հոդվածի երկրորդ եւ չորրորդ պարբերությունները «ազատ փոխարկվող արժույթով» բառերից հետո լրացնել «եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության ոռությով» բառերով:

2. Արձանագրությունն ուժի մեջ է մտնում վերոնշյալ համաձայնագրի 14-րդ հոդվածով սահմանված կարգով՝ Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին չորրորդ գրավոր ծանուցումը «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության քարտուղարության ստանալու օրվանից:

3. Արձանագրությունը կատարված է ոռուերեն՝ մեկ քնօրինակով: Բնօրինակը պահպում է «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության քարտուղարությունում, որն արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր պետության կողարկի դրա վավերացված պատճենը:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

4. Արձանագրության մեջ ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 8.2-րդ և 9-րդ հոդվածներին եւ բխում են միջազգային փոխահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների իրավապահ մարմինների եւ հատուկ ծառայությունների գինման համար հատուկ տեխնիկայի եւ հատուկ միջոցների մատակարարությունների արտոնյալ պայմանների մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### **ՆԱԽԱԳԱՀՈՂ**

### **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**8 ապրիլի 2011 թվականի  
ՍԴ.Ո-949**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՖԻՆԱՆՍՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՀԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ՝

**Քաղ. Երեւան**

**8 ապրիլի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող).

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի հունվարի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Զարգացման քաղաքականության երկրորդ ծրագիր» ֆինանսվորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը՝ Հանրապետության Նախագահի՝ 16.03.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանս-

## **«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Աերի նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով քննության առարկա համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2011 թվականի հունվարի 26-ին՝ աղքատության կայուն կրծատման և կրծատման տեմպերի աճը խթանելու նպատակով:

2. Համաձայնագրով Միջազգային զարգացման ընկերակցությունը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է 13.400.000 (տասներեք միլիոն չորս հարյուր հազար) Փոխառության հատուկ իրավունքին համարժեք գումարով վարկ: Վարկի մարումն սկսվում է 2021 թվականի փետրվարի 15-ից և ավարտվում 2030 թվականի օգոստոսի 15-ին:

3. Համաձայնագրի բաղկացուցիչ մաս են կազմում երկու ժամանակացույց, որոնցում սահմանված են ծրագրի գործողությունները և հետվճարման ժամանակացույցը, եւ մեկ հավելված:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- մարել վարկի մայր գումարը, ինչպես նաև սահմանված տոկոսագումարները՝ ժամանակացույցին համապատասխան,
  - ֆինանսավորման չառհանված մնացորդի համար Ընկերակցությանը վճարել պարտավորության վճար, իսկ վարկի առհանված մնացորդի համար՝ սպասարկման տարեկան վճար,
  - հայտնել Ծրագրի եւ դրա իրականացման նկատմամբ ՀՀ հանձնառության մասին եւ այդ նպատակով Ընկերակցության դիմումի հիման վրա ժամանակ առ ժամանակ տեսակետներ փոխանակել Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական քաղաքականության դաշտի եւ Ծրագրի իրականացման առաջընթացի վերաբերյալ,
  - առհանում չկատարել առհանման եզակի տրանշից՝ քանի դեռ Ընկերակցությունը հավանության չի արժանացրել Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող Ծրագիրը եւ Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական քաղաքականության դաշտի համապատասխանությունը:

5. Համաձայնագրով սահմանված են նաև վճարումների կատարման կարգն ու պայմանները, պարտավորությունների չկատարման դեպքում փոխհատուցման կարգը, Ծրագրի մոնիթորինգի եւ զնահատման կարգը, համաձայնագիրն ուժի մեջ մտնելու եւ դադարեցնելու կարգն ու պայմանները:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Յ**.

1. 2011 թվականի հունվարի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Զարգացման քաղաքականության երկրորդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**8 ապրիլի 2011 թվականի  
ՍՊԸ-950**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՄԻՋԱՋՎԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՓՈԽԱՋՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԳՅԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԲՅԵ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԾ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**8 ապրիլի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Վ. Հովհաննիսյանի (գեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

նաևնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի՝ 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դրսրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի հունվարի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջև «Զարգացման քաղաքականության երկրորդ ծրագիր» փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության աղիք է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 16.03.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով Փոխառության համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Զարգացման քաղաքականության երկրորդ ծրագիր» փոխառության համաձայնագիրն ստորագրվել է 2011 թվականի հունվարի 26-ին:

Փոխառության համաձայնագրի նպատակը Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը (Փոխառու) չորս միլիոն ԱՄՆ դոլար (% եւ 4.000.000) փոխառություն տրամադրելն է՝ «Զարգացման քաղաքականության երկրորդ ծրագրին» աջակցելով համար ֆինանսավորման նպատակով:

Փոխառության համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, պարտավորվում է.

- Ծրագրի իրականացման համար մասհանել Փոխառության միջոցները՝ համաձայն Համաձայնագրի 1-ին ժամանակացույցի 2-րդ քամունկարի,
- Վճարել սկզբնական միանվագ միջնորդավճարը, որը հավասար է Փոխառության գումարի մեկ տոկոսի քառորդ մասին (0.25%),
- ապահովել, որպեսզի որպես Փոխառու իր կողմից վճարման ենթակա տոկոսագումարը յուրաքանչյուր տոկոսային ժամանակահատվածի համար համարժեք լինի Փոխառության արժույթի կողմնորոշիչ տոկոսադրույթին՝ գումարած փոփոխական սպրեդը՝ պայմանված, որ Փոխառության ամբողջ հիմնական գումարի կամ դրա մի մասի փոխարկման ժամանակ, Փոխառուի կողմից այդ գումարի մասով վճարման ենթակա տոկոսագումարը Փոխարկման ժամանակահատվածի ընթացքում որոշվի Ընդհանուր պայմանների IV հոդվածի դրույթներին համապատասխան,
- համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ սկսած 2021 թվականի փետրվարի 15-ից մինչեւ 2035թ. փետրվարի 15-ը յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ին եւ օգոստոսի 15-ին կատարել վճարումներ՝ մարել Փոխառության ընդհանուր հիմնական գումարը՝ 3,33% վճարման մասնաբաժնով, իսկ 2035 թվականի օգոստոսի 15-ին՝ 3,43% վճարման մասնաբաժնով,

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ»

- առանց սահմանափակելու Ընդհանուր պայմանների 5.08 բաժնի դրույթները՝ ժամանակին Բանկին տրամադրել համաձայնագրի II հոդվածի դրույթներին առնչվող այնպիսի տեղեկություններ, որոնք Բանկը կարող է հիմնավոր կերպով ժամանակ առ ժամանակ պահպանել,
- ապահովել, որպեսզի Փոխառության միջոցները չօգտագործվեն բացառված ծախսերը ֆինանսավորելու համար, իսկ եթե ցանկացած ժամանակ Բանկը որոշում է, որ Փոխառության որեւէ գումար օգտագործվել է բացառված ծախսեր վճարելու նպատակով, ապա Բանկից ծանուցում ստանալով՝ անհապաղ Բանկին փոխհատուցել նման վճարման գումարին համարժեք գումար,
- Փոխառության հաշվից բոլոր մասհանումները հաշվեգրել Փոխառուի կողմից նշանակված եւ Բանկի համար ընդունելի հաշվին,
- ապահովել, որպեսզի Բանկի համար ընդունելի հաշվին Փոխառության յուրաքանչյուր հաշվեգրման ժամանակ համարժեք գումար հաշվարկվի Փոխառուի բյուջեի կառավարման համակարգում՝ բանկի համար ընդունելի եղանակով:

Համաձայնագիրն ունի հետևյալ վերտառությամբ երկու ժամանակացույցեր՝ «Ծրագրի գործողություններ, փոխառության միջոցների առկայություն» եւ «Մարման ժամանակացույց», եւ Հավելված:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Յ.**

1. 2011 թվականի հունվարի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Զարգացման քաղաքականության երկրորդ ծրագիր» փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### **ՆԱԽԱԳԱՀՈՂ**

### **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**8 ապրիլի 2011 թվականի  
ՍՊԸ -951**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՀՈ-ՌՄՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱՉՎԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ «ԳՅՈՒՂԱԿԱՆ**

**ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱՆ ԾՐԱԳԻՐ (ԳԿՍԾ)»**

**ՖԻՆԱՆՍՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՎԱՅՐԱՎՈՐՄԱՆ ԱՄՐԱԳՐՎԱԾ**

**ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ**

**ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝**

**Քաղ. Երեւան**

**8 ապրիլի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի նոյեմբերի 30-ին Հռոմում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Գյուղատնեսության գարգացման միջազգային իհմնադրամի միջեւ «Գյուղական կարողությունների ստեղծման ծրագիր (ԳԿՍԾ)» ֆինանսվորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2011 թվականի մարտի 14-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով 2010 թվականի նոյեմբերի 30-ին Հռոմում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի միջեւ «Գյուղական կարողությունների ստեղծման ծրագիր (ԳԿՍԾ)» ֆինանսավորման համաձայնագիրը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի միջեւ «Գյուղական կարողությունների ստեղծման ծրագիր (ԳԿՍԾ)» ֆինանսավորման համաձայնագիրը (Համաձայնագիր) ստորագրվել է 2010 թվականի նոյեմբերի 30-ին՝ Հռոմում:

2. Համաձայնագրով Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (Հիմնադրամ) Հայաստանի Հանրապետությանը (Փոխառու) տրամադրում է ֆինանսավորում (փոխառություն եւ դրամաշնորհ)՝ Հայաստանի Հանրապետությունում «Գյուղական կարողությունների ստեղծման ծրագրին» (Ծրագիր) աջակցելու նպատակով:

Փոխառության գումարը կազմում է ութ միլիոն ինը հարյուր հազար փոխառության հատուկ իրավունք (8 900 000 ՓՀ), իսկ դրամաշնորհի գումարը՝ երեք հարյուր երեսուն հազար փոխառության հատուկ իրավունք (330 000 ՓՀ):

Փոխառությունը տրվում է հաստատուն պայմաններով՝ առանց տոկոսագումարի, տարեկան սպասարկման վճարը կկազմի մեկ տոկոսի երեք քառորդը (0.75%), վճարումները պետք է լինեն կիսամյակային՝ փոխառության սպասարկման վճարի արժույթով եւ 20 տարի ժամկետով՝ ներառյալ 10 տարի արտոնյալ ժամկետ, որն սկսվում է Հիմնադրամի գործադիր խորհրդի կողմից փոխառությունը հաստատվելու պահից:

Փոխառության սպասարկման վճարի արժույթն ԱՄՆ դոլարն է:

Ծրագիրն իրականացվելու է Շիրակի, Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի եւ Սյունիքի մարզերում:

Ծրագրի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում գյուղական աղքատության նվազեցումը:

Ծրագրի խնդիրներն են՝

- ստեղծել պտղի եւ ընկույզեղենի տնտեսապես կենսունակ արտադրություն գյուղական մանրածավալ արտադրողների մասնակցությամբ.

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- պտղի եւ ընկուզեղենի արտադրության համար անհրաժեշտ ծառայությունների մատուցման նպատակով ստեղծել կառույց՝ հետագայում աճրողությամբ մասնավորեցնելու պայմանով.
- Վերացնել ենթակառուցվածքների խոչընդուները, որոնք սահմանափակում են տնտեսապես ակտիվ գյուղաբնակների կողմից գյուղական տնտեսության առեւտրայնացմանը մասնակցելու հնարավորությունները:

Ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչներից.

ա) աջակցություն պտղի եւ ընկուզեղենի արտադրությանը, մասնավորապես, «Հայկական միրգ» բաժնետիրական ընկերության ստեղծում, որն իրականացնելու է հետեւյալ գործառույթները.

- հիմնել գլխամասային տնկարան, հյուսվածքային լաբորատորիա եւ մայրուտ՝ արմատակալների եւ այլ սորտերի բազմացման համար.
- հիմնել այգիներ, ստեղծել պտղի եւ ընկուզեղենի արտադրության հատվածի ֆերմերների հետ պայմանագրային հարաբերություններ եւ կազմակերպել այգիների կառավարման ոլորտում ուսուցում պայմանագրային հարաբերությունների մեջ ներգրավված ֆերմերների համար.
- հիմնել պտղի եւ ընկուզեղենի փաթեթավորման եւ վերամշակման կառույցներ.
- աջակցել շուկայավարմանը տեղական եւ միջազգային շուկաներում, կազմակերպել վաճառքի լոգիստիկան եւ մատուցել բրենդավորման, գովազդի եւ հետվաճառքային ծառայություններ.

բ) գյուղական ենթակառուցվածք, մասնավորապես, աջակցություն այն հասարակական ենթակառուցվածքների կառուցմանն ու վերանորոգմանը, որոնք տեղակայված կլինիկ լեռնային անապահով համայնքներում, այդ թվում՝ ջրամատակարարման, գազաֆիկացման սարքերի, հեղեղաջրերի հեռացման սարքերի կառուցումը, ինչպես նաև գյուղական ճանապարհների եւ այն օժանդակ կառույցների կառուցմանն աջակցումը, որոնք կհամալրեն եւ կամրապնդեն Ծրագրի ներդրումները.

գ) Ծրագրի կառավարում, մասնավորապես, Փոխառուի կողմից Ծրագրի դեկավար կոմիտեի հիմնում, որը պատասխանատու կլինի Ծրագրի ընդհանուր կառավարման եւ իրականացման համար: Ծրագրի աշխատանքների մոնիթորինգը, Ծրագրի ընդհանուր պլանավորումը եւ բյուջեի կազմումը, ենթակառուցվածքային աշխատանքների վերահսկումն իրականացնելու է Ծրագրի վերլուծությունների եւ կառավարման գրասենյակը:

Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվա հնգամյակը Ծրագրի ավարտի օրն է:

Համաձայնագրի ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

օրենսդրությանը համապատասխան վավերացման մասին փաստաթուղթը Հիմնադրամի ստանալու պահից:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

ա) փոխառության հիմնական գումարը Հիմնադրամին վերադարձնել 20 հավասար կիսամյակային մասնաբաժիններով, յուրաքանչյուրը՝ 445 000 ՓՀԲ՝ սկսած 2021 թվականի փետրվարի 1-ից եւ ավարտել 2030 թվականի օգոստոսի 1-ին.

բ) տրամադրել Ծրագրի ֆինանսավորման իր մասնաբաժինը՝ մոտավորապես՝ 3 300 000 ԱՄՆ դոլար գումարի չափով՝ ենթակառուցվածքների համար, ինչպես նաև անհրաժեշտ միջոցներ հարկերի վճարման համար, ներառյալ մաքսային եւ սոցիալական վճարումները.

գ) Ծրագրի ենթակառուցվածքների հաշվին նախապես փոխանցել մեկ միլիոն հարյուր հազար (1 100 000) ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ Ծրագրի շրջանակներում ենթակառուցվածքներին նպատակառողջված ներդրումներին օժանդակելու նպատակով.

դ) ստեղծել «Հայկական միրգ» բաժնետիրական ընկերություն, որի բոլոր բաժնեմասերի սեփականատերն սկզբնական շրջանում պետք է լինի Հայաստանի Հանրապետությունը, սակայն բաժնեմասերն աստիճանաբար պետք է փոխանցվեն ռազմավարական ներդրողներին եւ «Հայկական միրգ» բաժնետիրական ընկերության հետ պայմանագրային հարաբերությունների մեջ ընդգրկված ֆերմերներին՝ «Հայկական միրգ» բաժնետիրական ընկերության բաժնեմասերի վաճառքի միջոցով.

ե) սուրսիդավորման ֆինանսավորման համաձայնագիր կնքել «Հայկական միրգ» բաժնետիրական ընկերության հետ, որով կսահմանվի, որ Հայաստանի Հանրապետությունը պայմանագրեր կկնքի «Հայկական միրգ» բաժնետիրական ընկերության հետ վերջինիս ֆինանսավորում տրամադրելու համար՝ հետեւյալ կերպով.

- 1.7 մլն ԱՄՆ դոլար՝ կապիտալի տեսքով.
- 1.5 մլն ԱՄՆ դոլար՝ դրամաշնորհի տեսքով, եւ
- 7 մլն ԱՄՆ դոլար՝ փոխառության տեսքով:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2011 թվականի մարտի 24-ին հավանություն է տվել սույն գործով քննության առարկա Համաձայնագրին:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ համաձայն սահմանադրական դատարանում Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի ներկայացրած բացատրության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

«Հայկական միրգ» բաժնետիրական ընկերությանը 7 մլն ԱՄՆ դրամ փոխառությունը տրվելու է 10 տարի ժամկետով, որից 3-ը՝ արտոնյալ, տարեկան 1.5% տոկոսադրույքով (այսինքն՝ 7 մլն ԱՄՆ դրամ փոխառությունը կառավարությանը կվերադարձվի ավելի խիստ պայմաններով, քան այն պայմանները, որով Հայաստանի Հանրապետության կառավարությունը վերադարձնելու է իր փոխառությունը Հիմնադրամին): Բացի դրանից, «Հայկական միրգ» բաժնետիրական ընկերության մասնավորեցման շնորհիվ պետությունը կվերականգնի կանոնադրական կապիտալում իրականացված իր ներդրումը եւ, ավելին, կարող է ունենալ նկատելի եկամուտ: Դրամաշնորհն օգտագործվելու է ընկերության գործառնական ծախսերի իրականացման համար՝ մինչեւ այգիների պտղատու դառնալն ու որոշակի շահույթ ապահովելը, եւ մասնավորեցման ընթացքում այդ գումարների վերականգնման խնդիր չի առաջանա:

«Հայկական միրգ» բաժնետիրական ընկերությանը փոխառության միջոցներից հատկացվող 6 720 000 ՓՀՀ-ին համարժեք գումարն ամբողջությամբ ծախսվելու է այգիների հիմնադրման եւ այդ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման նպատակով, իսկ 330 000 ՓՀՀ-ին համարժեք գումարը նախատեսված է գործառնական եւ պահպանման ծախսերի, ինչպես նաև՝ միջազգային խորհրդատվության ձեռքբերման համար:

Ծրագրով առաջին անգամ փորձ է արվում նորագույն տեխնոլոգիաներով արդյունաբերական այգեգործություն հիմնադրել Հայաստանի Հանրապետության երեք՝ Արագածոտնի, Տավուշի եւ Վայոց Ձորի մարզերում (թվով 36 համայնքներ): Նորագույն տեխնոլոգիաները ներառելու են՝

- այգիների կարիլային ոռոգման համակարգի ստեղծում.
- հեղուկ պարարտացման համակարգի կիրառում (նույն կարիլային համակարգի միջոցով ներարկվելու է նաև պարարտանյութը, ըստ նախնական հաշվարկների՝ նշված երկու համակարգերի համար 1 հա հաշվով ծախսվելու է 4000-4200 ԱՄՆ դրամ)։
- կարկտապաշտպան ցանցերի տեղադրում (1 հա հաշվով՝ շուրջ 5000 ԱՄՆ դրամ):

Նախնական փուլում ներկրվելու, իսկ հետագայում տեղում արտադրվելու են վիրուսազերծ արմատակալներ, որոնք ապահովելու են ծառերի առողջական վիճակը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև, որ «Հայկական միրգ» բաժնետիրական ընկերությունը պետք է միջնորդ հանգույց հանդիսանա պտուղների վերջնական արտադրողների եւ նշյալ պտուղներն օգտագործողների միջև (վերամշակող ընկերություններ, գյուղմթերքներ արտահանող ընկերություններ, առեւտրային ցանցեր, վերջնական սպառողներ): Վերջինս ենթադրում է, որ «Հայկական միրգ» բաժնետիրական ընկերու-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թյունը պետք է ունենա միջազգային չափորոշիչներին համապատասխան նախնական վերամշակման, տեսակավորման եւ սառեցման ժամանակակից համակարգեր, ինչը պետք է ստեղծվի Ծրագրի միջոցների հաշվին:

5. Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ.

ա) Համաձայնագրում մի շաբթ դրույթներ ձեւակերպված են անորոշ եւ ոչ հատակ, մասնավորապես, կապված.

- «Հայկական միրգ» բաժնետիրական ընկերության մասնավորեցման (այդ թվում՝ ժամկետների) հետ, որը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը սահմանված ընթացակարգերի պահանջներին խիստ համապատասխան։

- Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող ֆինանսական պարտավորությունների իրականացման կոնկրետ աղբյուրների, այդ թվում՝ Համաձայնագրի նախաբանի «Բ» կետով նախատեսված Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ)` միջազգային զարգացման հիմնադրամից (ՕՖԻԴ հիմնադրամ) Ծրագրի ֆինանսավորմանն աջակցության համար մոտ քսան միլիոն (20 000 000) ԱՄՆ դոլարի չափով ֆինանսական օժանդակություն ստանալու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին խիստ համապատասխան։

թ) «Հայկական միրգ» բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդում կառավարության ներկայացուցիչների կարգավիճակի հետ, որոնց նշանակումը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին խիստ համապատասխան։

Սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում բազմից անդրադարձել է վարկային միջոցներով ֆինանսավորվող ծրագրերի հատակության, այդ միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին։ Սույն գործով քննության առարկա Համաձայնագիրն առավել եւս պահանջում է լուրջ վերահսկողական համակարգ՝ միջոցների նպատակային օգտագործման եւ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու առումով։

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**։

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. 2010 թվականի նոյեմբերի 30-ին Հռոմում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի միջեւ «Գյուղական կարողությունների ստեղծման ծրագիր (ԳԿՍԾ)» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**8 ապրիլի 2011 թվականի  
ՍՊԸ-952**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱծ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԷԼ.-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ»  
N 7963-ԱՄ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՍՏԱՎՅԱՎՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՎՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երեւան

8 ապրիլի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի,  
Մ. Թոփուզյանի (գեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի,  
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական  
ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախա-  
րարի խորհրդական Վ. Դանիելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահ-  
մանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դրներաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի  
հունվարի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վե-  
րակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջև «Էլ.-հասարա-  
կության եւ մրցունակության համար նորարարության ծրագիր» N7963-ԱՄ  
վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հա-  
յաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխա-  
նության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության աղիք է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 16 մարտի 2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Լսելով սույն գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջեւ «Էլ.-հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիր» N7963-ԱՄ վարկային համաձայնագիրը /այսուհետ՝ համաձայնագիր/ ստորագրվել է 2011թ. հունվարի 26-ին Երեւանում՝ ՀՀ ֆինանսների նախարարի կողմից:

Սույն համաձայնագրի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետությունում վերացնել մրցունակ Էլ.-հասարակության և ձեռնարկությունների համար նորարարության սահմանափակումները՝ ամրապնդելով դրանց հիմքում ընկած ենթակառուցվածքները և նպաստավոր միջավայրը:

Համաձայնագրի 1-ին լրացման մեջ նկարագրված ծրագրի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը /այսուհետեւ՝ Բանկ/ համաձայնում է սահմանված պայմաններին համապատասխան Հայաստանի Հանրապետությանը /այսուհետեւ՝ Վարկառու/ տրամադրել քսանչորս /24/ միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք գումար:

Համաձայնագիրը բաղկացած է 6 հոդվածներից, ինչպես նաև դրա անբաժանելի մասը կազմող 3 լրացումներից և մեկ հավելվածից:

Համաձայնագրի ընդիանուր պայմանները սահմանված են համաձայնագրի հավելվածում:

Քննության առարկա համաձայնագրի 3-րդ հոդվածը և դրա 1-ին լրացումը վերաբերում են ֆինանսավորման ենթակա ծրագրի նկարագրությանը: Ծրագիրը բաղկացած է երեք մասերից.

I. Էլ.-հասարակության ենթակառուցվածքների զարգացում, որն իր հերթին ընդգրկում է՝

ա. ազգային լայնաշերտ ինտերնետային համացանց և կառավարական ցանց,

բ. «թվային քաղաքացի» ծրագիր,

գ. «համակարգիչ բոլորի համար» ծրագիր:

Ծրագրի սույն բաղադրիչի նպատակն է ավելացնել լայնաշերտ կապի մատչելիությունը քաղաքացիների, ձեռնարկությունների և պետական մարմինների համար, նրանց զինել էլեկտրոնային գործառնությունների

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ընթացքում նույնականացման եւ վավերացման գործիքով, ինչպես նաև խթանել հաճակարգիչների եւ էլ. ծառայությունների մատչելիությունը քաղաքացիների համար:

II. Զեռնարկությունների նորարարության խթանում, որը ներառում է.

ա. ֆինանսական օժանդակություն նորարարությանը՝ գիտելիքներ եւ տեխնոլոգիաների կիրառում պահանջող ընկերություններում, այդ թվում՝ գաղափարների ձեւավորման փոքր դրամաշնորհների տրամադրում, ինչպես նաև աջակցություն վեճչուրային հիմնադրամի ստեղծմանը,

բ. տեխնիկական աջակցություն Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի ձեւավորմանը,

գ. տեխնիկական աջակցություն տեղեկատվական տեխնոլոգիաների (գիտելիքների) կիրառում պահանջող ոլորտների զարգացմանը:

Ծրագրի երկրորդ բաղադրիչի հիմնական նպատակն է խթանել գիտելիքի եւ տեխնոլոգիական հենք ունեցող ձեռնարկությունների ստեղծումը, աճն ու մրցունակություննը, որը կստեղծի բարենպաստ միջավայր գիտելիքի եւ տեխնոլոգիական հենք ունեցող ընկերությունների համար:

III. Ծրագրի կառավարում:

Սահմանված է, որ Ծրագրի ուժի մեջ մտնելուն հաջորդող մեկ ամսվա ընթացքում Վարկառուն պետք է ստեղծի եւ մինչեւ ծրագրի ավարտը պահպանի Ծրագրի կառավարման մարմին՝ Ծրագրի իրականացման գործում ներգրավված բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչներից, որը կապահովի Ծրագրի գործողությունների իրականացման քաղաքականության ուղղորդումն ու համակարգումը:

Բացառությամբ Բանկի հետ ձեռք բերված այլ համաձայնության՝ մինչեւ Ծրագրի ավարտը Վարկառուն պետք է պահպանի ԷԿԵՆԳ-ը, ԶԻՀ-ը եւ ԱՄՀ-ն եւ ապահովի, որ ամբողջ ընթացքում դրանք գործեն Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ու պատշաճ եղանակով, աշխատակազմով ու ֆինանսական ռեսուրսներով, որոնք բավարարում են Բանկի պահանջները:

Համաձայնագրի 3-րդ հոդվածը նախատեսում է, որ Վարկառուի եւ Բանկի միջև այլ համաձայնության բացակայության դեպքում, Վարկառուն պետք է ապահովի, որ Ծրագրին իրականացվի սույն համաձայնագրի 2-րդ լրացման դրույթներին համապատասխան: Հարկ է ընդգծել, որ համաձայնագրի 2-րդ լրացումը բաղկացած է չորս բաժիններից, այն է՝ Ծրագրի իրականացման միջոցառումներ, Ծրագրի մոնիթորինգ, հաշվետվություններ եւ գնահատում, գնումներ, վարկի գումարների առհանման պայմաններ:

Համաձայն նշված լրացման՝ Վարկառուն պարտավոր է իրականացնել ինստիտուցիոնալ, ինչպես նաև հակառորդացիոն միջոցառումներ: Իսկ Ծրագրի իրականացումը պետք է կատարվի բնապահպանական այն

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

շրջանակի դրույթներին համապատասխան, որը հանդիսանում է գործառնական ընթացակարգերի անբաժանելի մասը:

Վարկառուն պարտավոր է պահպանել գործառնական ընթացակարգերը եւ պատշաճորեն կատարել դրանցով ստանձնած իր բոլոր պարտավորությունները եւ չպետք է փոխանցի, փոփոխի, ուժը կորցրած ճանաչի գործառնական ընթացակարգերը կամ իրաժարվի դրանցից՝ առանց նախապես բանկի հավանությունն ստանալու:

Համաձայնագրի 2-րդ լրացման 2-րդ բաժնով սահմանվում է, որ Վարկառուն պետք է մոնիթորինգի ենթարկի եւ գմահատի Ծրագրի առաջընթացը եւ նախապատրաստի Ծրագրի հաշվետվորթյունները, վարի կամ հանձնարարի վարել ֆինանսական կառավարման համակարգը՝ համաձայնագրի ընդհանուր դրույթներին համապատասխան: Բացի դրանից, վարկառուն պետք է պատրաստի եւ յուրաքանչյուր օրացուցային եռամսյակի ավարտից ոչ ուշ, քան 45-րդ օրվա ընթացքում Բանկին ներկայացնի միջանկյալ, առողիտ չանցած ֆինանսական հաշվետվորթյուններ, իսկ ընդհանուր պայմանների դրույթներին համաձայն պետք է առողիտի ենթարկի իր ֆինանսական հաշվետվորթյունները: Ֆինանսական հաշվետվորթյունների յուրաքանչյուր առողիտ պետք է ընդգրկի Վարկառուի մեկ ֆինանսական տարվա ժամանակահատված, որն սկսվում է այն ֆինանսական տարվանից, որում կատարվել է առաջին առհանումը Ծրագրի համար նախապատրաստական կանխավճարից:

Վարկառուն պետք է ապահովի, որ ԱՄՀ-ն կամ ՄՖՀ-երը կամ վենչուրային հիմնադրամը ենթաֆինանսավորում տրամադրեն շահառուներին՝ գործառնական ընթացակարգերում սահմանված պայմաններին, համապատասխանության չափանիշներին եւ ընթացակարգերին համապատասխան:

Վարկառուն պետք է ապահովի, որ համապատասխանաբար ԱՄՀ-ն կամ ՄՖՀ-երը կամ վենչուրային հիմնադրամը յուրաքանչյուր ենթաֆինանսավորում տրամադրեն յուրաքանչյուր շահառուի հետ կնքված ենթաֆինանսավորման համաձայնագրով՝ գործառնական ընթացակարգերում սահմանված պայմաններով:

Համաձայնագրի 2-րդ լրացման 3-րդ բաժինն անդրադառնում է գնումներին առնչվող հարցերին: Մասնավորապես, նախատեսված է, որ Ծրագրի համար պահանջվող եւ վարկի միջոցներից ֆինանսավորման ենթակա բոլոր ապրանքները եւ աշխատանքները պետք է գնվեն գնումների ուղեցույցի պահանջներին համաձայն, կիրառվեն ապրանքների եւ աշխատանքների գնման առանձին մեթոդներ: Իսկ գնումների պլանը պետք է սահմանի այն պայմանագրերը, որոնք պետք է նախապես ուսումնասիրվեն Բանկի կողմից, իսկ մյուս բոլոր պայմանագրերը ենթակա են Բանկի կողմից հետագա ուսումնասիրության:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ըստ համաձայնագրի 2-րդ հոդվածի՝ Վարկառուն կարող է առհանել վարկի միջոցները սույն համաձայնագրի 2-րդ լրացման 4-րդ բաժնի պայմաններին համապատասխան։ Վերջինս սահմանում է վարկի գումարների առհանման ընդհանուր պայմանները, առանձնանշում է թույլատրելի ծախսերի այն կատեգորիաները, որոնք կարող են ֆինանսավորվել վարկի միջոցների հաշվին։ Իսկ վարկային միջոցների առհանման ժամանակաշատվածը 2014թ. դեկտեմբերի 31-ն է։

Համաձայնագրի 2-րդ հոդվածը սահմանում է, որ վարկի մայր գումարը պետք է մարզի 3-րդ լրացման մեջ նախատեսված մարման ժամանակացույցին համապատասխան։ Վճարման ժամկետներն են յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ը և հուլիսի 15-ը։ Վարկառուի կողմից վճարվելիք սկզբնավճարը պետք է հավասար լինի վարկի գումարի մեկ քառորդ տոկոսին /0.25%/: Համաձայնագրի հավելվածը նվիրված է համաձայնագրի ընդհանուր պայմաններին, ինչպես նաև մեկնարանված են առանձին սահմանումների /հապավումների/ բովանդակությունը կամ նշանակությունը։

Ըստ համաձայնագրի 5-րդ հոդվածի՝ դրա ուժի մեջ մտնելու վերջնաժամկետ է սահմանված համաձայնագրի ստորագրմանը հաջորդող իննառողջությունը (90) օրը։

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկանքի՝ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է համապատասխան ֆինանսական պարտավորություններ։

Համաձայնագրի հիմքում դրված ծրագրային դրույթների, համաձայնագրի իրացման կառուցակարգերի, ֆինանսական միջոցների հատկացման ու օգտագործման, ինչպես նաև վարկային ռեսուրսների մարման ընթացակարգերի ուսումնախրությունը վկայում են, որ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումը կարող է երաշխավորվել միայն հստակ ու գործուն վերահսկողական համակարգի առկայության պայմաններում։

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**։

1. 2011 թվականի հունվարի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Էլ.-հասարակության եւ մրցունակության համար նորարարության ծրագիր» N 7963-ԱՄ վարկային համաձայնագրում ամրագրված պար-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**8 ապրիլի 2011 թվականի  
ՍՊԸ-953**

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՍԵՓ ԳԱԼՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԽՄԱՆ ՎՐԱ  
«ՄՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԻ 19-ՐԴ ՀՈԴՎԱՃԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

12 ապրիլի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Հովսեփ Գալստյանի դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության արդիք քաղաքացի Հ. Գալստյանի՝ 12.11.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան նուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը եւ գործում առկա մյուս փաստարդերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Սնանկության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կողմից 2006թ. դեկտեմբերի 25-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007թ. հունվարի 22-ին եւ ուժի մեջ է մտել 2007թ. փետրվարի 10-ից: Օրենքի ուժի մեջ մտնելու պահից վերջինիս 107-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով ուժը կորցրած է ճանաչվել «Անվճարունակության (սնանկության) մասին» Հայաստանի Հանրապետության 2003թ. դեկտեմբերի 17-ի ՀՕ-17-Ն օրենքը:

«Անանկության մասին» ՀՀ օրենքի՝ «Պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու հետևանքները» վերտառությամբ 19-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կասեցվում են պարտապանի կանոնադրական (քաժնեհավաք, փայտահավաք) կապիտալում մասնակցություն ունեցող անձանց՝ օրենքով եւ պարտապանի կանոնադրությամբ սահմանված այն լիազորությունները, որոնք պայմանավորված են այդ մասնակցությամբ: Նշված լիազորությունների իրականացումը կարող է բույլատրվել դատարանի որոշմամբ՝ ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմողը դիմել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Ֆրունզիկ Գ-ալստյանի եւ «Հայզազարդ» ՓԲԸ-ի՝ օրենքի խախտմամբ կնքված խոշոր գործարքն անվավեր ճանաչելու պահանջով: Նշված պահանջի շրջանակներում դիմողը պահանջել է անվավեր ճանաչել «ԱՄՖ» ՍՊԸ-ի եւ «Հայզազարդ» ՓԲԸ-ի միջեւ 01.09.2007 թվականին եւ 2008 թվականին կնքված՝ պարտքի մարման ժամանակացույց սահմանելու մասին պայմանագրերը, 03.12.2007 թվականին կնքված՝ փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը: ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.12.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է: Հայցը բավարարելիս դատարանը, հիմք ընդունելով, ի թիվս այլնի, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի դրույթները, առաջնորդվելով **Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժի եւ անմիջական գործողության սահմանադրական սկզբունքով**, «Անանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներն անուղղակիորեն մեկնաբանել է այնպես, որ վերջիններս չեն ներառում ընկերության մասնակցի դատական պաշտպանության իրավունքը:

ՀՀ վերաբննիչ քաղաքացիական դատարանը 08.04.2010 թվականին բեկանել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վերը նշված վճիռը եւ փոփոխել այն՝ հայցը մերժել: Հայցը մերժելիս ՀՀ վերաբննիչ քաղաքացիական դատարանը «Անանկության մասին» ՀՀ օրեն-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թի 19-րդ հոդվածի 3-րդ մասի դրույքներն անուղղակիորեն մեկնաբանել է այնպես, որ վերջիններս ներառում են նաև ընկերության մասնակցի բոլոր լիազորությունները, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքը, որը տվյալ դեպքում սահմանված է «ԱՍՖ» ՍՊԸ-ի կանոնադրության 4.2-րդ կետում:

ՀՀ վճարեկ դատարանն իր՝ 16.06.2010թ. թիվ ԿԴ/0630/02/09 որոշմամբ, վերահաստատելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ վերը նշված որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, վերադարձրել է նշված որոշման դեմ բերված վճարեկ բողոքը:

3. Դիմողը գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 8, 18, 19 և 31-րդ հոդվածներին: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներին հակասությունը դիմողը հիմնավորում է նրանով, որ օրենքի վիճարկվող դրույքները խոչընդոտում են դիմողի՝ «Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընդունված եւ գործող օրենքներին եւ այլ իրավական ակտերին հակասող որոշումների գանգատարկման նպատակով դատարան դիմելու իրավունքի իրացումը»:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 8 և 31-րդ հոդվածներին հակասությունը դիմողը հիմնավորում է նրանով, որ օրենքի վիճարկվող դրույքները խոչընդոտում են դիմողի՝ «իր սեփականություն հանդիսացող ընկերության բաժնեմասն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու իրավունքը»: Մասնավորապես, հղում կատարելով «Սահմանափակ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «դ» կետին՝ դիմողը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույքները խոչընդոտում են դիմոցի՝ օրենքով եւ ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով իր բաժնեմասն ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց օտարելու իրավունքը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույքները չեն հակասում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Որպես իր փաստարկի հիմնավորում՝ պատասխանողը գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի դրույքները ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների իրացման երաշխիքների շրջանակներում գնահատելիս յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել այդ ինստիտուտի յուրահատկությունները, սնանկության հարաբերությունները կարգավորող օրենսդրության հիմքում ընկած սկզբունքներն ու այդ

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ոլորտում առաջացող հարաբերությունների կարգավորման առանձնահատկությունները:

Հստ պատասխանողի՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասում տեղ գտած սահմանափակումը գործում է սնանկության գործընթացի այլ մասնակիցների նկատմամբ կիրառվող բազմաթիվ այլ սահմանափակումների համակարգում, որոնց օրենտրուական ամրագլումն ու կիրառումն ապահովում է սնանկության ինստիտուտի հիմնական նպատակի իրականացումը, այն է՝ պարտապան իրավաբանական կամ ֆիզիկական անձի բոլոր պարտատերերի իրավահավասար մասնակցությունը սնանկության գործընթացին եւ լուծարային զանգվածի արդարացի բաշխում բոլոր պարտատերերի միջեւ՝ պարտատերերի պահանջների բավարման հաջորդականությանը համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո «շարունակվում է սնանկության գործընթացը՝ «դատական խիստ հսկողության ներքո», պատասխանող գտնում է, որ այդ ընթացքում «բացառվում է ... սնանկության գործընթացի բոլոր մասնակիցների կողմից այդ գործընթացին առնչվող որոշումների անմիջական բողոքարկումը, սակայն հնարավորություն է տալիս դրանք բողոքարկելու գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում»:

Անդրադառնալով դիմողի փաստարկներին՝ կապված օրենքի վիճարկվող դրույթների եւ սեփականության իրավունքի միջեւ հակասության հետ, եւ հղում կատարելով օրենքի 82-րդ հոդվածին, որը նախատեսում է ընկերության մասնակցի իրավունքն ընկերության լուծարման դեպքում բաժին ստանալու ընկերության մնացած գույքից՝ որպես վերջին հերթի պարտատեր, պատասխանող գտնում է, որ տվյալ նորմի առկայությամբ «ստեղծվում են նաև ՀՀ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համարժեք մեխանիզմներ իրավաբանական անձի մասնակիցների սեփականության իրավունքի պաշտպանության համար»:

5. Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի եւ 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները՝ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւուրում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության՝ «օրենքով եւ պարտապանի կանոնադրությամբ սահմանված այն լիազորությունները, որոնք պայմանավորված են այդ մասնակցությամբ» բառակապակցության սահմանադրամիավական իմաստի բացահայտման, ինչպես նաև կիրառման պրակտիկայում դրսեւորված մոտեցումների գնահատման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորման տրամադրանությունը:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

6. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը վկայում է, որ օրենքն ուղղված է ընկերության պարտատերերի շահերի պաշտպանությանը, որը դրսեւորվում է, նախնական, անբարենպաստ ֆինանսական դրույթուն ունեցող ընկերությունների ֆինանսական առողջացմամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ընկերության գույքի հաշվին ընկերության պարտատերերի պահանջների բավարարմամբ:

Նշված տրամաբանությանը համահունչ, օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Ժամանակավոր կառավարչի կամ պարտատիրոջ միջնորդությամբ դատարանի որոշմամբ կարող է կիրառվել պարտապանի կամ նրա տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման ցանկացած անհրաժեշտ սահմանափակում, եթե դրանց չկիրառման արդյունքում կարող է էավես նվազել պարտապանի գույքը»: Օրենքի՝ «Պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը (նորատորիում)» վերտառությամբ 39-րդ հոդվածը սահմանում է այնպիսի իրավակարգավորում, որը նույնական ուղղված է պարտապանի գույքի էական նվազեցում բույլ չտալուն:

Վերը նշված տրամաբանությունից է բխում նաև օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը, որը ելակետ է ընդունում այն, որ պարտապանի գույքային իրավունքների սահմանափակմանն ուղղված անգամ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ԴԱՀԿ ծառայության կողմից ենթակա չեն կատարման:

7. Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության մեջ միայն պարտապանի կանոնադրական կապիտալում մասնակցությամբ պայմանավորված լիազորությունների շեշտադրման հանգամանքը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը դրանով նկատի է ունեցել ընկերության մասնակցի իրավունքների եւ պարտականությունների միանգամայն սահմանափակ ծավալ: Ընդ որում, ընկերության մասնակցի իրավունքների եւ պարտականությունների վերը նշված սահմանափակ ծավալում օրենսդիրը նկատի է ունեցել ընկերության մասնակցի այն իրավունքներն ու պարտականությունները, որոնց իրականացումը կարող է հանգեցնել պարտապանի գույքի էական նվազմանը, կամ պարտատերերի իրավունքների եւ օրինական շահերի խարարմանը, կամ կարող է խոչընդոտել պարտատերերի իրավաչափ պահանջների բավարարմանը:

Վերը նշված իրավական դիրքորոշման համար հիմք են հանդիսանում նաև 2007թ. փետրվարի 10-ին ուժը կորցրած՝ «Անվճարունակության (սնանկության) մասին» Հայաստանի Հանրապետության 2003թ. դեկտեմբերի 17-ի ՀՕ-17-Ն օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության հա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մեմատական վերլուծության արդյունքները: Նշված համեմատական վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Անվճարունակության (սնանկության) մասին» Հայաստանի Հանրապետության 2003թ. դեկտեմբերի 17-ի ՀՕ-17-Ն օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կասեցվում են պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալին տիրապետող անձանց եւ պարտապանի դեկավարի՝ օրենքով եւ պարտապանի կանոնադրությամբ սահմանված լիազորությունները»: Մինչդեռ օրենսդրական բարեփոխումների արդյունքում ընդունված եւ միեւնույն իրավակարգավորման առարկան ունեցող՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության մեջ, ի տարբերություն «Անվճարունակության (սնանկության) մասին» Հայաստանի Հանրապետության 2003թ. դեկտեմբերի 17-ի ՀՕ-17-Ն օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի, օրենսդիրը, անդրադառնալով ընկերության մասնակցի լիազորություններին, հատուկ շեշտադրել է «այն» եւ «պայմանավորված են» բառերը՝ ընդգծելու համար ընկերության մասնակցի իրավունքների եւ պարտականությունների սահմանափակման ենթակա ծավալը:

Վերոնշյալ իրավական դիրքորոշման հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության՝ «օրենքով եւ պարտապանի կանոնադրությամբ սահմանված այն լիազորությունները, որոնք պայմանավորված են այդ մասնակցությամբ» բառակապակցությունը չի ներառում դատական պաշտպանության իրավունքն ընդհանրապես, եւ իրավակիրառական պրակտիկայում տվյալ բառակապակցությանը պետք է տալ սահմանափակ մենաբանություն, որպեսզի չխարարվի այդ իրավունքի բուն էությունը:

Նման եզրահանգման համար հիմք են հանդիսանում նաեւ հետեւյալ հանգամանքները.

ա) ընկերության մասնակցի՝ որպես իրավունքի հատուկ սուրյեկտի կարգավիճակը չի բացառում նույն անձի՝ որպես իրավունքի ընդհանուր սուրյեկտի կարգավիճակը, հետեւաբար եւ՝ տվյալ սուրյեկտի սահմանադրական իրավունքները եւ պարտականությունները, ներառյալ՝ դատական պաշտպանության իրավունքը՝ հաշվի առնելով նշված իրավունքների սահմանափակումները եւ դրանց բույլատրելի շրջանակները,

բ) Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասը դատական պաշտպանության իրավունքը չի դիտարկում որպես սահմանափակման ենթակա իրավունք:

Սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-652, ՍԴՈ-665, ՍԴՈ-673, ՍԴՈ-690, ՍԴՈ-719 եւ մի շարք այլ որոշումներում անդրադառնալով դա-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տական պաշտպանության իրավունքի սահմանադրափրավական բովանդակության բացահայտմանը, մասնավորապես, իրավական դիրքորոշումներ է արտահայտել այն մասին, որ անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակն իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության եւ այդպիսի խախտումների հետեւանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: **Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ,** եւ արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է:

8. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակիրառական պրակտիկայի գնահատման շրջանակներում անդրադառնալով տվյալ գործով կայացված դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում արձանագրել, որ տվյալ գործով դատական քննության արդյունքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության դրույթին տրվել է լայն մեկնաբանություն, ինչի հետեւանքով օրենքի վիճարկվող դրույթներում «լիազորությունները» բառն ընկալվել է համընդգրկուն իմաստով՝ ներառելով ընկերության մասնակցի՝ օրենքով եւ ընկերության կանոնադրությամբ սահմանված բոլոր իրավունքները եւ պարտականությունները, **ինչը, սակայն, պայմանավորված չէ օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրափրավական բովանդակությամբ:**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Յ .**

1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**12 ապրիլի 2011 թվականի  
ՍԴԱ-954**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ ԲԲՅՈՒՆԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ Ի ԴԵՄՍ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ, ՄԻԶԵՎ

ՓՈԽԸՆԹԵՐՆԱԾԱՌԱՆ ՀՈՒՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ՝

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

14 ապրիլի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի փետրվարի 15-ին Քրյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական համանաժողովի՝ ի դեմս Եվրոպական միության, միջնա կոխըմբոնման հուշագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության աղիք է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նա-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Խագահի ներկայացուցի բացատրությունը, հետազոտելով փոխըմբռնման հուշագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի՝ ի դեմս Եվրոպական միության, միջեւ փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) ստորագրվել է 2011 թվականի փետրվարի 15-ին:

Հուշագիր համաձայն՝ Եվրոպական միության խորհուրդը Հայաստանի Հանրապետությանն է տրամադրելու մինչեւ 100 միլիոն եվրո գումարի չափով մակրոֆինանսական աջակցություն, որից 35 միլիոն եվրոն՝ դրամաշնորհի տեսքով (այսուհետ՝ Դրամաշնորհ), եւ 65 միլիոն եվրո վարկ (այսուհետ՝ Վարկ): Այդ աջակցության նպատակն է օգնել ՀՀ կառավարությանը լուծել համաշխարհային տնտեսական եւ ֆինանսական ճգնաժամի հետեւանքով 2008 թվականի վերջին եւ 2009 թվականին առաջացած արտաքին ֆինանսական խնդիրները, որոնք ի հայտ էին եկել տնտեսական անկման պատճառով, ինչպես նաև լրացնել այն ռեսուրսները, որոնք տրամադրվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաստատությունների եւ երկկողմն դրամաշնորհի կողմից՝ ի աջակցություն տնտեսական կայունացմանը, բարեփոխումների ծրագրի իրականացմանն ու տնտեսական անկման հետեւանքով առաջացած սոցիալական դժվարությունների լուծմանն ուղղված ջանքերի:

Ըստ Հուշագրի՝ աջակցության գումարները կտրամադրվեն երկու մասնավճարով՝ կախված Արժույթի միջազգային հիմնադրամի եւ Հայաստանի Հանրապետության միջեւ ձեռք բերված՝ Ընդարձակ ֆինանսավորման համակարգի եւ Ընդարձակ վարկավորման համակարգի վերաբերյալ պայմանագրվածության կամ դրանց հաջորդող պայմանավորվածությունների իրականացման բավարար առաջընթացից, ինչպես նաև տնտեսական կայունացման եւ կառուցվածքային բարեփոխումներում ձեռք բերված առաջընթացի վերաբերյալ՝ Եվրոպական միության անունից հանդես եկող Եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) դրական գնահատականից: Ընդ որում, առաջին մասնավճարը կտրամադրվի Հուշագրի ուժի մեջ մտնելուց հետո առաջին օրվանից ոչ շուտ: Երկրորդ մասնավճարը կտրամադրվի նախորդ մասնավճարի տրամադրումից առնվազն 3 ամիս հետո՝ հաշվի առնելով այլ դրամաշնորհի կողմից Հայաստանի Հանրապետությանը հատկացվող ֆինանսական աջակցության արդյունավետ կենտրոնացումը, ինչպես նաև հետագա ֆինանսական կարիքների զարգացումը:

Ըստ Հուշագրի 11-րդ հոդվածի՝ մակրոֆինանսական աջակցությունը կիրականացվի այն ընկալմամբ, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները կշարունակեն պահպանել իրավունքի գերակայությունը, ժողովրդավարությունը եւ կիարգեն մարդու իրավունքները:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

2. Հուշագրում սահմանված են Դրամաշնորհի եւ Վարկի մասնավճարների տրամադրման կարգն ու պայմանները: Մասնավորապես, ըստ Հուշագրի 5-րդ հոդվածի՝ մասնավճարների տրամադրումն իրականացվելու է կողմերի միջև ստորագրված իրավական պարտավորության՝ համաձայնագրերի հիման վրա, իսկ մասնավճարների վերաբերյալ որոշումը կայացնելու է Եվրոպական միության բյուջեի հարցերով գրավող մարմինը: Դրամաշնորհն ու Վարկը, ըստ Հուշագրի 6-րդ հոդվածում նախատեսված իրավապայմանի, ենթակա է փոփոխացման ՀՀ կենտրոնական բանկ, որը գործելու է Հայաստանի անունից՝ որպես գործակալ (այսուհետ՝ Գործակալ):

Տրամադրուղ մակրոֆինանսական աջակցության կառավարման նպատակով Հայաստանի Հանրապետության եւ Գործակալի վարչական ընթացակարգերի ու ֆինանսական շրջանառության օպերատիվ, ինչպես նաև աջակցության փաստացի գնահատման գործառույթներն ստանձնելու է Հանձնաժողովը՝ ի դեմս իր գործակալների, փորձագետների եւ լիազոր ներկայացուցիչների:

Ըստ Հուշագրի 4-րդ, 7-րդ եւ 13-րդ հոդվածների՝ այդ փաստաթղթի անբաժան մասը կազմող 1-ին եւ 2-րդ հավելվածներում համապատասխանաբար ներկայացված են մակրոֆինանսական աջակցության մասնավճարների տրամադրման նպատակով Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կառուցվածքային բարեփոխումների գնահատման չափորոշիչները, ինչպես նաև Հանձնաժողովին տրամադրման ենթակա ցուցանիշների եւ հաշվետվության բնույթն ու կառուցվածքը:

3. Հուշագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները:

- նախքան երկրորդ մասնավճարի հատկացումը, Հանձնաժողովին տրամադրել համապատասխան մասնավճարին կից պայմանների պահպանման մասով կատարման վերաբերյալ հայտարարություն,

- ժամանակին եւ ամբողջությամբ կատարել Եվրոպական միության կողմից տրամադրված կամ երաշխավորված վարկերից բխող ֆինանսական պարտավորությունները,

- Հանձնաժողովին տրամադրել համապատասխան ամբողջ տեղեկատվությունը՝ ֆինանսական եւ տնտեսական իրավիճակի մոնիթորինգի ու կառուցվածքային բարեփոխումներում առաջընթացի գնահատման վերաբերյալ,

- Հանձնաժողովի հետ պատշաճ կերպով ապահովել սերտ համագործակցություն:

Հուշագրի 12-րդ, 14-րդ եւ 15-րդ հոդվածներում նախատեսված են դրույթներ՝ մակրոֆինանսական աջակցության գործողության ժամկետի, դրա երկարածզման, հուշագրի՝ ուժի մեջ մտնելու եւ փոփոխության պայմանների վերաբերյալ:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Հուշագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված ՀՀ արտաքին քաղաքականության սկզբունքներից եւ պետության առջեւ դրված սահմանադրական այլ խնդիրներից:

Եմելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2011 թվականի փետրվարի 15-ին Բրյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի՝ ի դեմս Եվրոպական միության, միջեւ փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### **ՆԱԽԱԳԱՀՈՂ**

### **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**14 ապրիլի 2011 թվականի  
ՍՊ.Օ-955**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ Ի ԴԵՄՍ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ, ՄԻԶԵՎ ՄԻՆՉԵՎ 35 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈՅԻ  
ԶԱՓՈՎ ԴՐԱՄԱՆԱՐՀԻ ՀԱՄԱՅՆՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**14 ապրիլի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարույրոնյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուղյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի դեկտեմբերի 22-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի՝ ի դեմս Եվրոպական միության, միջեւ մինչեւ 35 միլիոն եվրոյի չափով դրամաշնորհի համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության նախագահի՝ 2011 թվականի ապրիլի 4-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Լսելով սույն գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով 2010 թվականի դեկտեմբերի 22-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի՝ ի դեմս Եվրոպական միության, միջեւ մինչեւ 35 միլիոն եվրոյի չափով դրամաշնորհի համաձայնագիրը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի՝ ի դեմս Եվրոպական միության, միջեւ մինչեւ 35 միլիոն եվրոյի չափով դրամաշնորհի համաձայնագիրը (Համաձայնագիր) ստորագրվել է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին՝ Բրյուսելում:

2. Համաձայնագրով Եվրոպական միությունը Խորհրդի (2009/890/ԵՀ) որոշման եւ 2011 թվականի փետրվարի 15-ին Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի՝ ի դեմս Եվրոպական միության, միջեւ կնքված փոխըմբռնման հուշագրում (Փոխըմբռնման հուշագիր) սահմանված պայմանների համաձայն Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է մինչեւ 35 միլիոն եվրոյի չափով դրամաշնորհ (Դրամաշնորհ)՝ ուղղված արտաքին ֆինանսական սահմանափակումները նվազեցնելուն, կայուն վճարային հաշվեկշռի աջակցմանը եւ Հայաստանի արտարժույթի պահուատների վիճակի պահպանմանը: Առաջին մասնավճարը կկազմի 14 միլիոն եվրո, իսկ երկրորդ մասնավճարը՝ մինչեւ 21 միլիոն եվրո: Հիշյալ գումարների տրամադրումը կախված կլինի Արժույթի միջազգային հիմնադրամի եւ Հայաստանի Հանրապետության միջեւ ձեռք բերված՝ ընդարձակ ֆինանսավորման համակարգի եւ ընդարձակ վարկափորման համակարգի ներքո պայմանավորվածության կամ դրանց հաջորդող պայմանավորվածությունների իրականացման բավարար առաջընթացից, ինչպես նաև տնտեսական կայունացման եւ կառուցվածքային բարեփոխումներում ձեռք բերված առաջընթացի վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի (Եվրոպական միության անունից) դրական գնահատականից: Դրամաշնորհի երկրորդ մասնավճարի հատկացումը կախված կլինի Հայաստանի իշխանությունների հետ համագործակցությամբ իրականացվող Հանձնաժողովի ուսումնասիրությունից՝ կապված այն առաջընթացի հետ, որն արձանագրվել է Փոխըմբռնման հուշագրում համաձայնեցված կառուցվածքային բարեփոխումների չափորոշիչների մասով: Սույն աջակցության շրջանակներում տրամադրվելիք գումարի չափը հաշվարկելիս պատշաճ կերպով հաշվի կառնվեն այլ դոնորների կողմից Հայաստանին տրամադրվելիք ֆինանսական աջակցության արդյունավետ ներգրավումը, ինչպես նաև հետագա ֆինանսական կարիքները:

Դրամաշնորհի գումարը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի՝ Եվրո-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

յով բացված հաշվին, որը պահվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում եւ գործում է Հայաստանի անունից՝ որպես գործակալ:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

ա) Դրամաշնորհն օգտագործել բացառապես Համաձայնագրով եւ Փոխընդունման հուշագրով սահմանված պայմանների համար.

բ) Վճարել բոլոր ծախսերը, որոնք առաջացել են Դրամաշնորհի ֆինանսական գործարքների մասով.

գ) հայտարարել, որ Համաձայնագրի շրջանակներում Եվրոպական հանձնաժողովի կողմից Հայաստանին կատարված բոլոր վճարումներն ու փոխանցումները, ինչպես նաև Համաձայնագիրը, ենթակա չեն հարկման որևէ հարկատեսակով Համաձայնագրի գործողության ամբողջ ընթացքում:

Համաձայնագրով սահմանվում են նաև տեսչական ստուգումների, խարդախության կանխարգելման, առողջտի, Համաձայնագրի դադարեցման, կողմերի միջև վեճերի կարգավորման, Համաձայնագրի ուժի մեջ մտնելու եւ ավարտի հետ կապված հարաբերությունները:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8 եւ 9-րդ հոդվածների դրույթներին, կոչված են զարգացնելու կողմերի միջեւ բարիդրացիական, փոխահավետ հարաբերություններ, ինչպես նաև ստեղծելու իրավական ու ֆինանսական բարենպատ պայմաններ տնտեսական գործունեության ազատության եւ ազատ տնտեսական մրցակցության ծավալման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2010 թվականի դեկտեմբերի 22-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի՝ ի դեմս Եվրոպական միության, միջեւ մինչեւ 35 միլիոն եվրոյի չափով դրամաշնորհի համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**14 ապրիլի 2011 թվականի  
ՍՊԸ-956**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
65 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈՅԻ ՉԱՓՈՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ և  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԲՅԵ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ.

Քաղ. Երեւան

14 ապրիլի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալյայանի, Ֆ. Թոխյանի,  
Մ. Թոփուլյանի (գեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական  
ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դրեաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի փետրվարի 17-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եւ Եվրոպական միության միջեւ 65 միլիոն եվրոյի չափով վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության աղիք է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 4 ապրիլի 2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Լսելով սույն գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եւ Եվրոպական միության միջեւ 65 միլիոն Եվրոյի չափով վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2011թ. փետրվարի 17-ին Լյուքսեմբուրգում՝ ՀՀ ֆինանսների նախարարի եւ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի կողմից:

Ըստ Համաձայնագրի նախարանի՝ Համաձայնագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ Վարկառու) տնտեսական կայունացմանը նպաստելու եւ վերջինիս վճարային եւ բյուջետային հաշվեկշիռը մեղմելու նպատակով, ինչպես սահմանված է Արժույթի միջազգային հիմնադրամի ընթացիկ ծրագրում:

2. Համաձայնագիրը բաղկացած է նախարանից, 3 հավելվածներից, որոնք Համաձայնագրի 12-րդ եւ 16-րդ հոդվածներին համապատասխան հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Համաձայնագրի անբաժանելի մաս են համարվում նաև (հոդված 12) Եվրոպական միության խորհրդի՝ Վարկառուին մակրոֆինանսական աջակցության տրամադրման մասին 05.12.2009թ. որոշումը, ինչպես նաև 2011թ. փետրվարի 15-ին Եվրոպական հանձնաժողովի /այսուհետ՝ Վարկառու/, Հայաստանի եւ ՀՀ կենտրոնական բանկի միջեւ կնքված՝ Վարկառուի կողմից կատարման ենթակա տնտեսական քաղաքականության պայմանների մասին Փոխըմբռնման հուշագիրը եւ Համաձայնագրի առնչությամբ կնքված ֆինանսական պայմանագրերը:

Զննության առարկա Համաձայնագրի նախարանում արձանագրված է, որ Վարկառուն ֆինանսական աջակցություն է հայցել Եվրոպական միությունից՝ պարտավորվելով կատարել տնտեսական քաղաքականության այն պայմանները, որոնք շարադրված են վերը նշված Փոխըմբռնման հուշագրում: Համաձայն Համաձայնագրի նախարանի՝ ՀՀ կենտրոնական բանկը պետք է գործի որպես Վարկառուի գործակալ:

Համաձայնագրի 1-ին հոդվածը սահմանում է, որ Վարկառուն Վարկառուին պետք է տրամադրի վարկ Եվրոյով՝ 65 միլիոն ընդհանուր հիմնագրում չափով, որը կհատկացվի երկու մասնաբաժնով՝ հիշատակված Որոշման, Փոխըմբռնման հուշագրում եւ սույն Համաձայնագրում սահմանված պայմաններին համապատասխան: Առաջին մասնաբաժնի

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հիմնագումարը կազմում է 26 միլիոն եվրո, իսկ երկրորդ մասնաբաժինը՝ 39 միլիոն եվրո: Երկրորդ մասնաբաժնի վճարումը չի կատարվի ավելի վաղ, քան առաջին մասնաբաժնի տրամադրումից առնվազն 3 ամիս հետո:

Վարկի վճարման ժամկետը շպետք է գերազանցի տասնինգ տարին (հոդված):

Ըստ Համաձայնագրի 3-րդ հոդվածի՝ Վարկառուն կարող է ցանկացած ժամանակ, Վարկառուն ծանուցելով, ամբողջությամբ կամ նաև անմիջապես չեղյալ համարել վարկի չվճարված մասնաբաժինը, իսկ Վարկառուն՝ ծանուցելով այդ մասին Վարկառուն, կարող է ամբողջովին կամ նաև անմիջապես կասեցնել եւ/կամ չեղյալ համարել վարկի չվճարված մասնաբաժինը, եթե առկա են նշված հոդվածում նախատեսված դեպքերը:

Համաձայնագրի 4-րդ հոդվածը նվիրված է վարկի օգտագործմանը, հատկացման գուտ գումարին վերաբերող խնդիրներին եւ նախապայմաններին: Մասնավորապես, սահմանված է, որ Վարկառուն կարող է գրավոր մասնաբաժին հայցել՝ օգտագործելով Համաձայնագրի 1-ին հավելվածում ներկայացված ձեւը: Վարկառուի կողմից 1-ին հավելվածում, այն է՝ միջոցների ստացման հայցադիմումի մեջ նշված բնութագրիչների շրջանակում Վարկառուն պետք է Վարկառուն փոխանցի ծանուցում՝ Համաձայնագրի 2-րդ հավելվածում ներկայացված ձեւով /ընդունման ծանուցման ձեւ/, որտեղ սահմանված կլինեն հայցվող մասնաբաժնի հիմնական փինանսական պայմանները:

Ֆինանսական գործարքի իրականացումից հետո միջոցների ստացման հայցադիմումը, ընդունման ծանուցումը եւ յուրաքանչյուր ֆինանսական գործարքի հետ կապված պայմանագրերի պատճենները պետք է հանդիսանան որպես Վարկառուի եւ Վարկառուի միջեւ կնքված ֆինանսական պայմանագիր, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անքաժանելի մասը:

Համաձայնագրի նշված հոդվածում անհրաժեշտ մանրամասնությամբ շարադրված են այն փոխադարձ պարտավորությունները, որոնք վարկի մասնաբաժինների հատկացման առնչությամբ կրում են Կողմերը:

3. Համաձայնագրի 5-րդ եւ 7-րդ հոդվածների վերլուծությունը վկայում է, որ Համաձայնագրով Վարկառուն ստանձնում է որոշակի ֆինանսական պարտավորություններ, քանի որ վարկի յուրաքանչյուր մասնաբաժն հանդիսանում է Վարկառուի չափահովված, անմիջական, ոչ պայմանական եւ ընդհանուր պարտավորություն: Վարկառուն պետք է հետ վճարի յուրաքանչյուր մասնաբաժնի հիմնագումարը՝ փոխատվության պայմանագրերով սահմանված եւ Վարկառուի կողմից իրեն ծանուցված ամսաթվերին եւ պայմաններին համապատասխան: Համաձայն Համաձայնագրի 5-րդ հոդվածի՝ Կողմերն ստանձնում են կոնկրետ այլ պարտավորություններ, որոնք նախատեսված են նույն հոդվածի 2-5-րդ կետերում:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վարկառուն պարտավորվում է յուրաքանչյուր մասնաբաժնի համար վճարել տոկոս՝ փոխատվության պայմանագրերով սահմանված եւ Վարկառուի կողմից իրեն ծանուցված դրույքաշափով, ամսաթվերին եւ պայմաններին համապատասխան (հոդված 6):

4. Համաձայնագրի 8-րդ հոդվածում ամրագրված է, որ Վարկառուի կողմից կատարվելիք բոլոր վճարումները՝ իհմնագումարի, տոկոսների, վնասի փոխհատուցման գումարների եւ սույն Համաձայնագրով վճարման ենթակա այլ գումարների մասով, պետք է վճարվեն՝ ազատված լինելով բոլոր տեսակի հարկերից, միջնորդավճարներից եւ ցանկացած այլ պահումից Համաձայնագրի գործողության ողջ ժամանակաշրջանում: Վարկառուի կողմից բոլոր վճարումները պետք է կատարվեն եվրոյով՝ Վարկառուի՝ եվրոյով բացված հաշվեհամարին: Վարկառուն պետք է Վարկառուին ուղարկի Վարկառուի գործակալին ուղարկված իր վճարման հանձնարարականների պատճենները:

5. Համաձայնագրի 9-րդ եւ 10-րդ հոդվածները նվիրված են Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման առանձին դեպքերի իրավական հետեւանքներին, ինչպես նաև ստուգումների իրականացման պայմաններին եւ կարգին, խարդախության կանխարգելմանը ու առողիտին առնչվող՝ Կողմերի փոխադարձ պարտավորություններին: Մասնավորապես, Վարկառուն եւ Վարկառուի գործակալը պետք է տրամադրեն համապատասխան տեղեկություններ եւ փաստաթղթեր, որոնք կարող են Վարկառուի կողմից պահանջվել գնահատումների, ստուգումների կամ առողիտի նպատակով, պետք է ձեռնարկեն բոլոր միջոցները Վարկառուի հանձնարարություն կրող անձանց աշխատանքը դյուրացնելու համար:

6. Համաձայնագրով Կողմերը պարտավորվում են Եվրոպական միության գործունեության համաձայնագրի 272-րդ հոդվածին համապատասխան ցանկացած վեճ, որը կարող է ծագել Համաձայնագրի վավերականության, օրինականության, մեկնաբանման կամ կատարման առնչությամբ, ներկայացնել Եվրոպական միության Ընդհանուր իրավասության դատարանի բացառիկ իրավասությանն ու միջնորդությանը՝ Եվրոպական միության արդարադատության դատարանին դիմելու իրավունքով: Նշված դատարանների վճիռները պետք է լիակատար կերպով իրավաբանորեն պարտադիր են հարկադրաբար կիրառելի լինեն Կողմերի համար (Համաձայնագրի 13-րդ հոդված): Ըստ Համաձայնագրի 14-րդ հոդվածի՝ Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի ոչ ուշ, քան Համաձայնագիրն ստորագրելուց 12 ամիս անց: Եթե Համաձայնագիրն ուժի մեջ չի մտնում մինչեւ այդ ամսաթիվը, ապա այն այլեւս չի կարող պարտավորեցնող լինել Կողմերի համար:

7. Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկանքի՝ Հայաստանի Համաձայնագիրն ուժում է ստանձնում է համապատասխան ֆինանսական պարտավորություններ:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Համաձայնագրի հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանի Հանրապետության՝ Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին եւ նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2011 թվականի փետրվարի 17-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եւ Եվրոպական միության միջև 65 միլիոն եվրոյի չափով վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### **ՆԱԽԱԳԱՀՈՂ**

### **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**14 ապրիլի 2011 թվականի  
ՍՊ.Օ-957**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-ԻՆ ԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-ԻՆ  
ՆԱԽԱԿԱՆԵՐԻ ՓՈԽԱԿԱԿՄԱՐՔ ԿՆՔՎԱԾ՝ «2009 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԵՎ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ  
ՆԱԽԱԿԱՆԵՐԻ ՓՈԽԱԿԱԿՄԱՐՔ ԿՆՔՎԱԾ՝ «ԱՖԴԱՆԱՍԱՆՈՒՄ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ  
ՍՏՈՐԱԲԱԺՄԱՆՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ  
ՀՅՈՒՄԱՎԱՆՏՎԱՆ ԴԱԾԵՆՔԻ (ՆԱՏՕ) ՀԵՏ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ  
ԶՈՐԱԽԱՄԲԻ ԹՎԱԿԱՁՄԻ ԱՎԵԼԱՑՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

19 ապրիլի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող),  
Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի,  
Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության  
100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահ-  
մանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի  
մարտի 26-ին և 2011 թվականի ապրիլի 4-ին նամակների փոխանակմամբ

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

կնքված՝ «2009 թվականի հոկտեմբերի 19-ին եւ 2009 թվականի հոկտեմբերի 20-ին նամակների փոխանակմամբ կնքված՝ «Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության գինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Հյուսիսադաշտյան դաշինքի (ՆԱՏՕ) հետ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ» համաձայնագրի գործողության ժամկետի երկարաձգման եւ հայկական գորախմբի թվակազմի ավելացման վերաբերյալ» համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին համաձայնագրում անրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 12.04.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «2009 թվականի հոկտեմբերի 19-ին եւ 2009 թվականի հոկտեմբերի 20-ին նամակների փոխանակմամբ կնքված՝ «Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության գինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Հյուսիսադաշտյան դաշինքի (ՆԱՏՕ) հետ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ» համաձայնագրի գործողության ժամկետի երկարաձգման եւ հայկական գորախմբի թվակազմի ավելացման վերաբերյալ» համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» նամակների փոխանակմամբ կնքվող համաձայնագիրը (Համաձայնագիր) ստորագրվել է 2011 թվականի մարտի 26-ին՝ ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի կողմից, եւ 2011 թվականի ապրիլի 4-ին՝ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի օգնականի կողմից:

2. Համաձայնագրի նպատակն է Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի (այսուհետ՝ ՍՍԱՈՒ) կազմում հայկական գորախմբի գտնվելու ժամկետի երկարաձգումը եւ հայկական գրախմբի թվաքանակի ավելացումը:

3. Սույն Համաձայնագրի համար պայմանագրաիրավական հիմք է հանդիսանում «2009 թվականի հոկտեմբերի 19-ին եւ 2009 թվականի հոկտեմբերի 20-ին նամակների փոխանակմամբ կնքված՝ «Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Հայաստանի

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Հյուսիսադրանույան դաշինքի (ՆԱՏՕ) հետ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ» համաձայնագիրը, որը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ԱԺՈ-178-Ն որոշմամբ:

4. Սույն Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես՝

- մինչեւ 2012 թվականի դեկտեմբերի 31-ը երկարաձգել ՄԱՍՈՒ-ի կազմում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանումների մասնակցությունը,

- ավելացնել հայկական զորախմբի թվաքանակը՝ հասցնելով այն մինչեւ 130-ի, իսկ հերթափոխների ժամանակ՝ մինչեւ 260-ի:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության պաշտպանության նախարարության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, վերջինս իր վրա է վերցնում հայկական զորախմբի հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ զինծառայողների ամսական լրացուցիչ վարձատրությունների:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին ՆԱՏՕ-ին ծանուցելու օրվանից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2011 թվականի մարտի 26-ին եւ 2011 թվականի ապրիլի 4-ին նամակների փոխանակմամբ կնքված՝ «2009 թվականի հոկտեմբերի 19-ին եւ 2009 թվականի հոկտեմբերի 20-ին նամակների փոխանակմամբ կնքված՝ «Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Հյուսիսադրանույան դաշինքի (ՆԱՏՕ) հետ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ» համաձայնագրի գործողության ժամկետի երկարաձգման եւ հայկական զորախմբի թվակազմի ավելացման վերաբերյալ» համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

---

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**19 ապրիլի 2011 թվականի  
ՍԴՈ-958**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 18-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ**

**ՇՎԵՅՅԱՐԻԱՅՅԻ ՀԱՄԱՎՃՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝**

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԱԾԱԿՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՎՆՔԵԼՈՒ**

**ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ**

**ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾՎԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆ**

**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ**

**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**19 ապրիլի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (գեկուցող), Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի հունիսի 18-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Շվեյցարիայի Համադաշնության կառավարության միջև Հայաստանում արտակարգ իրավիճակներին արձագանքելու համակարգին օժանդակության վերաբերյալ տեխնիկական եւ ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 28.03.2011թ.:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Հ. Միթրարյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ըվեյցարիայի Համադաշնության կառավարության միջեւ Հայաստանում արտակարգ իրավիճակներին արձագանքելու համակարգին օժանդակության վերաբերյալ տեխնիկական եւ ֆինանսական համագործակցության մասին համաձայնագիրն ստորագրվել է 2010 թվականի հունիսի 18-ին Երևանում՝ Հայաստանում արտակարգ իրավիճակներին արձագանքելու համակարգին օժանդակության ծրագրի իրականացման նպատակով: Ծրագրի նպատակն է նպաստել աղետներին արձագանքելու բուժօգնության կարողությունների զարգացմանը՝ հիմնադրելով համապարփակ կարողություններով օժտված օպերատիվ արտակարգ բժշկական խմբեր:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- ապահովել, որպեսզի Հայաստանի կառավարությունը որպես համաձայնագրի կիրառման եւ Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմին նշանակի արտակարգ իրավիճակների նախարարությանը եւ առողջապահության նախարարությանը,
- ապահովել, որպեսզի արտակարգ իրավիճակների նախարարությունը եւ առողջապահության նախարարությունը Ըվեյցարիայի արտաքին գործերի նախարարության Ըվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության հետ համատեղ ստեղծեն դեկազար կոմիտե, որը կուղղորդի եւ կվերահսկի Ծրագրի իրականացման աշխատանքները,
- ապահովել, որպեսզի ՀՀ կառավարությունը տրամադրի եւ վճարի առողջապահության նախարարության եւ արտակարգ իրավիճակների նախարարության՝ պահանջվող հայկական ամբողջ անձնակազմի աշխատավարձերը եւ ապահովի Ծրագրի շրջանակներում նրանց պարտավորությունների կատարումը, ինչպես նաև ձեռնարկի բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ Ծրագրի իրականացումն ապահովելու համար,
- ապահովել, որպեսզի Ըվեյցարական ներդրման միջոցներով ձեռք

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բերված բոլոր նյութերը Ծրագրի իրականացման ընթացքում օգտագործվեն բացառապես Ծրագրի նպատակների համար եւ այլն:

3. Համաձայնագրի 12-րդ, 13-րդ, 15-րդ հոդվածների ուսումնասիրությունը վկայում է, որ կողմերի համագործակցությունը խարսխված է ժողովրդակարության սկզբունքների եւ մարդու իմանարար իրավունքների նկատմամբ հարգանքի, կոռուպցիայի դեմ պայքարի եւ համաձայնագրի նպատակների հետեւողական իրականացման վրա: Կողմերը փոխադարձ պայմանավորվածությամբ իրենց իրավունք են վերապահել, որ «հատուկ հրատապություն» կառաջանա վերացնելու պայմանավորվածությունները, եթե կողմերից մեկը կոպիտ խախտում կատարի՝ համաձայնագրի 12-րդ հոդվածում նշված կարեւոր դրույթների հետ կապված:

4. Համաձայնագրին ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին շվեյցարական կողմին ծանուցելու օրվանից:

5. Համաձայնագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածին եւ բխում են միջազգային փոխահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Շվեյցարիայի Համադաշնության կառավարության միջեւ Հայաստանում արտակարգ իրավիճակներին արձագանքելու համակարգին օժանդակության վերաբերյալ տեխնիկական եւ ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19 ապրիլի 2011 թվականի  
ՍՊ-959



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-ԻՆ ՆԻԿՈՍԻԱՅՑՈՒՄ ՍՈՒՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ  
ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՍԳՐՈՒՄ  
(ԿԻՑ ԱՐՁԱՎԱԳՐՈՒԹՅԱՄՔ) ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

19 ապրիլի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի,  
Մ. Թոփոլյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,  
Վ. Պողոսյանի (գեղկուցող).

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25,  
38 և 72-րդ հոդվածների,

դրնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011  
թվականի հունվարի 17-ին Նիկոսիայում ստորագրված՝ Հայաստանի  
Հանրապետության կառավարության եւ Կիպրոսի Հանրապետության կառավարության միջեւ եկամուտների կրկնակի հարկումը բացառելու եւ  
հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրում (կից արձանագրությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը  
որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության նախագահի՝ 01.04.2011թ.  
ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի գրավոր բացատրությունը, հետազոտելով քննության առարկա համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Սույն համաձայնագիրն ստորագրվել է 2011 թվականի հունվարի 17-ին Նիկոսիայում՝ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու, միջազգային առեւտրի եւ ներդրումների վրա եկամտային եւ գույքային հարկերի հետ կապված խոչընդոտների բացասական ազդեցությունը նվազեցնելու, ինչպես նաև կանխատեսելի եւ կայուն հարկային դաշտ ստեղծելու նպատակով:

2. Համաձայնագրի անբաժանելի մասն է կազմում արձանագրությունը, որում սահմանված են տեղեկությունների փոխանակման կարգն ու պայմանները:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները:

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները կիպրոսյան կողմի իրավասու մարմիններին ծանուցեն համապատասխան հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին,
- հարկման չենթարկել հայկական ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունից ստացած շահույթը, եթե այդ ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է մյուս պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով,
- մշտական հաստատության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը որոշելիս հանել մշտական հաստատության նպատակներով կատարված փաստացի ծախսերը, այդ թվում՝ կառավարչական եւ ընդհանուր վարչական ծախսերը՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք որտեղ են կատարվել, ինչպես նաև այդ շահույթը որոշել տարեցտարի միեւնույն եղանակով, քանի դեռ չկա այն փոխելու հիմնավոր եւ բավարար պատճառ,
- միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից մյուս պետության ձեռնարկության շահույթը չենթարկել հարկման,
- հարկման չենթարկել մյուս պետության ռեզիլենտ ընկերության վճարած շահաբաժինները, եթե այդ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում Հայաստանի Հանրապետությունում՝ բացա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ոությամբ այն դեպքերի, երբ այդ շահաբաժինները վճարվում են Հայաստանի Հանրապետության ռեզիլենտ ընկերությանը, կամ երբ մասնակցությունը, որի առնչությամբ վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է Հայաստանի Հանրապետությունում գտնվող մշտական հաստատության հետ,

- հարկման չենթարկել նաև մյուս պետության ռեզիլենտ ընկերության չքաշխաված շահույթը, եթե նույնիսկ վճարված շահաբաժինները կամ չքաշխաված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են Հայաստանի Հանրապետությունում առաջացող շահույթից կամ նկամտից,
- հարկման չենթարկել մյուս պետության ռեզիլենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը եւ համանման այլ վարձատրությունները, եթե միայն այդ վարձու աշխատանքը չի իրականացվում Հայաստանի Հանրապետությունում,
- հարկման չենթարկել մյուս պետության ռեզիլենտին նախկին վարձու աշխատանքի առնչությամբ վճարվող կենսաբոշակները եւ համանման այլ վարձատրությունները,
- հարկման չենթարկել մյուս պետության ռեզիլենտի եկամտի այն տեսակները, որոնք սահմանված չեն Համաձայնագրի դրույթներում,
- կրկնակի հարկումը բացառելու նպատակով Հայաստանի Հանրապետության ռեզիլենտի կողմից մյուս պետությունում հարկվող եկամուտ ստանալիս թույլատրել այդ ռեզիլենտի եկամտահարկի նվազեցում՝ մյուս պետությունում վճարված եկամտահարկի գումարի չափով,
- մյուս պետության քաղաքացիներին, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց, ովքեր մյուս պետության ռեզիլենտ են, չենթարկել այլ կամ ավելի ծանր որեւէ հարկման կամ դրա հետ կապված որեւէ պահանջի, քան այն հարկումն ու դրա հետ կապված պահանջներն են, որոնց միեւնույն հանգամանքներում ենթարկվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,
- իրավասու մարմինների միջոցով մյուս պետության հետ փոխանակվել տեղեկություններով, որոնք կարեւոր են Համաձայնագրի դրույթների իրականացման համար, ինչպես նաև չորամադրել մյուս պետությանը հայցվող տեղեկությունը, եթե այդ մյուս պետությունը չունի փոխադարձ դրույթներ եւ / կամ չի կիրառել համապատասխան վարչարարական գործելակերպը՝ հայցվող տեղեկությունների տրամադրման համար, ինչպես նաև երաշխավորել ստացված տեղեկությունների գաղտնիությունը:

4. Համաձայնագրով սահմանված են նաև ռոյալթիների, գույքի արժեքի հավելածի, ընկերությունների տնօրենների հոնորարների, արվեստի

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

գործիչների եւ մարզիկների, ուսանողների, դասախոսների եւ հետազոտողների նկատմամբ հարկում կիրառելու կարգն ու պայմանները:

5. Համաձայնագիրը սահմանում է նաև վիճելի հարցերի լուծման կարգը, Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու եւ գործողությունը դադարեցնելու կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2011 թվականի հունվարի 17-ին Նիկոսիայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Կիպրոսի Հանրապետության կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրում (կից արձանագրությամբ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19 ապրիլի 2011 թվականի  
**ՍՊԸ-960**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ» ԿՈՆՎԵՆՑԻԱՆ  
ԼՐԱՑՆՈՂ «ՀՐԱԶԵՆԻ, ԴՐԱ ՀԻՄՆԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ,  
ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵԽՎԱԾ ՈԱԶՄԱՌԵՐՔԻ  
ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՄՐՏՎԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՊՈՒԹՅԱՆ ԴԵՄ»  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ (ԿԻՅ ԱՌԱՐԿՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երեւան

24 մայիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող),  
Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի,  
Ա. Պետրոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց՝ «2001 թվականի մայիսի 31-ին Նյու Յորքում ստորագրված՝ «Միավորված ազգերի կազմակերպության՝ անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան լրացնող «Հրազենի, դրա հիմնամասերի եւ բաղադրիչների, ինչպես նաև դրա համար նախատեսված ուղղակի անօրինական արտադրության եւ շրջանառության դեմ» արձանագրության մեջ (կից առարկությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության աղիք է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 21.02.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն աղբներ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Ա. Օսիկյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. «Միավորված ազգերի կազմակերպության՝ անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան լրացնող «Հրազենի, դրա հիմնամասերի եւ բաղադրիչների, ինչպես նաև դրա համար նախատեսված ռազմամթերքի անօրինական արտադրության եւ շրջանառության դեմ» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2001 թվականի մայիսի 31-ին:

Արձանագրությունը «Միավորված ազգերի կազմակերպության՝ անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիայի անբաժանելի մասն է, որը ՀՀ-ի կողմից վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի 2003 թվականի մարտի 25-ի Ն-333-2 որոշմամբ (ՍԴՈ-392):

Աղբեջանի Հանրապետությունն Արձանագրության վերաբերյալ կատարել է վերապահում, որի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը ներկայացրել է առարկություն:

2. Նշված Արձանագրության նպատակն է կանխել եւ վերացնել հրազենի, դրա հիմնամասերի եւ բաղադրիչների, ռազմամթերքի անօրինական արտադրությունը եւ շրջանառությունը:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես՝

- կիրառել Արձանագրությունը, եթե դրանում այլ բան նշված չէ, հրազենի, դրա հիմնամասերի եւ բաղադրիչների, ինչպես նաև դրա համար նախատեսված ռազմամթերքի անօրինական արտադրությունը եւ շրջանառությունը կանխելու եւ Արձանագրության 5-րդ հոդվածին համապատասխան սահմանված իրավախախումների հետաքննության եւ դատական հետապնդման նպատակով, եթե այդ իրավախախումները կրում են անդրազգային բնույթ եւ կատարվել են կազմակերպված հանցավոր խմբի կողմից (հոդվ. 4, կետ 1),
- ընդունել այնպիսի օրենսդրական եւ այլ բնույթի միջոցներ, որոնք կարող են պահանջել Արձանագրության 5-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» եւ «գ» ենթակետերում նախատեսված արարքները քրե-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ական իրավախախտումներ ճանաչելու համար, եթե դրանք կատարվել են դիտավորությամբ, ինչպես նաև ընդունել եւ իրականացնել այնպիսի օրենսդրական ու այլ բնույթի միջոցներ, որոնք կարող են պահանջվել Արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերում նախատեսված արարքները քրեական իրավախախտումներ ճանաչելու համար (հոդվ. 5),

- շխակասելով Կոնվենցիայի 12-րդ հոդվածի դրույթներին՝ ՀՀ ներքին իրավական համակարգի շրջանակներում առավելագույն հնարավորության սահմաններում ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել անօրինական կերպով արտադրված կամ ապօրինի շրջանառված հրազենի, դրա հիմնամասերի եւ բաղադրիչների, ինչպես նաև դրա համար նախատեսված ռազմամթերքի բռնագրավումը հնարավոր դարձնելու համար (հոդվ. 6, կետ 1),
- ՀՀ ներքին իրավական համակարգի շրջանակներում ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել՝ կանխելու համար անօրինական կերպով արտադրված կամ ապօրինի շրջանառված հրազենը, դրա հիմնամասերը եւ բաղադրիչները, ինչպես նաև դրա համար նախատեսված ռազմամթերքը դրանց կիրառման համար չլիազորված անձանց մոտ հայտնվելը՝ կալանելով եւ ոչնչացնելով այդ հրազենը, դրա հիմնամասերը եւ բաղադրիչները, ինչպես նաև դրա համար նախատեսված ռազմամթերքը, եթե դրանց օտարումը պաշտոնապես չի բույլատրվել՝ պայմանով, որ այդ հրազենի վրա համապատասխան նշում արվի, եւ գրանցվեն այդ հրազենի ու ռազմամթերքի օտարման եղանակները (հոդվ. 6, կետ 2),
- ապահովել ոչ պակաս, քան տասը տարվա ընթացքում հրազենի եւ, հարկ եղած ու գործնական հնարավորության դեպքում, դրա հիմնամասերի, բաղադրիչների եւ ռազմամթերքի վերաբերյալ այն տեղեկությունների պահպանումը, որոնք անհրաժեշտ են անօրինական կերպով արտադրված եւ ապօրինի շրջանառված հրազենի եւ, հարկ եղած ու գործնական հնարավորության դեպքում, դրա հիմնամասերի, բաղադրիչների եւ ռազմամթերքի վերահսկման ու հայտնաբերման համար, եւ նման գործունեությունը կանխարգելելու ու բացահայտելու համար (հոդվ. 7),
- յուրաքանչյուր հրազենի նույնականացման եւ վերահսկողության նպատակով՝ յուրաքանչյուր հրազենի արտադրման ընթացքում պահանջել յուրահատուկ դրոշմի կիրառում՝ արտադրողի անունով, արտադրման վայրով կամ երկրով ու սերիական համարով, կամ թվային եւ/կամ տառաթվային գաղտնագրի հետ համակցված պարզ երկրաչափական նշաններից կազմված, այլընտրանքային, գործածության համար հարմար յուրահատուկ դրոշմի կիրառում,

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

որը բոլոր Մասնակից պետություններին թույլ կտա արագ որոշել արտադրման երկիրը (հոդվ. 8, կետ 1, Ենթակետ «ա»),

- յուրաքանչյուր հրազենի նույնականացման եւ վերահսկողության նպատակով՝ պահանջել ներկրվող յուրաքանչյուր հրազենի վրա համապատասխան պարզ դրոշմ, որը թույլ կտա որոշել ներկրող երկիրը եւ, հնարավորության դեպքում, ներկրման տարեթիվը, եւ որը հնարավորություն կտա ՀՀ իրավասու մարմիններին հսկողություն սահմանել այդ հրազենի նկատմամբ, իսկ եթե տվյալ հրազենը չունի նման դրոշմ, կարող է պահանջվել յուրահատուկ դրոշմ. վերոհիշյալը չկիրառել ապացուցելի օրինական նպատակների համար ներկրվող հրազենի նկատմամբ (հոդվ. 8, կետ 1, Ենթակետ «բ»),
- յուրաքանչյուր հրազենի նույնականացման եւ վերահսկողության նպատակով՝ ապահովել քաղաքացիական նպատակով օգտագործման համար պետական պահեստից հրազենի փոխանցման ընթացքում համապատասխան յուրահատուկ դրոշմի առկայություն, որը թույլ կտա բոլոր Մասնակից պետություններին որոշել փոխանցող երկիրը (հոդվ. 8, կետ 1, Ենթակետ «գ»),
- ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ապահովագված հրազենը որպես հրազեն չընդունելու դեպքում, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ապահանտիվացված հրազենի անօրինական վերաակտիվացումը կանխելու համար՝ ներառյալ, հարկ եղած դեպքում, առանձին իրավախախտումների սահմանումը՝ Արձանագրության 9-րդ հոդվածի «ա», «բ» եւ «գ» մասերում նախատեսված ապահովացման ընդհանուր սկզբունքներին համապատասխան (հոդվ. 9),
- հիմնել կամ կիրառել արտահանման եւ ներկրման համար արտոնագրերի կամ թույլտվությունների տրամադրման, ինչպես նաև հրազենի, դրա հիմնամասերի եւ բաղադրիչների, ինչպես նաև դրա համար նախատեսված ռազմամքերի փոխանցման համար միջազգային տարանցման միջոցների արդյունավետ համակարգեր (հոդվ. 10, կետ 1),
- կիրառել պատշաճ միջոցներ հրազենի, դրա հիմնամասերի եւ բաղադրիչների, ինչպես նաև դրա համար նախատեսված ռազմամքերի անօրինական արտադրության եւ շրջանառության բացահայտման, կանխարգելման եւ վերացման համար, պահանջելով հրազենի, դրա հիմնամասերի եւ բաղադրիչների, ինչպես նաև դրա համար նախատեսված ռազմամքերի անվտանգություն՝ արտադրման, ներկրման, արտահանման եւ ՀՀ տարածքով տարանցման ընթացքում (հոդվ. 11, կետ «ա»),
- կիրառել պատշաճ միջոցներ հրազենի, դրա հիմնամասերի եւ բա-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ղաղրիշների, ինչպես նաև դրա համար նախատեսված ուղղամթերքի անօրինական արտադրության եւ շրջանառության բացահայտման, կանխարգելման եւ վերացման համար, ավելացնելով ներկրման, արտահանման եւ տարանցման վերահսկողության արդյունավետությունը՝ հարկ եղած դեպքում ներառելով սահմանային ստուգումները, ինչպես նաև ոստիկանության եւ մաքսային մարմինների միջեւ անդրսահմանային համագործակցությունը (հոդվ. 11, կետ «բ»),

- ՀՀ իրավական եւ վարչական համապատասխան համակարգերի համաձայն, միմյանց միջեւ փոխանակել համապատասխան կոնկրետ տեղեկություններ հրազենի, դրա հիմնամասերի եւ բաղդրիշների, ինչպես նաև դրա համար նախատեսված ուղղամթերքի լիազորված արտադրողների, վաճառողների, ներկրողների, արտահանողների եւ, հնարավորության դեպքում, փոխադրողների մասին (հոդվ. 12, կետ 1):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Ց**.

1. 2001 թվականի մայիսի 31-ին Նյու Յորքում ստորագրված՝ «Միավորված ազգերի կազմակերպության՝ անդրազգային կազմակերպված հանգավորության դեմ» կոնվենցիան լրացնող «Հրազենի, դրա հիմնամասերի եւ բաղդրիշների, ինչպես նաև դրա համար նախատեսված ուղղամթերքի անօրինական արտադրության եւ շրջանառության դեմ» արձանագրության մեջ (կից առարկությամբ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**24 մայիսի 2011 թվականի  
ՍՊԸ-961**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ՄԱԴՐԻԴ-ՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍՊԱՆԻԱՅԻ**

**ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՍՏՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ**

**ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌՈՒԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԸ ԽՈՒՍՎՓԵԼԸ ԿԱՆԱՆԵԼՈՒ**

**ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՅԱՅՅՈՒՄ (ԿԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄՔ)**

**ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

**ՀԱՄԱՐԱԾԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ**

**ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**24 մայիսի 2011 թվականի**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուղյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի դեկտեմբերի 16-ին Մադրիդում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Իսպանիայի Թագավորության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիայում (կից արձանագրությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության աղիք է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ սահմանադրական դատարան 2011 թվականի մարտի 2-ին մուտքագրված դիմումը:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Կարայանի գրավոր բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաբերքերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Իսպանիայի Թագավորության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիան եւ Կոնվենցիայի անբաժանելի մասը կազմող Արձանագրությունը (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 2010 թվականի դեկտեմբերի 16-ին՝ Մադրիդում: Կոնվենցիայի նպատակը՝ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու հետ կապված հարաբերությունների կարգավորումն է, եւ դրանով պայմանավորված՝ միջազգային առեւտրի ու ներդրումների վրա եկամտային եւ գույքային հարկերի հետ կապված խոշնդրությունների բացասական ազդեցության նվազեցումը:

2. Կոնվենցիայով նախատեսված է, որ այն կիրառվում է պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց (հոդված 1) եւ պետության կամ նրա քաղաքական ստորաբաժնումների կամ տեղական իշխանության մարմինների կողմից եկամուտների ու գույքի նկատմամբ սահմանված հարկերի նկատմամբ՝ անկախ վերջիններիս գանձման եղանակից:

Կոնվենցիան կիրառվում է՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված շահութահարկի, եկամտահարկի եւ գույքահարկի նկատմամբ, իսկ Իսպանիայի Թագավորությունում՝ ֆիզիկական անձանցից գանձվող եկամտահարկի, ձեռնարկությունների շահութահարկի, ռեզիդենտ շիանդիսացող անձանցից գանձվող եկամտահարկի, գույքահարկի եւ եկամուտների ու գույքի նկատմամբ գանձվող տեղական հարկերի նկատմամբ:

3. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- Կոնվենցիան կիրառել շահութահարկի, եկամտահարկի եւ գույքահարկի նկատմամբ,
- Կիրառել Կոնվենցիան նաև նույնական կամ էապես նման հարկերի նկատմամբ, որոնք կահմանվեն Կոնվենցիայի ստորագրումից հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն, եւ ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններն իսպանական կողմից իրավասու մարմիններին ծանուցեն ՀՀ համապատասխան հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին,

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- Հայաստանի Հանրապետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի, օդանավերի կամ ճանապարհային փոխադրամիջոցների շահագործումից ստացված շահույթը հարկել միայն Հայաստանի Հանրապետությունում,
- հաշվի առնելով Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները՝ ՀՀ ռեզիլենտին նախկին վարձու աշխատանքի համար վճարվող կենսաբռշակները եւ համանման այլ վարձատրությունները հարկել միայն Հայաստանի Հանրապետությունում,
- Հայաստանի Հանրապետությանը կամ ՀՀ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններին նատուցած ծառայությունների դիմաց անհատին վճարվող աշխատավարձը կամ համանման այլ վարձատրությունները հարկել միայն Հայաստանի Հանրապետությունում,
- չհարկել Իսպանիայի Թագավորության ռեզիլենտ հանդիսացող կամ մինչեւ Հայաստանի Հանրապետություն ժամանելը Իսպանիայի Թագավորության ռեզիլենտ հանդիսացած եւ Հայաստանի Հանրապետությունում բացառապես ուսման կամ վերապատրաստման նպատակով գտնվող ուսանողին կամ փորձնակին Հայաստանի Հանրապետությունում իր կեցության, ուսման կամ վերապատրաստման համար ստացած վճարումների առնչությամբ՝ պայմանով, որ այդ վճարումներն ստացվեն Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից,
- կրկնակի հարկումը բացառելու նպատակով Հայաստանի Հանրապետության ռեզիլենտի կողմից Իսպանիայի Թագավորությունում հարկվող եկամուտ ստանալիս կամ գույք տնօրինելիս թույլատրել այդ ռեզիլենտի եկամտահարկի կամ գույքահարկի նվազեցում Իսպանիայի Թագավորությունում վճարված եկամտահարկի կամ գույքահարկի գումարի չափով,
- Իսպանիայի Թագավորության քաղաքացիներին Հայաստանի Հանրապետություն չենթարկել այլ կամ ավելի խիստ որեւէ հարկման կամ դրա հետ կապված որեւէ պարտավորության կատարման, մասնավորապես՝ կապված ռեզիլենտության հետ, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունների կատարումն են, որոնց, միեւնույն հանգամանքների դեպքում, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները՝ մասնավորապես կապված բնակության վայրի հետ,
- ապահովել, որպեսզի Իսպանիայի Թագավորության ձեռնարկության տնտեսական գործունեություն իրականացնող մշտական հաստատության հարկումը Հայաստանի Հանրապետությունում չինի նվազ

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- բարենպաստ, քան Հայաստանի Հանրապետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկությունների հարկումը,
- Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունները, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնօրինվում կամ վերահսկվում է Խսպանիայի Թագավորության մեկ կամ մի քանի ռեզիլիտների կողմից, Հայաստանի Հանրապետությունում չենթարկել հարկման կամ դրա հետ կապված պարտավորությունների կատարման, որոնք տարբերվում են կամ ավելի ծանր են, քան այն հարկումը և պահանջներն են, որոնց ենթարկվում կամ կարող են ենթարկվել Հայաստանի Հանրապետության այլ համանման ձեռնարկությունները,
  - Երաշխավորել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասուու մարմինները տրամադրեն Խսպանիայի Թագավորության իրավասուու մարմիններին այնպիսի տեղեկություններ, որոնք կարեւոր են սույն Կոնվենցիայի իրականացման կամ Հայաստանի Հանրապետության կամ ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կիրառվող ցանկացած տեսակի և բնույթի հարկերի մասով ՀՀ օրենքների կատարման կամ կիրարկման հետ այնքանով, որքանով դրանցով սահմանված հարկումը չի հակասում Կոնվենցիային,
  - Երաշխավորել, որ ստացված ցանկացած տեղեկություն կհամարվի գաղտնի, եւ կիրապարակվի միայն այն անձանց կամ լիազոր մարմիններին, որոնք առնչվում են Կոնվենցիայի 26-րդ հոդվածի 1-ին կետում նշված հարկերի գնահատմանը կամ հավաքմանը, հարկադիր հավաքմանը կամ դրանց առնչությամբ դատական հետապնդմանը, կամ դրանց հետ կապված բողոքարկումների քննարկմանը կամ վերահսկմանը, ինչպես նաև այն, որ այդպիսի անձինք կամ մարմինները տեղեկությունները կօգտագործեն միայն այդպիսի նպատակների համար:

4. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը կրում է ֆինանսական պարտավորություններ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է չհարկել Խսպանիայի Թագավորության ռեզիլիտների կողմից Հայաստանի Հանրապետությունում ստացված առանձին տեսակի նկամուտները կամ հարկել նվազեցված դրույքաչափով: Կոնվենցիան ամրագրում է նաև հարկումից խուսափելը կանխելու հետ կապված փոխհամաձայնեցման ընթացակարգ, ինչպես նաև երաշխավորում է Հայաստանի Հանրապետությունում եւ Խսպանիայի Թագավորությունում հարկման կամ դրա հետ կապված որեւէ պարտավորության կատարման բնագավառում անձանց նկատմամբ որեւէ խտրականության բացառում:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

5. Միջազգային իրավունքի նորմերին ներդաշնակ՝ Կոնվենցիայի գործողությունը չի տարածվում դիվանագիտական ներկայացուցչությունների եւ հյուպատոսական իիմնարկների անդամների նկատմամբ:

6. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 8-րդ եւ 9-րդ հոդվածների դրույթներին, կոչված են զարգացնելու կողմերի միջեւ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունները, նաև ստեղծելու իրավական բարենպատ պայմաններ կողմերի համապատասխան սուբյեկտների տնտեսական գործունեության ազատության համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի դեկտեմբերի 16-ին Մադրիդում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Խաղաղիայի Թագավորության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիայում (կից արձանագրությամբ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրավարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**24 մայիսի 2011 թվականի  
ՍՊԸ-962**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՖԱՐՈՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԺԱՌԱԳՈՒԹՅՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՅԱՆ ՀԱՄԱՐ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ  
ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՌՈՒԹՅՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

24 մայիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի,  
Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրսիրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2005 թվականի հոկտեմբերի 27-ին ֆարոյում ստորագրված՝ Մշակութային ժառանգության նշանակությունը հասարակության համար Եվրոպայի խորհրդի շրջանակային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Ա. Սամուելյանի գրավոր բացատրությունը, հե-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տազութեղով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Մշակութային ժառանգության նշանակությունը հասարակության համար Եվրոպայի խորհրդի շրջանակային կոնվենցիան ստորագրվել է 2005 թվականի հոկտեմբերի 27-ին Ֆարո քաղաքում:

Կոնվենցիայի հիմնական նպատակն է ճանաչել մշակութային ժառանգությանը վերաբերող իրավունքները, որպես մշակութային կյանքին հաղորդակցվելու իրավունքի անբաժանելի մաս, անհատական եւ կոլեկտիվ պատասխանատվությունը մշակութային ժառանգության նկատմամբ:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն մշակութային ժառանգությունն անցյալից ժառանգված ռեսուրսների ամբողջություն է, որը, անկախ իր պատկանելության, մարդկան համարում են իրենց մշտապես փոփոխվող արժեքների, հավատալիքների, իմացությունների, ավանդույթների արտացոլումն ու արտահայտումը: Միաժամանակ, կոնվենցիայի 4-րդ հոդվածում ամրագրված է, որ յուրաքանչյուր մարդ կոլեկտիվ իրավունք ունի օգտվելու մշակութային ժառանգությունից եւ կատարելու իր ներդրումը, իսկ մշակութային ժառանգության նկատմամբ իրավունքի կիրառումը կարող է ենթարկվել միայն այնպիսի սահմանափակումների, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար:

2. Շրջանակային կոնվենցիայի համաձայն Հայաստանի Հանրապետությունը հետեւյալ բնագավառներում ստանձնում է մի շարք պարտավորություններ.

ա) **մշակութային ժառանգության բնագավառի օրենսդրության եւ քաղաքականության բնագավառում**

- ճանաչել հասարակության համար, իրենց նշանակությանը համապատասխան, մշակութային ժառանգության բաղկացուցիչ մասերին առնչվող հանրային շահերը,
- բարձրացնել մշակութային ժառանգության արժեքը՝ հայտնաբերման, ուսումնասիրման, մեկնաբանման, պահպանության, պաշտպանության եւ օգտագործման միջոցով,
- ապահովել մշակութային ժառանգության իրավունքի իրականացման՝ կոնվենցիայի 4-րդ հոդվածով սահմանված կոնկրետ պայմանները՝ օրենսդրությունում համապատասխան դրույթներ նախատեսելու եղանակով,
- ամրապնել տնտեսական եւ սոցիալական մքնուրուտը, ինչը կնպաստեր մշակութային ժառանգության բնագավառում իրականացվող գործունեությանը մասնակցությանը,

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- խրախուսել մշակութային ժառանգության պահպանությունը որպես կայուն զարգացման, մշակութային բազմազանության և ժամանակակից ստեղծագործության փոխկապակցված նպատակների կարեւորագույն գործոն,
- ճանաչել ծագումից անկախ, իր տարածքում իր իրավասության ներքո գտնվող մշակութային ժառանգության արժեքը,

### **թ) մշակութային ժառանգության վերաբերյալ երկխոսության բնագավառում**

- խրախուսել մշակութային ներկայացման էթիկայի և մեթոդների մասին մտորումները, ինչպես նաև հարգանքը տարաբնույթ մեկնարանումների նկատմամբ,
- նախաձեռնել հաշտեցման գործընթացներ, որպեսզի արդարացիորեն կանոնակարգվեն այնպիսի իրավիճակներ, երբ միեւնույն մշակութային ժառանգությունը վիճարկելի արժեք է տարբեր հանրությունների համար,
- զարգացնել մշակութային ժառանգության մասին գիտելիքները, որպես խաղաղ գոյակցության ամրապնդման աղբյուր՝ վստահության և փոխվավերման եղանակով հականարտությունները կանխարգելելու և կանոնակարգելու համար,
- ինտեգրել այդ մոտեցումները կրթության և մասնագիտական պատրաստման բոլոր բնագավառներում,

### **գ) շրջակա միջավայրի, ժառանգության և կենսամակարդակի բնագավառում**

- հարստացնել տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային զարգացման ու հողօգտագործման պլանավորման գործընթացները՝ իրականացնելով մշակութային ժառանգության վրա դրանց հետեւանքների գնահատումը՝ անհրաժեշտության դեպքում նախատեսելով փոխհատուցման միջոցներ,
- նպաստել մշակութային, կենսաբանական, երկրաբանական և լանդշաֆտային բազմազանության ոլորտներում ինտեգրված մոտեցումը՝ հավասարակշռության հասնելու համար,
- ամրապնդել սոցիալական համախմբվածությունը՝ մարդկանց բնակության վայրերի համար ընդհանուր պատասխանատվության զգացում դաստիարակելու միջոցով,
- ապահովել ժամանակակից փոխակերպումների արդյունքում շրջակա միջավայրի պահպանության հավելումների որակավորման խնդիրը՝ առանց վտանգելու դրանց մշակութային արժեքները,

### **դ) մշակութային ժառանգության կայուն օգտագործման բնագավառում**

- խրախուսել մշակութային ժառանգության ամբողջականության նկատմամբ հարգանքը, հասնելով նրան, որ փոփոխությունների

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մասին որոշումները ներառեն նշյալ մշակութային արժեքներին առնչվող հասկացություններ,

- մշակել եւ առաջ մղել կայուն կառավարման սկզբունքները, ինչպես նաև խրախուսել ժառանգության պահպանությունը,
- ապահովել, որպեսզի բոլոր կանոնակարգերում տեխնիկական ընդիանուր նորմերում ուշադրության արժանանան մշակութային ժառանգության հատուկ պայմանները,
- նպաստել ավանդույթների վրա հիմնված նյութերի, տեխնիկական մեթոդների եւ կարողությունների օգտագործմանը, ինչպես նաև հետազոտել ժամանակակից պայմաններում դրանց կիրառման հնարավորությունները,
- խրախուսել բարձրորակ աշխատանքը՝ առանձին անձանց, գործարանների եւ հաստատությունների մասնագիտական որակավորման եւ հավատարմագրման համակարգի միջոցով,

### ե) մշակութային ժառանգության եւ տնտեսական գործունեության բնագավառում

- խորացնել մշակութային ժառանգության կարեւորության գիտակցումը եւ նրա տնտեսական ներուժի օգտագործումը,
- տնտեսական քաղաքականություն մշակելիս հաշվի առնել մշակութային ժառանգության շահերն ու հատուկ բնույթը,
- ապահովել, որպեսզի այդ քաղաքականության շրջանակներում հարցվի մշակութային ժառանգության ամբողջականությունը եւ միեւնույն ժամանակ չխարիսկեն նրա հիմնարար արժեքները,

### զ) մշակութային ժառանգության ոլորտում պետական մարմինների պատասխանատվության ապահովման բնագավառում

- խրախուսել բոլոր ոլորտներում եւ բոլոր մակարդակներում պետական մարմինների այնպիսի մոտեցում, որը կինհ համալիր եւ հիմնված կինհ ամբողջական տեղեկատվության վրա
- մշակել իրավական, ֆինանսական եւ պրոֆեսիոնալ շրջանակները, որոնցում հնարավոր կինհեր իրականացնել պետական մարմինների, փորձագետների, մասնավոր սեփականատերերի, ներդրողների, գործարարների, հասարակական կազմակերպությունների եւ քաղաքացիական հասարակության համատեղ գործունեությունը,
- զարգացնել պետական մարմինների մյուս մասնակիցների հետ համագործակցության նորարարական մոտեցումները,
- հարգել եւ խրախուսել կամավոր նախաձեռնությունները, որոնք լրացնում են պետական մարմինների դերը,
- խրախուսել ժառանգության պահպանմամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին՝ գործել ողջ հասարակության շահերից,

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՈՒՅՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

### **է) մշակութային ժառանգության մատչելիության և ժողովրդավարական մասնակցության բնագավառում**

- խրախուսել համընդիանուր նասնակցությունը մշակութային ժառանգության հայտնարերման, ուսումնասիրման, մեկնարաննան, պահպանության, պաշտպանության և օգտագործման գործընթացին,
- խրախուսել համընդիանուր նասնակցությունը մշակութային ժառանգության հնարավորություններին վերաբերող հասարակական մտորումներին և քննարկումներին,
- հաշվի առնել այն նշանակությունը, որը յուրաքանչյուր համայնք տալիս է այն մշակութային ժառանգությանը, որի հետ ինքն իրեն նույնականացնում է,
- ճանաչել մշակութային ժառանգության ոլորտի քաղաքականության մեջ կամավորական կազմակերպությունների դերը և՝ որպես գործընկեր, ե՛ որպես կառուցղական քննադատ,
- քայլեր ձեռնարկել ժառանգության մատչելիությունը կատարելագործելու ուղղությամբ՝ հատկապես երիտասարդության և բնակչության սակավապահոված խավերի համար,

### **ը) մշակութային ժառանգության և գիտելիքի բնագավառում**

- նպաստել մշակութային ժառանգության ներառմանը կրթության բոլոր մակարդակներում, ընդ որում, ոչ միայն որպես առանձին, այլև որպես մյուս առարկաներն ուսումնասիրելու բարենպաստ աղբյուր,
- ամրապնդել կապը մշակութային ոլորտի կրթության և մասնագիտական պատրաստության միջեւ
- աջակցել մշակութային ժառանգության, մշակութային համայնքների, միջավայրի և նրանց փոխարժեակցության ոլորտներում միջառարկայական հետազոտությունները,
- խրախուսել մշտական մասնագիտական պատրաստումը և գիտելիքների ու հմտությունների փոխանակումն ինչպես կրթական համակարգի ներսում, այնպես է՛ նրա շրջանակներից դուրս,

### **թ) մշակութային ժառանգության և տեղեկատվական հասարակության բնագավառում**

- զարգացնել թվային տեխնոլոգիաների օգտագործումը՝ մշակութային ժառանգության և դրա հետ կապված բարիքների մատչելիությունն ընդլայնելու համար,

### **Ժ) մոնիթորինգի և համագործակցության բնագավառում**

- Եվրոպայի խորհրդի միջոցով զարգացնել մշակութային ժառանգության նկատմամբ օրենսդրության, քաղաքականության և պրակտիկան ընդգրկող դիտանցման համակարգը,

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- պահպանել, զարգացնել եւ ներմուծել տվյալներ հասարակությանը հասանելի համատեղ տեղեկատվական համակարգ, որը կնպաստեր կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման գնահատմանը:

Կոնվենցիայի 5-րդ բաժնում նախատեսված են դրույթներ կոնվենցիայի ստորագրման, ուժի մեջ մտնելու, փոփոխման եւ կիրառման վերաբերյալ:

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված ՀՀ արտաքին քաղաքականության սկզբունքներից եւ համահունչ են սոցիալ-մշակութային բնագավառում պետության առջեւ դրված սահմանադրախրավական այլ խնդիրներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Ո Շ Ե Ց**.

1. 2005 թվականի հոկտեմբերի 27-ին Ֆարյում ստորագրված՝ Մշակութային ժառանգության նշանակությունը հասարակության համար Եվրոպայի խորհրդի շրջանակային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**24 մայիսի 2011 թվականի  
ՍՊԸ-963**

**ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՏԱՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

1984 թվականի սեպտեմբերի 28-ին ժնեվուտ ստորագրված՝  
«Մեծ Հեռավորությունների վրա օդի սիջաւալազիւն  
պատճենահանության Մասին» 1979 թվականի Կոնվենցիանի՝  
ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՄԵծ Հեռավորությունների վրա օդի  
պատճենահանության մասին դրագրի (ԵԴԳԾ) երկարաժամկետ  
ՖԻՆԱՆՍՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՎԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՄԱՊԱՏՍԽԱՆԱՊՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

**Քաղ. Երեւան**

**24 մայիսի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի (գելուցող),  
Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի,  
Ա. Պետրոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրներաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց՝ «1984 թվականի սեպտեմբերի 28-ին Ժնեվում ստորագրված՝ «Մեծ հեռավորությունների վրա օդի միջսահմանային աղտոտվածության մասին» 1979 թվականի կոնվենցիայի՝ Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածումը դիտանելու և գնահատելու համագործակցային ծրագրի (ԵԴԳԾ) երկարաժամկետ ֆինանսավորման վերաբերյալ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապե-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 28.03.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուստիմնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ քնայահպանության նախարար Ա. Հարությունյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. «Մեծ հեռավորությունների վրա օդի միջսահմանային աղտոտվածության մասին» 1979 թվականի կոնվենցիայի՝ Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածումը դիտանցելու եւ գնահատելու համագործակցային ծրագրի (ԵԴԳԾ) երկարաժամկետ ֆինանսավորման վերաբերյալ արձանագրությունն ստորագրվել է 1984 թվականի սեպտեմբերի 28-ին՝ Ժնեվ քաղաքում:

«Մեծ հեռավորությունների վրա օդի միջսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1997 թվականի մայիսի 22-ին:

2. Արձանագրության նպատակն է ապահովել Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածումը դիտանցելու եւ գնահատելու համագործակցության ծրագրի երկարաժամկետ ֆինանսավորումը:

Արձանագրության անբաժանելի մաս է կազմում հավելվածը:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես՝

- ապահովել «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածումը դիտանցելու եւ գնահատելու համագործակցային ծրագրի» (այսուհետ՝ ԵԴԳԾ) ֆինանսավորումը պարտադիր վճարների հաշվին, որոնք լրացվում են կամավոր վճարներով: Վճարները կատարել փոխարկելի եւ ոչ փոխարկելի արժույթով եւ բնեղենով (հոդվ. 3, կետ 1),
- կատարել պարտադիր վճարները տարեկան սկզբունքով (հոդվ. 3, կետ 2),
- կանխիկով կատարված պարտադիր վճարները եւ կամավոր վճարներն ուղղել Ընդհանուր նպատակային ֆոնդ (հոդվ. 3, կետ 5),
- պարտադիր վճարները կատարել Արձանագրության հավելվածի պայմաններին համապատասխան (հոդվ. 4, կետ 1),
- Արձանագրության մեկնաբանման կամ կիրառման հետ կապված

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Վեճի առաջացման դեպքում՝ ձգտել լրություն գտնել բանակցությունների միջոցով կամ վեճի կողմերի համար ընդունելի՝ վեճերի կարգավորման այլ ցանկացած մեթոդի միջոցով (հոդվ. 7):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Յ**.

1. 1984 թվականի սեպտեմբերի 28-ին Ժնեվում ստորագրված՝ «Մեծ հեռավորությունների վրա օդի միջահմանային աղտոտվածության մասին» 1979 թվականի կոնվենցիայի՝ Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածումը դիտանցելու եւ գնահատելու համագործակցային ծրագրի (ԵԴԳԾ) երկարաժամկետ ֆինանսավորման վերաբերյալ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**24 մայիսի 2011 թվականի  
ՍԴԱ-964**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ**

**ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ՝ «ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ**

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ» ՖԻՆԱՆՍՎՈՐՄԱՆ**

**ՀԱՄԱՅՆՍՎՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ**

**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**24 մայիսի 2011 թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (գեկուցող), Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի ապրիլի 1-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Սիցագային զարգացման ընկերակցության միջև «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցակցության ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության աղիք է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը՝ սահմանադրական դատարան՝ մուտքագրված 06.05.2011թ.:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Սիցազգային զարգացման ընկերակցության միջեւ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցակցության ծրագիր» ֆինանսավորման համաձայնագիրն ստորագրվել է 2011 թվականի ապրիլի 1-ին՝ ընտրված համայնքներում արտավագրերի/անասնապահության համակարգերի արտադրողականությունը եւ կայունությունը բարձրացնելու նպատակով:

2. Համաձայնագրով նախատեսվում է, որ Սիցազգային զարգացման ընկերակցությունը համաձայնագրում սահմանված կամ դրանում նշված պայմաններով Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է տասը միլիոն երեք հարյուր հազար Փոխառության հատուկ իրավունքի (10.300.000 ՓՀԲ) գումարին համարժեք վարկ՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցակցության ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար: Վարկը տրամադրվում է 20 տարի ժամկետով, որից 10-ը՝ արտոնյալ (առանց մայր գումարի մարման): Վարկի մայր գումարի մարտն սկսվում է 2021թ. մայիսի 15-ից եւ ավարտվում 2030թ. նոյեմբերի 15-ին: Վարկի փակման ամսաթիվը 2016 թվականի սեպտեմբերի 30-ն է: Վարկի վճարման արժույթը ԱՄՆ դոլարն է:

3. Ծրագիրը բաղկացած է չորս մասից՝ Մաս Ա. «Համայնքային արտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ», Մաս Բ. «Օժանդակող ծառայությունների ամրապնդումը», Մաս Գ. «Մրցակցային դրամաշնորհների ծրագրը», Մաս Դ. «Ծրագրի կառավարումը եւ մոնիթորինգն ու գնահատումը»:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- վարկի չմասհանված հաշվեկշռի դիմաց, կիսամյակային մուծումներով, յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին եւ նոյեմբերի 15-ին Սիցազգային զարգացման ընկերակցությանը վճարել պարտավորության վճար՝ տարեկան առավելագույնը կես տոկոս (1 %-ի գ) դրույքաչափով,
- վարկի մասհանված հաշվեկշռի դիմաց՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին եւ նոյեմբերի 15-ին Սիցազգային զարգացման ընկերակցությանը վճարել սպասարկման տարեկան վճար՝ մեկ տոկոսի երեք քառորդին (1 %-ի Է) հավասար դրույքաչափով,

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ապահովել, որպեսզի Ծրագիրն իրականացվի Հակակոռուպցիոն ուղեցույցի դրույթներին համապատասխան եւ այլն:

5. Համաձայնագրի ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը դրա ստորագրման ամսաթվից հետո հարյուրքսաներորդ օրն է:

6. Համաձայնագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածին եւ բխում են միջազգային փոխահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստամի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. 2011 թվականի ապրիլի 1-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Սիցազգային զարգացման ընկերակցության միջև «Համանքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցակցության ծրագիր» ֆինանսվորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

24 մայիսի 2011 թվականի  
**ՍԴԱ-965**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝

«ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ԵՎ 4-ՐԴ՝

ՀՈԴՎԱՑՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004թ. ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի ԹԻՎ 207-Ն ՈՐՈՇՄԱՆ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ

ՀԱՄԱՊԱՏԱԽԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երեւան

3 հունիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոփյանի,  
Մ. Թռփուղյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի  
(զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Ա. Մաշինյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 1-ին եւ 4-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 13.01.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմու եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշումը, ՀՀ օրենսդրության այլ ակտեր, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՊԱՐՁԵՑ**.

1. «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի դեկտեմբերի 2-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի դեկտեմբերի 30-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

«Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ սույն գործով վիճարկվող 1-ին եւ 4-րդ հոդվածները համապատասխանաբար սահմանում են.

«Հոդված 1. Հայրենական մեծ պատերազմի վետերաններ հասկացությունը

Սույն օրենքով՝ Հայրենական մեծ պատերազմի վետերաններ (այսուհետ՝ վետերաններ) են Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիներն ու Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող այն անձինք, ովքեր մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին, ինչպես նաև պատերազմի տարիներին Լենինգրադի բլոկադայի մասնակիցները եւ ֆաշիստական համակենտրոնացման ճամբարների նախկին անշափահաս գերիները։ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավորապես բնակվող կամ գտնվող Հայրենական մեծ պատերազմին մասնակցած օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակը սահմանվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով։

Հոդված 4. Վետերանների սոցիալական պաշտպանվածության իրավունքը

Վետերանների սոցիալական պաշտպանվածությունն իրականացվում է սույն օրենքով եւ իրավական այլ ակտերով սահմանված կարգով։

Վետերաններն իրավունք ունեն պետական պատվերի շրջանակներում ստանալ անվճար բժշկական օգնություն եւ բժշկական սպասարկում, ինչպես նաև արտոնյալ պայմաններով ստանալ առողջարանային բուժման ուղեգրեր՝ զինծառայողների համար օրենքով սահմանված կարգով։

Վետերաններին էլեկտրահերգիայից եւ տրանսպորտից օգտվելու նպատակով, իսկ հաշմանդամ վետերաններին՝ նաև գազի, ջրամատա-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

կարարման, ջրահեռացման եւ ջերմամատակարարման վարձերը վճարելու համար տրփում է ամենամսյա դրամական օգնություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ չափով:

Հաշմանդամ վետերաններն իրավունք ունեն նաև՝

ա) («ա» կետն ուժը կորցրել է 29.11.06 ՀՕ-224-Ն օրենքով).

բ) 50 տոկոս զեղչով վճարել բնակարանի, աղքահանության, հեռախոսի եւ ռադիոյի վարձերը.

գ) ստանալ անվճար պրոբեզմավորում եւ վերականգնողական պարագաներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Վետերանն ստանում է ամենամսյա պատվովճար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Պատվովճարի գումարը հարկման ենթակա չէ եւ չի հաշվառվում վետերանների կամ նրանց ընտանիքների սոցիալական կարիքավորության աստիճանը որոշելիս:

Սույն հոդվածով սահմանված արտոնությունների իրականացման ծախսերը ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ շարգելված այլ միջոցների հաշվին»:

Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 207-Ն որոշումն ընդունվել է 2004թ. փետրվարի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից վավերացվել է 2004թ. մարտի 2-ին: Այդ որոշումը սահմանում է Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, նրանց հավասարեցված անձանց եւ զոհվածների ընտանիքներին դրամական օգնության նշանակման եւ վճարման կարգը:

ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 5-ի թիվ 672-Ն որոշմամբ թիվ 207-Ն որոշումն ուժը կորցրած է ճանաչվել: Միաժամանակ, ՀՀ կառավարությունը 2011թ. մայիսի 5-ին ընդունված «Զինծառայողներին եւ նրանց ընտանիքների անդամներին տրվող ամենամսյա դրամական օգնության չափերը՝ ըստ դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց կատեգորիաների, դրամական օգնություն նշանակելու եւ վճարելու կարգը սահմանելու մասին» թիվ 668-Ն որոշմամբ վերակարգավորել է Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, նրանց հավասարեցված անձանց եւ զոհվածների ընտանիքներին դրամական օգնության նշանակման եւ վճարման կարգի հետ կապված հարաբերությունները՝ այդպիսի օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց ցանկում ընդգրկելով նաև «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրով նախատեսված այլ կատեգորիայի անձանց:

2. Դիմող կողմը վիճարկվող դրույթների սահմանադրականության վերաբերյալ ներկայացնելով փաստարկներ՝ գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները։ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված՝ «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994թ. ԱՊՀ համաձայնագրի գործողությունը տարածվում է քաղաքացիական եւ Հայրենական մեծ պատերազմների հաշմանդամների ու մասնակիցների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների եւ անձանց այն դասերի վրա, որոնց, համաձայն նշված համաձայնագրին կից 1-ին հավելվածի, տրամադրված են արտոնություններ նախկին ԽՍՀՄ օրենսդրությամբ։ Այսպիսով, ինչպես եզրակացնում է դիմող կողմը, «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված արտոնությունները չպետք է պակաս լինեն նշված համաձայնագրին կից 2-րդ հավելվածով սահմանված արտոնությունների եւ երաշխիքների ծավալից։

Միաժամանակ, ըստ դիմող կողմի, վերոհիշյալ համաձայնագրի համակարգային վերլուծությունից բխում է, որ սահմանված արտոնությունների մեծ մասի կիրառման ապահովման համար պահանջվում է ներպետական մակարդակով համապատասխան իրավական ակտի ընդունում՝ արտոնության կիրառման կարգի նախատեսմամբ։ Բացի դրանից, համաձայնագրին կից 2-րդ հավելվածով սահմանված են մի շարք արտոնություններ, որոնք ընդհանրապես տեղ չեն գտել ՀՀ օրենսդրության մեջ կամ իրավահավասարության սկզբունքի խախտմամբ առանձին սոցիալական խմբերի համար սահմանվել են մասնակիորեն՝ հակասելով հանաձայնագրի պահանջներին։ Ըստ դիմող կողմի՝ համապատասխան արտոնություններ սահմանող նորմատիվ դրույթները հակասում են ՀՀ կողմից ստանձնված միջազգային պարտավորություններին՝ նաև արտոնությունների բովանդակության համապատասխանության տեսանկյունից։

Դիմոդ կողմը գտնում է նաև, որ համաձայնագրի կիրառման բնագավառում առկա են նաև բազմաթիվ դրույթները հակասում են ՀՀ կողմից ստանձնված միջազգային պարտավորություններին՝ նաև արտոնությունների բովանդակության համապատասխանության տեսանկյունից։

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թյուններ, մասնավորապես, 1994թ. ԱՊՀ համաձայնագրի 1-ին հավելվածով թվարկված բազմաթիվ դասերի անձինք, այդ թվում՝ 1994թ. ԱՊՀ համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետում նշվածները, չեն ներառվել «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում, ինչպես նաև ՀՀ կառավարության 2004թ. փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշմամբ Հայրենական մեծ պատերազմի վետերաններին հավասարեցված անձանց ցանկում: Միենանուած ժամանակ, նշված անձինք իրավակիրառական պրակտիկայում դիտվում են որպես պատերազմի վետերաններին կամ հաշմանդամ վետերաններին հավասարեցված անձինք եւ օգտվում են ՀՀ օրենսդրությամբ վերջիններիս համար սահմանված արտոնություններից (բացառությամբ ամենամյա պատվովճարի, որն օրենքով նախատեսված է միայն Հայրենական մեծ պատերազմին մասնակցած անձանց համար):

3. Պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովի դիրքորոշման համաձայն՝ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 4-րդ հոդվածում առկա իրավակարգավորումը չի կարող հակասել ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածում ամրագրված՝ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքին, քանի որ «օրենքի առջեւ հավասարության սահմանադրական սկզբունքն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն իրեւ զուտ ձեւական հավասարություն, այլ իրեւ իրավունքների ու ազատությունների օրենսդրական կարգավորման գնահատման սահմանադրական չափանիշ եւ, այս առումով, չպետք է բացառել այդ սկզբունքի կիրառման տարբեր դրսեւրումների հնարավորություն, երբ ձեւական հավասարության հաստատումը կարող է հանգեցնել նյութական անհավասարության: Մասնավորապես, տնտեսական եւ սոցիալական իրավունքների ու ազատությունների ձեւական հավասարության դեպքում որոշակի կատեգորիայի սուբյեկտներ կարող են հայտնվել անհավասար կարգավիճակում...: Իրավահավասարության սկզբունքի խախտում կիամարվեր, երբ միենույն կարգավիճակն ունեցող անձը ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 2-րդ մասում նշված որեւէ հիմքով զրկվեր արտոնությունից կամ առավելությունից: Մինչեւ օրենքը առանց որեւէ բացառության միենույն կատեգորիայի անձանց համար սահմանում է հավասար արտոնություններ եւ առավելություններ»:

Հստ պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի, վերոհիշյալ օրենքի վիճարկվող դրույթը չի հակասում նաև ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով ամրագրված յուրաքանչյուրի՝ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու, գործազրկության եւ օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունքին, քանի որ «տվյալ դեպքում օրենքով սահմանվել են արտոնություններ եւ առավելություններ»:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

որոշակի կատեգորիայի անձանց նկատմամբ: Ընդ որում, օրենքում նշված կատեգորիայի անձանց սոցիալական ապահովության իրավունքի իրականացնան եղանակներն ու մեխանիզմները նախատեսված են այլ օրենքներով...»: Ըստ ՀՀ Ազգային ժողովի դիրքորոշման՝ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթները չեն կարող հակասել ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասին, քանի օրենքի վիճարկվող դրույթի պարագայում իրավունքների սահմանափակման թույլատրելի կամ ոչ թույլատրելի շրջանակների մասին խոսել չի կարելի, քանի որ տվյալ պարագայում առկա է ոչ թե երաշխավորված իրավունք եւ դրա սահմանափակում, որը պետք է համապատասխանի սահմանափակման միջազգայնորեն սահմանված շրջանակներին, այլ առկա է որոշակի կատեգորիայի անձանց համար օրենքով սահմանված արտոնություն:

Ըստ պատասխանող կողմ ներգրավված ՀՀ կառավարության դիրքորոշման՝ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշման վիճարկվող դրույթները չեն հակասում ՀՀ Սահմանադրության 14.1-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածներին եւ 43-րդ հոդվածի 2-րդ մասին, քանի որ «ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանվել են որոշակի արտոնություններ հավասարապես բոլոր նրանց համար, ովքեր ունեն հաշմանդամ վետերանների եւ նրանց հավասարեցված անձանց կարգավիճակ», եւ որ ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածն իր ամբողջական արտացոլումն է գտել վերոհիշյալ իրավական ակտերում: ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասին վիճարկվող դրույթների անհամապատասխանության վերաբերյալ ՀՀ կառավարությունը գտնում է, որ իրավական այդ ակտերով սահմանվում են ոչ թե սահմանափակումներ, այլ տրամադրվում են արտոնություններ որոշակի կատեգորիայի անձանց համար, եւ այդպիսիք չեն կարող դիտարկվել որպես հիմնական իրավունքների եւ ազատությունների սահմանափակումներ:

4. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականությունը գնահատելիս հիմք ընդունել.

- ՀՀ միջազգային պայմանագրերի իրավաբանական ուժի եւ դրանցում ամրագրված նորմերի կիրառելիության սահմանադրական իրավակարգավորման բովանդակությունը,

- միջազգային պայմանագրերով եւ օրենքներով սահմանված՝ մարդու եւ քաղաքացու այլ իրավունքների ու ազատությունների երաշխավորման անհրաժեշտության սահմանադրական սկզբունքը,

- անձանց իրավունքները (այդ թվում՝ արտոնությունները) իրականաց-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Աելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը բացառապես օրենքով սահմանելու վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի պահանջը,

- մինչեւ սահմանադրական դատարանում գործի դատաքննությունը կամ դրա ընթացքում վիճարկվող իրավական ակտի կամ դրա դրույթի վերացման կամ ուժը կորցնելու իրավական հետեւանձների վերաբերյալ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի պահանջը:

Սույն գործի առարկայի շրջանակներում վետերանների սոցիալական պաշտպանության հետ կապված հարաբերությունների միջազգային իրավական կարգավորումն իրականացվում է «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձարար ճանաշման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ՍՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրով, որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1996 թվականի փետրվարի 26-ից: Այդ համաձայնագրի, «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի եւ դրանց կատարումն ապահովելու կոչված՝ սույն գործով վիճարկվող ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշման, ինչպես նաև սոցիալական ապահովության բնագավառի ՀՀ օրենսդրության այլ ակտերի համադրված վերլուծությունը վկայում է, որ, մասնավորապես՝ հիշյալ համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետով նախատեսված անձինք, որոնց համար վերոնշյալ միջազգային համաձայնագրի համաձայն (2-րդ հոդված) պետք է նախատեսվեին արտոնություններ, դուրս են մնացել այդպիսի իրավակարգավորման շրջանակից: ՀՀ օրենսդրությունը նաև մասնակիորեն է անդրադարձել վերոհիշյալ համաձայնագրով նախատեսված արտոնությունների ողջ ծավալին:

5. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Սահմանադրական այդ նորմի բովանդակությունից հետեւում է, որ ՀՀ միջազգային պայմանագրերը նորմատիվ իրավական ակտեր են, որոնք ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, այսինքն՝ բովանդակում են իրավակարգավորման համապատասխան բնագավառի սուբյեկտների համար վարքագծի պարտադիր կանոններ, ունեն ՀՀ օրենքներից եւ իրավական այլ ակտերից առավել բարձր իրավարանական ուժ,

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ենթակա են պարտադիր կատարման ՀՀ պետական եւ տեղական ինքնակառավարման բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից ՀՀ ողջ տարածքում:

Օրենքի նկատմամբ ՀՀ միջազգային պայմանագրերի գերակայության սահմանադրական սկզբունքն ամրագրված է ՀՀ գործող օրենսդրության բազմաթիվ ակտերում, այդ թվում՝ նաև «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում, որն ուղղակիորեն սահմանել է, որ «Եթե ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսվում են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»:

ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ նորմատիվ դրույթի բովանդակությունից ոչ միայն բխում է անձանց իրավունքների իրացման ու պաշտպանության հետ կապված հարաբերությունները հատկապես օրենքով կարգավորելու, այլև այդ հարաբերությունները լիարժեք եւ, առաջին հերթին՝ իրավունքի սկզբունքներին համապատասխան կարգավորելու սահմանադրահրավական պահանջ:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու եւ քաղաքացու իիմնական իրավունքները եւ ազատությունները չեն բացառում օրենքներով եւ միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ եւ ազատություններ: ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն իիշյալ իրավակարգավորումը սահմանափակման ենթակա չէ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդպիսի իրավունքներից եւ ազատություններից (այդ թվում՝ արտոնություններից) օգտվելը նույնպես անձի իրավունք է, որը ենթակա է երաշխավորման ու պաշտպանության ներպետական օրենսդրությամբ: **Միաժամանակ, օրենքով եւ իրավական այլ ակտերով չեն կարող բացառվել միջազգային որեւէ պայմանագրով նախատեսված իրավունքներ ու ազատություններ (այդ թվում՝ արտոնություններ) կամ սահմանափակվել այդպիսիք:**

ՀՀ Սահմանադրության վերոիիշյալ նորմերի սահմանադրահրավական բովանդակության բացահայտման եւ իրավակիրառական պրակտիկայում դրանց միակերպ ընկալումն ապահովելու անհրաժեշտության հետ միաժամանակ, սահմանադրական դատարանը կարեւորում է նաև Սահմանադրության նորմերի անմիջական գործողության վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի սկզբունքային պահանջը եւ դրա անվերապահ կատարման անհրաժեշտությունը:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

6. Անդրադառնալով «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականության խնդրին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրի խնդիրն է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում օրենքով նախատեսել անհրաժեշտ իրավակարգավորումներ՝ ապահովելու համար այդ պարտավորությունների կատարումը միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին, հետեւաբար՝ նաև ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված սկզբունքին համապատասխան, որոնք միտքած լինեն ոչ միայն պետությունների հետ բարիդրացիական եւ փոխչափակետ հարաբերություններ հաստատելու, այլև անձանց իրավունքները երաշխավորված պաշտպանելու նպատակին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական զործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՀ շրջանակներում կնքված **համաձայնագրի դրույթների ոչ լիարժեք իրացումը պայմանավորված է ոչ թե վերոհիշյալ օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականության խնդրով, այլ իրավակիրառական պրակտիկայում այդ նույն օրենքի 3-րդ հոդվածի նորմատիվ պահանջի անտեսմամբ:**

ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴ-668 որոշմամբ (5-րդ կետ) արձանագրել է, որ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքը սահմանելով «Հայրենական մեծ պատերազմի վետերաններ» հասկացությունը, չի անդրադարձել համաձայնագրի թիվ 1 հավելվածի 2.3. կետում նշված անձանց, եւ որ իրավակիրառական պրակտիկայում «պատերազմի վետերաններ» հասկացությունը մեկնաբանելիս՝ անվերապահորեն պետք է հիմք ընդունել նաև համաձայնագրի թիվ 1 հավելվածի 2.3. կետի դրույթները: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ինչպես վկայում է իրավակիրառական պրակտիկան, ՍԴ-668 որոշման հիշյալ պահանջը չի իրացվել: Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառական պրակտիկայում հիշյալ օրենքի 3-րդ հոդվածի նորմատիվ պահանջը պետք է հաշվի առնվի ոչ միայն «պատերազմի վետերաններ» հասկացության, այլև անձանց նկատմամբ համաձայնագրով նախատեսված արտոնությունները լրիվ ծավալով կիրառելու առնչությամբ: Անդրադառնալով պատասխանող կողմի (ՀՀ կառավարություն) հայտնած այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ «ՀՀ Սահմանադրական դատարանի 28.11.2006թ. թիվ ՍԴ-668 որոշման 5-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները նորից հաշվի առնելու անհրաժեշտություն չկա», սահմանադրական դատարանն արձանագրում

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Է, որ, վերահաստատելով ՍԴՈ-943 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, իրավակիրառական պրակտիկան պարտավոր է հաշվի առնել իրավական ակտերի (որանց առանձին դրույթների) սահմանադրահրավական բովանդակության վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այլ պրակտիկայի ձեւավորումը կիակասի ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ սահմանադրական կարգի հիմնարար սկզբունքներին:

7. ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ կառավարությունն ընդունում է որոշումներ՝ ապահովելու համար նաև միջազգային պայմանագրերի եւ օրենքների կատարումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

ՀՀ կառավարության սահմանադրական պարտականությունն է իր որոշմամբ սահմանել «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրի, ինչպես նաև «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի դրույթների կատարման կարգն ու պայմանները՝ այնպիսի ծավալով ու բովանդակությամբ, ինչպիսին անմիջականորեն բխում է այդ ակտերից եւ Սահմանադրությամբ ու օրենքներով իրեն վերապահված լիազորություններից՝ հաշվի առնելով նաև սահմանադրական դատարանի ՍԴՈ-668 որոշման 5-րդ կետում արտահայտված դիրքորոշումը:

Վերոհիշյալ համաձայնագրի եւ օրենքի, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմի վետերանների սոցիալական ապահովության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության այլ ակտերի դրույթների համադրված վերլուծությունը վկայում է, որ 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը լիարժեք պայմաններ չի նախատեսել Հայրենական մեծ պատերազմի վետերանների, նրանց հավասարեցված անձանց, զոհված զինծառայողների ընտանիքների՝ ՀՀ միջազգային պայմանագրով եւ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների եւ երաշխիքների ամբողջական իրացումն ապահովելու համար: ՀՀ կառավարությունը չի անդրադարձել նաև ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-668 որոշման կատարման ապահովմանը: Մասնավորապես՝ կառավարության հիշյալ որոշման իրավակարգավորման շրջանակներից դրւու են բողնվել ՀՀ միջազգային համաձայնագրով պատերազմի հաշմանդամ համարվող որոշակի թվով անձինք (հիշյալ համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետ),

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

որոնք նախկինում օգտվել են պատերազմի հաշմանդամների համար նախատեսված արտոնություններից: ՀՀ կառավարության 05.02.2004թ. թիվ 207-Ն որոշմամբ նախկին որոշումները ուժը կորցրած ճանաչելով եւ հիշյալ անձանց համար դրամական փոխհատուցում չնախատեսելով՝ տեղի է ունեցել նրանց՝ ՀՀ միջազգային պարտավորություններով նախատեսված իրավունքի արգելափակում: Ընդ որում, ՀՀ դատավան պրակտիկան նույնապես փաստել է, որ պատերազմի հաշմանդամ ճանաչելով վերաբերյալ քաղաքացիների պահանջը հստակ իր լուծումն է ստացել «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձարար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրում, սակայն հենվելով ՀՀ կառավարության՝ սույն գործով վեճի առարկա որոշման վրա՝ չի բավարարվել քաղաքացիների հայցադիմումը՝ իրենց արտոնությունները պահպանելու կամ դրամական փոխհատուցում տալու հարցով:

ՀՀ սահմանադրական դատարանը հիմնավոր է համարում դիմող կողմի դիրքորոշումը՝ ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշման սահմանադրականության վերաբերյալ, գտնելով, որ, դեկավարվելով ՀՀ Սահմանադրության 6-րդ (1-ին եւ 4-րդ մասեր), 42-րդ (1-ին մաս), 44-րդ, 85-րդ (2-րդ մաս) հոդվածներով, ինչպես նաև «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով, ՀՀ կառավարությունը պարտավոր էր իր որոշմամբ ապահովել Հայրենական մեծ պատերազմի վետերանների եւ նրանց հավասարեցված անձանց սոցիալ-տնտեսական արտոնությունների գործողությունը կամ դրանց դրամական փոխհատուցումը՝ նաև այն կատեգորիայի անձանց համար, որը նախատեսված է հիշյալ համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունն իր՝ 2011թ. մայիսի 5-ի թիվ 672-Ն որոշմամբ սույն գործով փիճարկվող թիվ 207-Ն որոշումն ուժը կորցրած է ճանաչել: Իր՝ 2011թ. մայիսի 5-ին ընդունված «Զինծառայողներին եւ նրանց ընտանիքների անդամներին տրվող ամենամսյա դրամական օգնության չափերը՝ ըստ դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց կատեգորիաների, դրամական օգնություն նշանակելու եւ վճարելու կարգը սահմանելու մասին» թիվ 668-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը վերակարգավորել է Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, նրանց հավասարեցված անձանց եւ զոհվածների ընտանիքներին դրամական օգնության նշանակման եւ վճարման կարգի հետ կապված՝ 2011 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունները: Նման

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց ցանկում ընդգրկվել են նաև «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում նարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրով նախատեսված անձանց:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստամի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ կետով, 63-րդ, 64-րդ եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 1-ին եւ 4-րդ հոդվածները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածին (2-րդ մաս), 85-րդ հոդվածին (2-րդ մաս), 43-րդ հոդվածին (2-րդ մաս) հակասող ճանաչել ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշումը՝ «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում նարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՀ շրջանակներում կնքված եւ Հայաստանի Հանրապետության համար 1996 թվականի փետրվարի 26-ից ուժի մեջ մտած համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետում նշված անձանց իրավունքների իրացման կարգ չնախատեսելու եւ այդ իրավունքներն արգելափակելու մասով՝ հաշվի առնելով սույն որոշման պատճառաբանական մասի 6-րդ եւ 7-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները եւ ի գիտություն ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 668-Ն որոշումը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

3 հունիսի 2011 թվականի  
**ՍՊԸ-966**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

«ՇՈՐՔԵՓ ԻՆԹԵՐՆԵՅՑՆԼ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԽՄԱՆ ՎՐԱ՝  
«ԸԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԻ 57-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ (ՄԻՆՉԵՎ 09.01.2009թ.)

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երեւան

7 հունիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի,  
Մ. Թոփուզյանի (գեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի,  
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Ա. Մարտիրոսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի  
խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դուքսաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Շորքեփ Ինքերնեյշնլ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Շորքեփ Ինքերնեյշնլ» ՍՊԸ-ի՝ 02.03.2011թ.  
ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Շահութահարկի մասին»ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997 թվականի սեպտեմբերի 30-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1997 թվականի նոյեմբերի 27-ին եւ ուժի մեջ է մտել 1998 թվականի հունվարի 1-ից:

Սույն գործով դիմողը վիճարկում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետը (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ)՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնարանությամբ:

Օրենքի վիճարկվող նորմը (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) սահմանում էր.

«Եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկի պահման (գանձման) հնարավորության բացակայության (այսինքն՝ հարկային գործակալի բացակայության) դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե շահութահարկի վճարման պարտավորությունը կրում է հայաստանյան աղբյուրներից եկամուտներ ստացող ոչ ռեզիդենտը՝ սույն օրենքի 60-63 հոդվածներով սահմանված կարգով եւ ժամկետներում»:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված՝ ««Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-248-Ն ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 2009 թվականի հունվարի 9-ին, օրենքի վիճարկվող նորմում լրացում է կատարվել: Մասնավորպես, օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետը «ժամկետներում» բառից հետո լրացվել է «...՝ հիմնվելով սույն հոդվածի 1-ին կետում նշված դրույքաչափերի վրա» բառերով:

Օրենքի (ներկա խմբագրությամբ)՝ «Ոչ ռեզիդենտի շահութահարկի դրույքաչափերը» վերտառությամբ 57-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 3-րդ կետը սահմանում է.

«Եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկի պահման (գանձման) հնարավորության բացակայության (այսինքն՝ հարկային գործակալի բացակայության) դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե շահութահարկի վճարման պարտավորությունը կրում է հայաստանյան աղբյուրներից եկամուտներ ստացող ոչ ռեզիդենտը՝ սույն օրենքի 60-63 հոդվածներով սահմանված կարգով եւ ժամկետներում՝ հիմնվելով սույն հոդվածի 1-ին կետում նշված դրույքաչափերի վրա»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմողը 25.06.2009թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Վարչական դատարան ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության՝ պահանջելով փոփոխել հարկային տեսչության՝ 27.04.2009թ. թիվ 01-09 ծանուցագիրը՝ միջամտող վարչական ակտը, եւ հայցվորի՝ հայաստանյան աղբյուրից գույքի արժեքի հավելածի տեսքով ստացված եկամտից շահութահարկը հաշվարկել 10 տոկոս դրույքաչափով՝ կիրառված 20 տոկոսի փոխարեն։ ՀՀ վարչական դատարանի՝ 08.06.2010թ. թիվ ՎԴ/3027/05/09 վճռով հայցը մերժվել է։

Մերժելով հայցը՝ ՀՀ վարչական դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքները, որ «Շորքեփ Ինքերնեյշն» ՍՊԸ-ն շահույթ է ստացել 2008 թվականին, իսկ ««Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-248-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ է մտել 2009 թվականի հունվարի 9-ին, հղում կատարելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասին, գտել է, որ ՀՕ-248-Ն ՀՀ օրենքով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետում կատարված լրացումը՝ «եթե այն վերաբերում է հարկային գործակալի բացակայության դեպքում շահութահարկի հաշվարկման տոկոսներին», ընկերության համար կիրառելի չէ։

ՀՀ վարչական դատարանի վերը նշված վմիտը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որը, վերահաստատելով ՀՀ վարչական դատարանի՝ 08.06.2010թ. թիվ ՎԴ/3027/05/09 վճռում ամրագրված իրավական դիրքորոշումները, իր՝ 11.08.2010թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է։

**3. Փորձելով հիմնավորել վիճարկվող նորմի հակասահմանադրականությունը՝ դիմողը, մասնավորապես, շեշտադրում է հետեւյալ հանգամանքները՝**

- շահութահարկի վճարման կարգը ոչ մի դեպքում չի ներառում շահութահարկի դրույքաչափը, եւ վերջինս չի կարող դիտարկվել որպես վճարման կարգի բաղադրատարը,
- օրենքի վիճարկվող նորմը, միայն վճարման կարգի առնչությամբ հղում կատարելով օրենքի 60-63-րդ հոդվածներին, չի հստակեցնում ոչ ռեզիդենտների կողմից վճարվող շահութահարկի դրույքաչափը, որի արդյունքում այն դարձել է այնքան անորոշ եւ հակասական, որ հնարավոր չէ հստակ հետեւություն անել, թե ոչ ռեզիդենտ տնտեսավարող սուրյեկտը հարկային գործակալի բացակայության դեպքում ինչ դրույքաչափով պետք է շահութահարկ հաշվարկի եւ վճարի,
- օգտվելով այս անորոշությունից՝ դատարանը կամայական մեկնաբանություն է տվել վիճարկվող նորմին եւ դիմողի նկատմամբ կիրառել ռեզիդենտների համար սահմանված դրույքաչափը,
- վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 14.1-րդ

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հոդվածում ամրագրված իրավահավասարության սկզբունքին, քանի որ հարկային գործակալի առկայության դեպքում ոչ ոեզի-դենտի շահույթը հարկվում է 5% կամ 10% դրույքաչափով, մինչդեռ նույն ոչ ոեզիդենտի շահույթը հարկային գործակալի բացակայության դեպքում՝ 20% դրույքաչափով:

Վերոհիշյալ տեսակետների հիման վրա դիմողը գտնում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետը (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ)՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 8-րդ եւ 14.1-րդ հոդվածներին:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ «Շորքեփ Ինքերնեյշն» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ)՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը ենթակա է կարճանան այն պատճառաբանությամբ, որ օրենքի վիճարկվող նորմը սահմապատասխանում է իրավական որոշակիության պահանջին, եւ այդ պայմաններում դիմողը, ձեւական առումով առաջադրելով օրենքի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է վարչական ակտով իրեն վնաս պատճելու հանգամանքի գնահատման խնդիր:

Հերքելով դիմողի դիրքորոշումը՝ կապված այն հանգամանքի հետ, որ շահութահարկի վճարման կարգը չի ներառում շահութահարկի դրույքաչափը, պատասխանողը գտնում է, որ օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 61-րդ հոդվածը կարգավորում էր շահութահարկի հաշվառման կարգը՝ առանց դրա դրույքաչափը սահմանելու: Դրույքաչափը սահմանվում էր նույն օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 33-րդ հոդվածով: Այս պարագայում պատասխանողը գտնում է, որ վիճարկվող նորմը չէր կարող ունենալ «սույն օրենքի 60-63 հոդվածներով սահմանված դրույքաչափով, կարգով եւ ժամկետներում» ձեւակերպումը, ինչպես պնդում է դիմողը: Իր այդ դիրքորոշումը պատասխանողը հիմնավորում է՝ հղում կատարելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված՝ ««Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-248-Ն ՀՀ օրենքի նախագծի՝ ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողով ներկայացված հիմնավորմանը:

Անդրադարձալով դիմողի նկատմամբ ««Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-248-Ն ՀՀ օրենքի կիրառման հիմարավորությանը՝

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

պատասխանողը, հղում կատարելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասին, գտնում է, որ մինչեւ ՀՕ-248-Ն ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են «Հահութահարկի մասին» ՀՀ օրենքով (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) սահմանված նորմերը:

5. ՀՀ սահմանադրական դատարանը չի ընդունում պատասխանող կողմի միջնորդությունը՝ գործի վարույթը կարճելու վերաբերյալ, գտնելով, որ գործի ըստ էռոքյան քննությունը կարեւոր է վեճի առարկա իրավանորմի սահմանադրափական բովանդակության բացահայտման տեսանկյունից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն իր իրավունքների խախտումը հիմնականում պայմանավորում է սույն գործի քննության առարկա դրույթներին իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, ինչպես նաև նրանով, որ՝

- օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 33-րդ հոդվածը վերաբերում էր ոեզիդենտի, այլ ոչ թե ոչ ոեզիդենտի շահութահարկի դրույքաչափին,
- օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 61-րդ հոդվածի 1-ին կետը վերաբերում էր Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր ունեցող (օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով), այլ ոչ թե այդպիսիք չունեցող ոչ ոեզիդենտի շահութահարկի հաշվարկին,
- օրենքը (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) չի սահմանում Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր չունեցող ոչ ոեզիդենտի շահութահարկի վճարման կարգը եւ շահութահարկի դրույքաչափը՝ հարկային գործակալի բացակայության դեպքում,

հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի եւ 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում վիճարկվող իրավանորմը դիտարկել օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) մյուս նորմերի հետ համապության մեջ՝ իրավական անորոշության եւ խտրական վերաբերմունքի բացահայտման տեսանկյուններից:

6. Օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) վերլուծությունը վկայում է, որ՝

- ի տարբերություն ոեզիդենտների, օրենքը չուներ հատուկ նորմ, որը կվերաբերեր Հայաստանի Հանրապետությունում ոչ ոեզիդենտների շահութահարկի դրույքաչափին հարկային գործակալի բացակայության դեպքում,

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ի տարբերություն Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր ունեցող ոչ ռեգիստրացիական օրենքը չուներ հատուկ նորմ, որը կվերաբերեր Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր չունեցող ոչ ռեգիստրացիական շահութափակի հաշվարկին,
- օրենքի 33-րդ հոդվածը վերաբերում էր **ռեգիստրացիական**, այլ ոչ թե ոչ ռեգիստրացիական շահութափակի դրույքաչափին,
- օրենքի 61-րդ հոդվածի 1-ին կետը վերաբերում էր Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր ունեցող, այլ ոչ թե այդպիսի չունեցող ոչ ռեգիստրացիական շահութափակի հաշվարկին:

Միեւնույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նշված հանգամանքները իմք չեն տալիս պնդելու, որ օրենքը չէր սահմանում Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր չունեցող ոչ ռեգիստրացիական շահութափակի վճարման կարգը եւ շահութափակի դրույքաչափը՝ հարկային գործակալի բացակայության դեպքում։

Նշված իրավական դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ իրավական տեխնիկայի առումով թույլատրելի է այն դեպքը, եթե իրավաստեղծ մարմինը տվյալ իրավահարաբերության կարգավորման համար հատուկ նորմեր սահմանելու փոխարեն հղում կատարի մեկ այլ նմանատիպ իրավահարաբերություն կարգավորող նորմերին՝ դրանով իսկ վերջիններս կիրառելի դարձնելով առաջին իրավահարաբերության կարգավորման համար։ Տվյալ դեպքում օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 57-րդ հոդվածի 3-րդ կետը, ի թիվս այլնի, հղում էր կատարում օրենքի՝ մեկ այլ նմանատիպ իրավահարաբերություն կարգավորող 61-րդ հոդվածի 1-ին կետին, որն էլ, իր հերթին, հղում էր կատարում օրենքի՝ դարձյալ մեկ այլ իրավահարաբերություն կարգավորող 33-րդ հոդվածին՝ վերջիններս կիրառելի դարձնելով Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր չունեցող ոչ ռեգիստրացիական առնչությամբ՝ հարկային գործակալի բացակայության դեպքում։ Հիմք ընդունելով վերոգրյալը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 33-րդ հոդվածով **ռեգիստրացիական** համար սահմանված դրույքաչափը, ինչպես նաև օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 61-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր ունեցող ոչ ռեգիստրացիական շահութափակի հաշվարկի վերաբերյալ դրույթները կիրառելի էին նաև Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր ունեցող ոչ ռեգիստրացիական շահութափակի առնչությամբ՝ հարկային գործակալի բացակայության դեպքում, եւ իրավակիրառողն առաջնորդվել է այդպիսի դիրքորոշմամբ։

Այլ խնդիր է, թե արդյո՞ք օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 61-րդ հոդվածը, որին հղում էր կատարում օրենքի վիճարկվող նոր-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

մը, եւ որը վերաբերում էր շահութահարկի վճարման պարտականության կատարման կարգին, միաժամանակ սահմանում էր շահութահարկի դրույթաչափ: Այս խնդրի պարզաբանման նպատակով սահմանադրական դատարանը հարկ է համարում օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) շրջանակներում վերլուծել շահութահարկի վճարման պարտականության բովանդակային ծավալը: Օրենքի ուսումնավիրությունից բխում է, որ ոչ ոեզիդենտների շահութահարկի վճարման պարտականության կատարման համար հարկային տեսչության մարմինը ոչ ոեզիդենտի կամ նրա լիազոր անձի ներկայացրած տարեկան եկամուտների մասին հայտարարագրի հիման վրա ոչ միայն պարտավոր էր հաշվարկել շահութահարկը, այլ նաև ընտրել եւ կիրառել շահութահարկի դրույթաչափ սահմանող համապատասխան նորմը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում շահութահարկի դրույթաչափ սահմանող նորմին հղում կատարելը չի կարող դիտարկվել որպես շահութահարկի դրույթաչափի սահմանում, այլ պետք է դիտարկվի որպես շահութահարկի դրույթաչափ սահմանող համապատասխան նորմն ընտրելու եւ կիրառելու պարտականություն, որն ընդգրկվում է «շահութահարկի հաշվարկի կարգ» կամ «շահութահարկ վճարելու պարտականություն» հասկացությունների բովանդակային ծավալում:

Տվյալ դեպքում օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 61-րդ հոդվածը, որը հղում էր կատարում օրենքի՝ շահութահարկի դրույթաչափ սահմանող 33-րդ հոդվածին, ոչ թե սահմանում էր շահութահարկի դրույթաչափ, այլ հարկային մարմնի համար սահմանում էր պարտականություն՝ շահութահարկի դրույթաչափ սահմանող տարբեր նորմերի շրջանակում ընտրելու եւ կիրառելու շահութահարկի դրույթաչափ սահմանող համապատասխան նորմը:

Նման պայմաններում, չբացառելով այն հանգամանքը, որ, ինչպես պնդում է դիմողը, շահութահարկի վճարման կարգը չի ներառում շահութահարկի դրույթաչափը, եւ վերջինս չի կարող դիտարկվել որպես վճարման կարգի բաղադրատարր, սահմանադրական դատարանն անհիմն է համարում դիմողի դիրքորոշումները՝ կապված այն հանգամանքների հետ, որ օրենքի վիճարկվող նորմում առկա էր իրավական անորոշություն, կամ օրենքը (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) չէր սահմանում Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր չունեցող ոչ ոեզիդենտի շահութահարկի վճարման կարգը եւ շահութահարկի դրույթաչափը՝ հարկային գործակալի բացակայության դեպքում, կամ օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) 61-րդ հոդվածը սահմանում էր շահութահարկի դրույթաչափ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենքի առանձին հասկացությունների բովանդակությունը չի կարող ինքնարակ

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

լինել: Դրանք պետք է դիտարկել ընդհանուր իրավակարգավորման համակարգային ամբողջականության մեջ:

Ինչ վերաբերում է իրավակիրառական պրակտիկայի վերաբերյալ դիմողի պնդումներին, ապա փաստն այն է, որ վեճի առարկա իրավանորմի առնչությամբ առկա չէ հակասական իրավակիրառական պրակտիկա, եւ դատական պրակտիկան հստակ առաջնորդվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի պահանջներով:

7. Անդրադառնալով վիճարկվող իրավանորմը խորական վերաբերմունքի բացահայտման տեսանկյունից դիտարկելու խնդրին՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում նախ՝ պարզել, թե արդյո՞ք հարկային գործակալի առկայությունը կամ բացակայությունը հանդիսանում էր բավարար հիմք ոչ ռեգիդենտների նկատմամբ տարբերակված մոտեցում ցուցաբերելու կամ վերջիններիս որպես տարբեր իրավական կարգավիճակ ունեցող սուբյեկտների դիտարկելու համար:

Նշված հանգամանքների բացահայտումը կարենուրվում է նրանով, որ օրենքի՝ դիմողի կողմից շահութահարկ վճարելու պարտականության ծագման պահին գործող տերստի 57, 61 եւ 33-րդ հոդվածների համաձայն, պայմանավորված հարկային գործակալի առկայությամբ կամ բացակայությամբ, ոչ ռեգիդենտների համար սահմանված էին շահութահարկի տարբեր դրույքաչափեր: Մասնավորապես, կախված եկամտի տեսակից՝ հարկային գործակալի առկայության դեպքում ոչ ռեգիդենտների համար որպես շահութահարկի դրույքաչափ սահմանված էր 5 կամ 10 տոկոս, իսկ հարկային գործակալի բացակայության դեպքում ոչ ռեգիդենտների համար, անկախ եկամտի տեսակից՝ 20 տոկոս:

Հարկային քաղաքականություն մշակելիս եւ իրականացնելիս պետությունն օժտված է որոշակի հայեցողությամբ: Հարկային իրավահարաբերությունները կարող են ունենալ բազմաթիվ առանձնահատկություններ, դրանց բովանդակությունը կարող է հաճախակի փոփոխությունների ենթարկվել, իսկ այդ փոփոխությունները պայմանավորված լինեն պետության ֆինանսատնտեսական քաղաքականությամբ, զարգացման առաջնահերթություններով, ռազմավարական խնդիրները լուծելու պահանջով, տնտեսական հարաբերությունները կատարելագործելու, տնտեսության որոշակի ոլորտների զարգացումը խրախուսելու, ինչպես նաև հարկային վարչարարությունը կատարելագործելու նպատակով: Նշված այս հանգամանքների կամ դրանցից որեւէ մեկի առկայությունը կարող է հիմք ծառայել հարկային քաղաքականության մեջ փոփոխություններ նեցնելու, հարկային իրավահարաբերություններում արտոնություններ կամ առավել բարենպաստ պայմաններ սահմանելու համար: Յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ այս ամենի իմացությամբ եւ իր ազատ կամաքարտա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հայտմամբ է մտնում տնտեսական հարաբերությունների մեջ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ենթադրյալ խտրականության դեպքում առկա պետք է լինի մի իրավիճակ, եթե տվյալ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրսեւրվում է տարբերակված մոտեցում նույն իրավիճակում գտնվող այլ սուբյեկտի համեմատությամբ, ում նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ է: Մինչդեռ տվյալ դեպքում նման իրավիճակ առկա չէ: Օրենքի (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) վերլուծությունը վկայում է, որ, ելնելով վերոգրյալ նպատակներից, օրենսդիրը սահմանել էր որոշակի հարկային քաղաքականություն՝ իրավաչափորեն տարբերակում դնելով ոչ ռեզիդենտ հարկատունների եկամուտների հարկման միջեւ՝ հիմք ընդունելով հարկային գործակալի առկայության կամ բացակայության հստակ չափանիշը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում վերը նշված նպատակներով պայմանավորված՝ հարկային գործակալի առկայության կամ բացակայության հիմքով ոչ ռեզիդենտների միջեւ տարբերակումը, որը սահմանված էր մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ օրենքի տեքստում, բացառել է, որպեսզի հարկային գործակալի առկայության եւ բացակայության պայմաններում հարկվող ոչ ռեզիդենտները դիտարկվեն որպես նույն իրավիճակում գործող սուբյեկտներ: Դրանք, օրենքով սահմանված որոշակի կարգի առկայության պայմաններում, տնտեսական հարաբերությունների մեջ են մտել միանգամայն կանխատեսելի վարքագծով եւ տարբեր իրավիճակներում գործող սուբյեկտներ են: Նման պայմաններում սահմանադրական դատարանն անհիմն է համարում նաև դիմողի այն դիրքորոշումը, որը կապված է վիճարկվող իրավանորմի գործողության հետեւանքով իրավահավասարության սկզբունքի խախտման հետ:

Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում արձանագրել, որ ոչ ռեզիդենտ տնտեսավարող սուբյեկտները Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս կարող էին եւ պետք է տեղյակ լինեին օրենսդրությամբ սահմանված այլնատրանքային հնարավորությունների մասին՝ կապված հարկային գործակալի առկայության կամ բացակայության դեպքում ոչ ռեզիդենտներին ցուցաբերվող տարբերակված մոտեցման մասին, եւ հնարավորություն ունեին ընտրություն կատարել իրենց ընձեռված հնարավորությունների սահմաններում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Յ**.

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետը (մինչեւ 09.01.2009թ. խմբագրությամբ) համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**7 հունիսի 2011 թվականի  
ՍՊ-967**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2010 թվականի Դեկտեմբերի 10-ին ՄՈՍԿՎԱՅՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ  
ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՐԳԻ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ԿԱԶՄԱԿՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳՎՎԵԱՎԿ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՍՏԱՏՄԱՆ ԽԱՐՑ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

9 հունիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի,  
Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող),  
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների կազմավորումների կարգավիճակի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 19 մայիսի 2011թ. ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով Համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթրերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմավորումների կարգավիճակի մասին համաձայնագիրն ստորագրվել է 2010թ. դեկտեմբերի 10-ին՝ Մոսկվայում:

Համաձայնագրի նպատակը «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների տարածքներում հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմավորումների ժամանակավոր գոնվելու համար իրավական հիմք ստեղծելն է:

Ըստ Համաձայնագրի՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմավորումներ նշանակում են՝ Ընդունող կողմի տարածք ժամանակավորապես ուղարկվող՝ Կողմերի ազգային գինված ուժերից եւ այլ զորքերից առանձնացված միավորումներ, կազմավորումներ, գինվորական մասեր եւ ստորաբաժանումներ, ներքին գործերի մարմինների (ոստիկանության) հատուկ նշանակության ստորաբաժանումներից (մասնագետների խմբեր), ներքին զորքերից, անվտանգության մարմիններից եւ հատուկ ծառայություններից, ինչպես նաև արտակարգ իրավիճակների նախազգուշացման եւ վերացման ոլորտում Կողմերի լիազորված մարմինների կազմից առանձնացված՝ զորքերի (ուժերի) կուլիցիոն տարածաշրջանային (միավորված) խմբավորումների կազմում հատկացված հատուկ նշանակության ուժերի կազմավորումներ:

Ըստ Համաձայնագրի՝ ուղարկող կողմի կազմավորումները կարող են ուղարկվել ընդունող կողմի տարածք՝ վերջինիս պաշտոնական դիմումին համապատասխան, հավաքական պաշտպանության իրավունքի իրազործման նպատակով՝ մեկ կամ մի քանի Կողմերի նկատմամբ գինված հարձակում (ազրեսիա) գործելու եւ/կամ դրա սպառնալիքի դեպքում, հավաքական անվտանգության սպառնացող այլ մարտահրավերներին հակազդելու, արտակարգ իրավիճակների վերացման, ինչպես նաև հրամանատարաշտարային ու զորային համատեղ զորավարժաների անցկացման համար:

Կազմավորումների մուտք գործելու, խնդիրների, կազմի, թվաքանակի, նրանց ենթակայության կարգի, տեղակայման վայրերի, ինչպես նաև ընդունող Կողմի տարածքում նրանց մնալու ժամկետի մասին որոշումն ընդունում է Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության հավաքական անվտանգության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ)՝ մեկ կամ մի քանի Կողմերի պաշտոնական դիմումի հիման վրա:

## **ՀԱՅՍՏԱՆԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս այլնի, պարտավորվում է.

- որպես ընդունող Կողմ որոշում ընդունել հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմավորումների՝ իր տարածք մուտք գործելու մասին, եթե այն չի հակասում իր ազգային օրենսդրությանը,
- քույլատրել ՀՀ տարածքում՝ տեղանքի (շրջանների) հատկացված տեղամասերի եւ օբյեկտների սահմաններում, որպեսզի կազմավորումները, իրենց առաջադրված խնդիրների կատարման հետ կապված, անցկացնեն հրամանատարաշտաբային եւ զորային վարժություններ, ինչպես նաև օպերատիվ եւ մարտական պատրաստության այլ միջոցառումներ,
- որպես ընդունող Կողմ գրավոր ծանուցել մյուս Կողմներին իր պետական սահմանի ենթադրվող հատման՝ իր սահմանած տեղի, ժամանակի, կարգի մասին եւ անհրաժեշտ պայմաններ ստեղծել անձնակազմերով եւ շարժական գույքով իր տարածքով դեպի նշանակված վայր տեղափոխվող զինվորական շարասյուների, օդանավերի եւ ծովային (գետային) նավերի, ավտոշարասյուների անհատույց ու անարգել տեղաշարժման համար, անհատույց ապահովել անշարժ գույքի (անշարժ գույքի օբյեկտներում) տեղաբաշխումն ու դրանց օգտագործումը, եթե այլ բան սահմանված չէ Խորհրդի որոշումներով,
- ապահովել ՀՀ տարածքում գործող ռազմական եւ քաղաքացիական օդանավակայաններում օդանավերի ընդունումը, օդանավակայանային ծառայությունների կողմից օդանավակայանային տեխնիկական ապահովումը եւ պահպանության անհատույց իրականացումը,
- ապահովել իր տարածքներով դեպի նշանակված վայր կազմավորումների եւ նրանց շարժական գույքի անարգել շարժը, ինչպես նաև նախնական հայտերի հիման վրա՝ երկաթուղային, ավտոմոբիլային, ծովային, գետային եւ օդային տրանսպորտի ու տրանսպորտային հաղորդակցությունների առաջնահերթ տրամադրումը՝ իր ազգային օրենսդրությանը համապատասխան,
- իր վրա վերցնել կազմավորումներին անհրաժեշտ անշարժ գույքով (անշարժ գույքի օբյեկտներով) անհատույց ապահովման հետ կապված միջոցառումների կազմակերպման պատասխանատվությունը,
- կազմավորումներին անհատույց հիմունքներով տրամադրել էլեկտրաէներգիա, ջուր, ապահովել նրանց կողմից առաջադրված խնդիրների կատարման համար անհրաժեշտ ծավալով կոմունալ-կենցաղային սպասարկումը,
- որպես ընդունող Կողմ ամբողջ ծավալով ապահովել կազմավո-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

բումների դրամարկղահաշվարկային ծառայությունը՝ իր ազգային օրենսդրությանը համապատասխան,

- ՀՀ տարածք մուտք գործելու եւ ՀՀ տարածքից դուրս գալու դեպքում կազմավորումների անձնակազմի վրա չտարածել վիզային հսկողությունը,
- կազմավորումների անձնակազմի վրա չտարածել ՀՀ օրենսդրությունը՝ օտարերկրացիների գրանցմանը եւ նրանց նկատմամբ հսկողության իրականացմանը վերաբերող մասով,
- Համաձայնագրի իրագործման նպատակով տեղափոխվող կազմավորումների շարժական գույքի ներմուծումն ու արտահանումն իրականացնել առաջնահերթության կարգով, առանց արգելքների եւ սահմանափակումների կիրառման եւ բոլոր տեսակի հարկերի ու սուրբերի գանձման,
- իր տարածքում իրականացնել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կազմավորումների շարժական գույքը մինչեւ տեղակայման վայր հասցնելու համար,
- մաքսային զննության չենթարկել կազմավորման իրամանատարության՝ նույնականության միջոցներով ապահովված ծառայողական փաստաթղթերը (գրագրությունը),
- հրաժարվել ուղարկող Կողմին կամ կազմավորումների իրամանատարությանը՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց եւ իր քաղաքացիների աշխատունակության կորստի ու մարմնական վնասվածքների, մահվան, ինչպես նաև շարժական ու անշարժ գույքին, բնական պաշարներին, մշակութային եւ պատմական արժեքներին հասցրած վնասի փոխհատուցման հետ կապված որեւէ պահանջ ներկայացնելուց, եթե այդպիսի վնասը հասցվել է կազմավորումների առաջադրանքների կատարման եւ սեփական անվտանգության ապահովման միջոցառումների իրականացման դեպքում,
- հարգել կազմավորումների կազմի մեջ մտնող անձանց իրավական վիճակը, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ ապահովել նրանց քաղաքացիական, սոցիալ-տնտեսական եւ անձնական բոլոր իրավունքներն ու ազատությունները, թույլ չտալ առաջադրված խնդիրների կատարմանը խոչընդոտող գործողություններ, հրամանատարության հետ համաձայնեցված իրենց տարածքի սահմաններում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կազմավորումների կազմի մեջ մտնող անձանց անվտանգության եւ պաշտպանության, ինչպես նաև կազմավորումների սպառագինության, ռազմական տեխնիկայի եւ նյութատեխնիկական միջոցների, փաստաթղթերի եւ պաշտոնական տեղեկատվության ապահովման համար, ներառյալ նրանց նկատմամբ ցանկացած

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

հակաիրավական գործողության մասին նախազգուշացման եւ կանխարգելման ուղղությամբ միջոցառումները,

- Համաձայնագրի մեկնաբանմանը եւ կիրառմանն առնչվող բոլոր տարածայնությունները կարգավորել բանակցությունների ընթացքում, ինչպես նաև Համաձայնագրով նախատեսված՝ վիճելի հարցերի լուծման մյուս ընթացակարգերին համապատասխան:

3. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն Համաձայնագիրը վավերացնելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ըստ Համաձայնագրի 2-րդ հոդվածի՝ «Առաջադրված խնդիրների իրականացման համար Կողմերն ուղարկում են իրենց կազմավորումները ընդունող Կողմի տարածք միայն այն դեպքում, եթե տվյալ գործողությունը չի հակասում իրենց ազգային օրենսդրությանը»:

4. Համաձայնագրի ուժի մեջ մտնելուն պես դրա Կողմերի միջեւ հարաբերություններում դադարում է 2000թ. հոկտեմբերի 11-ի՝ Հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմավորումների կարգավիճակի մասին համաձայնագրի գործողությունը:

Համաձայնագիրը կազմված է միայն մեկ բնօրինակով, ոռուերենով: Համաձայնագրի հայերեն տեքստում տեղ են գտել ոչ ճիշտ թարգմանություններ, մասնավորապես, 8-րդ հոդվածում «ինքնիշխանություն» բառի փոխարեն օգտագործվել է «ինքնավարություն» բառը:

Ելնելով գործի բնույթյան արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. 2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմավորումների կարգավիճակի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**9 հունիսի 2011 թվականի  
ՍՊԸ-968**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ  
ՈՎԱՉՄԱԿԱՆ ԽԸՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՄԵԶ ՆԵՐՊՐՎՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ  
ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՎՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**9 հունիսի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (գեղուցող), Ա. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Բաղդայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության շրջանակներում ուղամական նշանակության արտադրանքի արտադրության մեջ ներգրավված ձեռնարկությունների և կազմակերպությունների մասնագիտացման պահպանական մասին համաձայնագրում ամրագրված պարտավորու-

## **«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թյունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 19.05.2011թ.:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով Համաձայնագիրը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության շրջանակներում ռազմական նշանակության արտադրանքի արտադրության մեջ ներգրավված ձեռնարկությունների եւ կազմակերպությունների մասնագիտացման պահպանման մասին համաձայնագիրն ստորագրվել ց 2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության շրջանակներում ռազմական նշանակության արտադրանքի արտադրության ոլորտում համագործակցության եւ արդյունաբերության պաշտպանական ճյուղերում երկարաժամկետ ինտեգրացիայի զարգացման նպատակով:

2. Համաձայնագիրը բաղկացած է ներածությունից եւ 15 հոդվածներից:

Համաձայնագրով սահմանվում են ռազմական նշանակության արտադրանքի թողարկմանը եւ դրա համար անհրաժեշտ նյութերի ու կիսաֆարբիկատների, համալրող մասերի ու արտադրատեսակների, ուսումնական եւ օժանդակ գույքի մատակարարմանը մասնակցող, ինչպես նաև ռազմական նշանակության աշխատանքներ կատարող ու ծառայությունների մատուցող ձեռնարկությունների եւ կազմակերպությունների մասնագիտացման պահպանման գործընթացի հիմնական սկզբունքները:

Համաձայնագրով նախատեսվում է ձեւավորել ռազմական նշանակության արտադրանքի արտադրությանը ներգրավված ձեռնարկությունների եւ կազմակերպությունների ցանկերը, կանոնակարգել ցանկերում ներառված ռազմական նշանակության արտադրանքն արտադրությունից հանելու կարգն ու ժամկետները, մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի ընդունման ու որակի վերահսկողության, փաստաթղթերի եւ տեղեկատվության օգտագործման, տեղեկատվության փոխանակության, միմյանց փոխանցված կամ Համաձայնագրի շրջանակներում համագործակցության ընթացքում ստեղծված նտավոր գործունեության արդյունքների օգտագործման եւ իրավունքների պաշտպանության հարցերը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը չի ստանձնում փինանսական պարտավորություններ:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին չորրորդ գրավոր ժամուցումն ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

5. Համաձայնագիրը կատարված է մեկ բնօրինակով, ուստերեն: Համաձայնագրի բնօրինակը պահպան է Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության քարտուղարությունում, որը Համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետության կողարկի դրա հաստատված պատճենը:

6. Համաձայնագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 8.2-րդ և 9-րդ հոդվածներին եւ բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից:

Ելնելով գործի բննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ, 64-րդ և 72-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ **Ո Պ Ո Շ Ե Ց .**

1. 2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության շրջանակներում ռազմական նշանակության արտադրանքի արտադրության մեջ ներգրավված ձեռնարկությունների եւ կազմակերպությունների մասնագիտացման պահպանման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

9 հունիսի 2011 թվականի  
**ՍՊ-969**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿԵMBERԻ 10-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ  
ՄՏՈՐՎԳՐՎԱԾ՝ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՎՆՔԻ  
ՄՇԱԿՄԱՆ, ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ, ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ,  
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ  
ԵՐԿԱՐՁԳՄԱՆ ԵՎ ՕԳՏԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱռՈՒՄ  
«ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ  
ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾՎԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
ՀԱՄԱՅՆՎԳՐՈՒՄ ՎՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

9 հունիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

լրմբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ Ռազմական նշանակության արտադրանքի մշակման, արտադրության, շահագործման, վերանորոգման, արդիականացման, շահագործման ժամկետների երկարաձգման եւ օգտահանության բնագավառում «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի անդամ պետությունների համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2011 թվականի մայիսի 19-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Յ**.

1. Ուազմական նշանակության արտադրանքի մշակման, արտադրության, շահագործման, վերանորոգման, արդիականացման, շահագործման ժամկետների երկարաձգման եւ օգտահանության բնագավառում «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի անդամ պետությունների համագործակցության մասին համաձայնագիրն (Համաձայնագիր) ստորագրվել է 2010 թվականի դեկտեմբերի 10-ին՝ Մոսկվայում:

2. Համաձայնագրի նպատակն է Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների (Կողմեր) սպառագինության համակարգերի հետագա կատարելագործումը եւ նրանց զինված ուժերը, այլ զորքերը կամ զորային կազմավորումները սպառագինության եւ ռազմական տեխնիկայի հեռանկարային նմուշներով համալրելը:

Համաձայնագիրը սահմանում է ռազմական նշանակության արտադրանքի մշակման, արտադրության, շահագործման, վերանորոգման, արդիականացման, շահագործման ժամկետների երկարաձգման եւ օգտահանության բնագավառում Կողմերի փոխներգործության ուղղությունները, կարգն ու պայմանները:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

ա) Համաձայնագրի շրջանակներում համագործակցել հետեւյալ ուղղություններով.

- ռազմական նշանակության արտադրանքի մշակում, փորձարկում եւ արտադրություն.

- սպառագինության եւ ռազմական տեխնիկայի շահագործում.

- սպառագինության եւ ռազմական տեխնիկայի շահագործման եւ վերանորոգման մասնագետների ուսուցում.

- սպառագինության եւ ռազմական տեխնիկայի վերանորոգում եւ արդիականացում.

- սպառագինության եւ ռազմական տեխնիկայի շահագործման ժամկետների երկարացում.

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- իրենց ծառայության ժամկետը (ռեսուլտը) սպառած սպառազինության եւ ռազմական տեխնիկայի օգտահանում (լիկվիդացում)։

բ) Համաձայնագրի շրջանակներում ստացված ռազմական նշանակության արտադրանքը չփոխանցել (չվաճառել) երրորդ պետություններին, միջազգային կազմակերպություններին, ինչպես նաև ֆիզիկական եւ իրավաբանական անձանց՝ առանց այդ արտադրանքը մատակարարող Կողմի նախնական գրավոր համաձայնության։

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան տեղեկատվություն փոխանակել Համաձայնագրի իրականացմանը վերաբերող համագործակցության կոնկրետ հարցերով։

դ) Համաձայնագրի շրջանակներում համագործակցության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը չօգտագործել ի վնաս Կողմերից որեւէ մեկի շահերի։

ե) ընդունել, որ ռազմական նշանակության արտադրանքը կարող է պարունակել մտավոր գործունեության արդյունքներ, որոնց նկատմամբ իրավունքները պատկանում են Կողմերին եւ/կամ ռազմատնտեսական համագործակցության մասնակիցներին։ Նշված ռազմական նշանակության արտադրանք ստանալու դեպքում պատասխանատվություն կրել դրա չարտոնված օգտագործման եւ/կամ Կողմերի չլիազորված՝ իրավաբանական ու ֆիզիկական անձանց համար մտավոր գործունեության արդյունքները, այդ թվում՝ մտավոր սեփականություն հանդիսացող, որոնց նկատմամբ իրավունքները պատկանում են Կողմին (Կողմերին) եւ/կամ ռազմատնտեսական համագործակցության մասնակիցներին, մատչելիության համար, եւ 2007 թվականի հոկտեմբերի 6-ի՝ «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության շրջանակներում ստացված մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրի շրջանակներում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ դրանց իրավական պահպանությունը, պաշտպանությունն ու ոչ իրավաչափ օգտագործումը չըույլատրելու նպատակով։

4. Համաձայնագրով սահմանվում են նաև Համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու, Համաձայնագրի մեկնաբանությանը եւ կիրառմանը վերաբերող վեճերը եւ տարածայնությունները լուծելու, Համաձայնագրի ուժի մեջ մտնելու հետ կապված հարաբերությունները։

Ուգրեկատանի Հանրապետությունը Համաձայնագիրն ստորագրել է վերապահումով։

5. Համաձայնագրի եւ գործում առկա մյուս փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին, քանի որ միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին համապատաս-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Խան պետությունների միջեւ ապահովում են բարիդրացիական եւ փոխահավետ համագործակցություն:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ Համաձայնագիրն էապես լրացնում է Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների ուղմատնտեսական եւ ուղմատեխնիկական բնագավառում գոյություն ունեցող պայմանագրահիմնական բազան, անհրաժեշտ իմքեր է ստեղծում Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության, պաշտպանունակության, ազգային անվտանգության ապահովման եւ արդյունաբերական ներուժի օպերատորների առգագման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ Ռազմական նշանակության արտադրանքի մշակման, արտադրության, շահագործման, վերանորոգման, արդիականացման, շահագործման ժամկետների երկարաձգման եւ օգտահանության բնագավառում «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի անդամ պետությունների համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

9 Խունիսի 2011 թվականի  
ՍՊԸ-970



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿԵMBERԻ 10-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ  
ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՐԳԻ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ԿԱԶՄԱԿՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ  
ՀԱՄԱՅՆՎԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ Հ  
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԱՐՅԵԼ ՎՐՅԵԼ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԾ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**9 հունիսի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի (գեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների կազմավորման և գործունեության կարգի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ սահմանադրական դատարան 2011 թվականի մայիսի 19-ին մուտքագրված դիմումը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով Համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմավորման եւ գործունեության կարգի մասին համաձայնագիրը (այսուհետ՝ «Համաձայնագիր») Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 2010 թվականի դեկտեմբերի 10-ին:

2. Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո կդադարի 2001 թվականի մայիսի 25-ին ստորագրված՝ «1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմավորման եւ գործառության կարգի մասին» արձանագրության գործողությունը (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2002 թվականի ապրիլի 3-ին՝ Ազգային ժողովի Ն-272-2 որոշմամբ):

3. Համաձայնագրի նպատակն է՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների (այսուհետ՝ «ՀԱՊԿ») հավաքական անվտանգության համակարգի անհրաժեշտ ուժերի եւ միջոցների կազմավորման եւ կատարելագործման միջոցով ՀԱՊԿ մասնակից պետությունների նկատմամբ զինված հարձակմանը (ազրեսիային) եւ այլ նարտահրավերներին ու սպառնալիքներին (միջազգային ահաբեկչություն, անդրազգային հանցավորություն, արտակարգ իրավիճակներ) համարժեք արձագանքման ապահովումը:

4. Համաձայնագրով ՀԱՊԿ հավաքական անվտանգության համակարգի կազմավորման եւ գործառնության հիմնական սկզբունքներն են համարվում՝ հավաքական անվտանգության համակարգի պաշտպանական բնույթը, բոլոր Կողմերի համար հավաքական անվտանգության եւ անվտանգության հավասար մակարդակի անբաժանելիությունը, Կողմերի հավասար պատասխանատվությունը հավաքական անվտանգության ապահովման համար, ինքնապաշտպանության հավաքականությունը, որը նախատեսում է Կողմերի մասնակցությունը կուլիցիոն եւ/կամ տարածաշրջանային հիմքի վրա զինված հարձակման (ազրեսիայի) խափանմանը, տարածքային ամբողջականության պահպանումը, հարգանքն ինքնիշխանության եւ ազգային շահերի նկատմամբ, միմյանց ներքին գործերին չմիջամտելը, Կողմերի միջև վեճերի լուծման համար հավաքական անվտանգության համակարգի ուժերն ու միջոցներն օգտագործելու ան-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

քույլատրելիությունը, կուալիցիոն եւ տարածաշրջանային հիմքի վրա հավաքական անվտանգության համակարգի կազմավորումը եւ գարգացումը:

5. Համաձայնագրով ՀԱՊԿ հավաքական անվտանգության համակարգի ուժերը եւ միջոցները նախատեսված են մասնակցելու՝ ՀԱՊԿ մեկ կամ մի քանի մասնակից պետությունների նկատմամբ սպառնալիքի կանխմանը եւ զինված հարձակման (ազրեսիայի) խափանմանը, զինված գործողությունների եւ ընդհարումների տեղայնացմանը, Համաձայնագրի մասնակից պետությունների անվտանգության դեմ մարտահրավերների եւ սպառնալիքների հակազդման միջոցառումներին՝ ներառյալ միջազգային ահարեւէչության, թմրանյութերի, գենքի ու զինամթերքի անօրինական շրջանառության, անդրազգային կազմակերպված հանցագործության այլ տեսակների դեմ պայքարին, ուազմական գործողությունների անցկացման դեպքում բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների կատարմանը, արտակարգ իրավիճակների չեղոքացմանը եւ մարդասիրական օգնության ցուցաբերմանը, նրանց պետական սահմանների, պետական եւ ուազմական օբյեկտների պաշտպանության ուժեղացմանը, խաղաղապահ գործողություններին եւ ՀԱՊԿ հավաքական անվտանգության խորհրդի սահմանած այլ խնդիրներ լուծելու համար:

6. ՀԱՊԿ հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմի մեջ են մտնում՝ կառավարման ազգային մարմիններին ենթակա եւ ՀԱՊԿ մարմինների որոշումով օգտագործվող՝ Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային զինված ուժերի եւ այլ գորքերի միավորումներ, կազմավորումներ, գորամասեր եւ ստորաբաժանումներ, գորքերի (ուժերի) կուալիցիոն խմբավորումներ, զորքերի (ուժերի) տարածաշրջանային (միավորված) խմբավորումներ, միավորված (համատեղ) զինվորական համակարգերի խմբավորումներ, հավաքական խաղաղապահ ուժեր: Իսկ Ռուսաստանի Դաշնության միջուկային ուազմավարական ուժերը կատարելու են ՀԱՊԿ մեկ կամ մի քանի մասնակից պետությունների նկատմամբ զինված հարձակում (ազրեսիա), այլ մարտահրավերներ ու սպառնալիքներ եւ ձեռնարկում համապատասխան համարժեք միջոցներ՝ օգտագործելով Հայաստանի Հանրապետության տրամադրության տակ գտնվող բոլոր ուժերն ու միջոցները,

- ՀԱՊԿ մեկ կամ մի քանի մասնակից պետությունների նկատմամբ զինված հարձակումը (ազրեսիան) եւ այլ մարտահրավերներն ու սպառնալիքները դիտում է որպես Հայաստանի Հանրապետության նկատմամբ զինված հարձակում (ազրեսիա), այլ մարտահրավերներ ու սպառնալիքներ եւ ձեռնարկում համապատասխան համարժեք միջոցներ՝ օգտագործելով Հայաստանի Հանրապետության տրամադրության տակ գտնվող բոլոր ուժերն ու միջոցները,

- Հայաստանի Հանրապետությունը բոլոր պետությունների եւ պետու-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թյունների միությունների հետ իր հարաբերությունները կառուցում է միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքների եւ նորմերի հիման վրա, աջակցում է ուղամական բնագավառում վատահության միջոցների ընդլայնմանը, հետեւողական քաղաքականություն է վարում՝ ուղղված պատերազմների եւ զինված ընդհարումների կանխմանը,

- տարածաշրջանային եւ գլոբալ մակարդակներով հավաքական անվտանգության ապահովման շրջանակներում ուղամական սպառնալիքների կանխման, տեղայնացման եւ չեղորացման համար նախապատվություն է տալիս քաղաքական-դիվանագիտական եւ ոչ թե ուղամական միջոցներին, ինչպես նաև մասնակցում հավաքական անվտանգության համակարգի ուժերի ու միջոցների կազմավորմանը,

- խաղաղապահ գործողություններին մասնակցելու համար ՀԱՊԿ մասնակից պետությունների հետ ստեղծում է ՀԱՊԿ հավաքական խաղաղապահ ուժեր, որոնց գործառությունը կանոնակարգվում է համապատասխան համաձայնագրով,

- ՀԱՊԿ մասնակից պետությունները՝ որպես գորքերի (ուժերի) տարածաշրջանային խմբավորումներ դիտում են՝ ա) հավաքական անվտանգության արեւելանվորապական տարածաշրջանի գորքերի տարածաշրջանային խմբավորումը, որը կազմավորվելու է Բելառուսի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միութենական պետությունների շրջանակներում, բ) հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանի գորքերի (ուժերի) խմբավորումը, որը կազմավորվելու է Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ երկկողմ համաձայնագրերի հիման վրա եւ դ) ՀԱՊԿ մասնակից պետությունների հետ համատեղ օգտագործման համար միավորված (համատեղ) զինվորական համակարգերի խմբավորումները, որոնք կազմավորվելու են գործառնական նշանակությամբ միատարր (հակաօդային պաշտպանության, հետախուզության, կապի, ուժերի (միջոցների) ավտոմատացված կառավարման, հրթիռային հարձակման մասին նախազգուշացման, քիմիական, ճառագայթային եւ կենսաբանական իրավիճակի, տիեզերական տարածության վերահսկման եւ այլն) ազգային ուժերի եւ միջոցների մասերի միավորման ճանապարհով,

- որպես Հավաքական անվտանգության համապատասխան տարածաշրջանի մեջ մտնող պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը սահմանում է գորքերի (ուժերի) տարածաշրջանային (միավորված) խմբավորման եւ միավորված (համատեղ) զինվորական համակարգերի կազմը, ինչպես նաև այդ կազմում առանձնացված միավորումների, կազմավորումների եւ զինված ընդհարումների անվանացանկը,

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- ինքնուրույն իրականացնում է Հայաստանի Հանրապետության զինվորական համակազմերի եւ հատուկ նշանակության ուժերի կազմավորումների տեխնիկական ու թիկունքային ապահովումը, ստեղծում է նյութական միջոցների պաշարներ, սահմանված կարգին համապատասխան համալրում է դրանք մինչեւ համաձայնեցված նորմերը:

8. Ըստ Համաձայնագրի՝ Հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմի, ծավալման եւ կիրառման ժամկետների մասին որոշումն ընդունում է ՀԱՊԿ հավաքական անվտանգության խորհուրդը՝ ՀԱՊԿ մեկ կամ մի քանի մասնակից պետությունների դիմումի հիման վրա:

9. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին, կոչված են, միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, իրականացնելու բարիդրացիական եւ փոխշահավետ հարաբերություններ:

10. Համաձայնագրի դրույթների համակարգային վերլուծությունից հետեւում է, որ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները, համաձայն ՀՀ Սահմանադրության 8.2-րդ հոդվածի, կոչված են ստեղծելու Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը, տարածքային ամբողջականությունը եւ նրա սահմանների անձեռնմխելիությունը ապահովող լրացուցիչ երաշխիքներ:

Ենթելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմավորման եւ գործունեության կարգի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### **ՆԱԽԱԳԱՀԾՈՂ**

### **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**9 հունիսի 2011 թվականի  
ՍԴՌ-971**

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ



### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

#### ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

**Նոյեմբերի 18-ին** ՍԴ նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի կողմից դպրոցականների շրջանում անցկացվող «Ինտելեկտուալ խաղ» մրցույթի մասնակից տարբեր դպրոցներից մի խումբ սաների:

Զանի որ մրցույթի մասնակից դպրոցականները «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում ուսումնասիրում են նաև «Մարդու իրավունքներ» թեման, ուստի ցանկություն էին հայտնել հանդիպել ՍԴ նախագահի հետ, իրենց հուզող հարցերի շուրջ գրուցել նրա հետ:

Պարոն Հարությունյանը սաներին ծանոթացրեց աշխարհում սահմանադրական դատարանների ստեղծման պատմությանը, ՀՀ ՍԴ կառուցվածքին ու գործունեությանը, հանգամանալից ներկայացրեց Սահմանադրության գերակայության ապահովման գործում ՍԴ-ների դերն ու նշանակությունը:

Հանդիպումը, որ ավարտվեց հարց ու պատասխաններով, մարդու իրավունքների պաշտպանությանը, երկրում սահմանադրականության հաստատմանը, իրավունքի գերակայությանը վերաբերող մի յուրօրինակ դասեր դպրոցականների համար:

ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ՈՒՄ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԻՆ

**Նոյեմբերի 25-ին ՀՀ ՍԴ նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ջոն Հեֆերնին:**

Ողջունելով իյուրիին, պարն Հարությունյանը շնորհավորեց նշանակման առիթով, ծանոթացրեց նրան ՀՀ սահմանադրական դատարանի գործունեությանը:

Դեսպանն իր հերթին շնորհակալություն հայտնեց ընդունելության կապակցությամբ, առանձնահատուկ կարեւորեց ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա սահմանադրական դատարանի վերջերս ընդունած որոշման կարեւոր դերը երկրում խոսքի եւ արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանության հարցում:

Զրույցի ընթացքում քննարկվեցին իրավունքի գերակայության երաշխավորման, հասարակական հարաբերությունների սահմանադրականացման արդի խնդիրները: Երկուստեք կարեւորեցին անհատական դիմումների հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի ընդունած որոշումների դերը երկրում սահմանադրափակական գարգացումների գործում:

Հանդիպմանը մասնակցում էին ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի մշտական իրավական խորհրդատու Սքիլթս Քեսլերը եւ դեսպանատան իրավական հարցերով խորհրդատու Դավիթ Խաչատրյանը:



ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
1000-ՐԴ ՈՐՈՇՈՒՄԸ

**Նոյեմբերի 29-ին** ՀՀ սահմանադրական դատարանի հերթական որոշումը հորելյանական էր՝ հազարերորդը: Խորհրդանշական էր, որ հազարերորդ որոշումը կայացվեց վերաքննիչ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ «Բրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի և 3-րդ մասի երրորդ պարբերության՝ ՀՀ Սահմանադրությանը հաճապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով (որոշման տեքստը տեղադրվել է ՍԴ վեր կայքում):



Նիստից հետո, հորելյանական իրադարձության առիթով, Սահմանադրական դատարանը կոլեկտիվի եւ հյուրերի համար ընդունելություն կազմակերպեց, որին մասնակցում էին ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ Ա. Ակրտումյանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կ. Անդրեասյանը, ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գ. Մուրայյանը, ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Ռ. Սահակյանը, ՀՀ իրավաբանների միության նախագահ Գ. Ղազինյանը, ՍԴ անդամներ, փաստաբաններ, իրավագետներ:

Ներկաներին ողջունեց եւ հակիրճ խոսքով հանդես եկավ ՀՀ ՍԴ նախագահ Գ. Ղարությունյանը:

Այն, որ այս հազարերորդ որոշումը կայացվեց ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դիմումի հիման վրա, դատական համակարգում գործառնական փոխհարաբերությունների շատ հետաքրքիր ու նոր խորհրդանշի դարձավ, կարեւորվեց որոշման եւ կշիռ, եւ հնչեղությունը, եւ նշանակությունը:

Պարոն Հարությունյանը Սահմանադրական դատարանի անցած ճանապարհը բաժանեց երկու փուլի՝ մինչեւ 2006 թվականը և 2006-ից հետո: Մինչեւ 2006-ը օրենքի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարանի կողմից քննության առնված գործերը կազմել են 1,3%, 2006-ից մինչ այսօր՝ շուրջ 49%: Ըստ որում, 51 գործերով 55 օրենքների ավելի քան 90 դրույթ ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Միայն քրեական դատավարության օրենսգրքի հետ կապված 35 գործ է քննության առնված, իսկ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հետ կապված՝ 33 գործ: ՀՀ Ազգային ժողովում, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների հիման վրա, շուրջ 50 օրենսդրական փոփոխություն ու լրացում է կատարվել: Սա նշանակում է, որ Սահմանադրական դատարանը լուրջ եւ ծանրակշիռ դերակատարություն ունի օրենսդրական դաշտի սահմանադրականացման ու սահմանադրական իրավահարաբերությունների զարգացման գործում:



Վերջում ՍԴ նախագահը շնորհավորեց գործընկերներին և հյուրերին, շնորհակալություն հայտնեց արդյունավետ համագործակցության համար:

**ՍԴ մամուլի ժառայություն**

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կողեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝  
Երևան Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 58-81-71  
E-mail: armlaw@concourt.am.  
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 01.12.2011 թ.  
Դասիչ՝ 77754  
Գրաշափը՝ 70x100 1/16  
Տպաքանակը՝ 500

«ՀՀ ՍԴ պեղեկագիրը ՀՀ  
քարձրագույն որակավորման  
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է  
ադրբեյջանական արդյունաբերության  
տպագրման համար ընդունելի  
պարբերականությունը»

---

Вестник Конституционного Суда Республики Армения N 5(62) 2011  
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 5(62) 2011  
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Armenie. N 5(62) 2011